Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LGN
821

1999

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

ՎԵԶՈՒՎԵԱՆ

ՅՐԱԲՈՒՂԽ ՍԱՐԻ ՎԵՐԱՅ

այլ և

Ի Պոմպէյի, Հերքուլանում, Հռոմ,

Վենետիկ և այլ քաղաքներ Իտալիայի,

Ի 1865 և 1866 ամի։

Վ. Յ. ԽՕՋԱՅԵԱՆՑԻ։

ՏՓԽԻՍ

1872

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԱՅ ԷՆՑԻԱՃԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.



ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

ՎԵԶՈՒՎԵԱՆ

ՅՐԱԲՈՒՂԽ ՍԱՐԻ ՎԵՐԱՅ

այլ և

Ի Պոմպէյի, Հերքուլանում, Հռոմ,

Վենետիկ և այլ քաղաքներ Իտալիայի,

Ի 1865 և 1866 ամի։

Վ. Յ. ԽՕՋԱՅԵԱՆՑԻ։

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԱ- ԲԱՆ.ՍԵՐ
Ա ՍՅՈՒՆԻԿՅԱՆ

ՏՓԽԻՍ

1872

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՐՋՈՒՄԱՅ ԷՆՖԻԱՃԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ

1336

Дозволено цензурою. 2-го Октября 1871 года. Тифлисъ.

Գ 821-60

ՀՖ 824

ՅԱՌԱՋԱԲԱՆ։

Զկնի ճանապարհորդութեան իմոյ Իտալիայում, ուր զննեցի Վենետիկ, Ֆլորենտիա, Պոմպէի, Հերքուլանում, Հռոմ, Վենետիկ և այլ քաղաքները Իտալիոյ, ինձ ցանկալի էր հրատարակել այս արժանայիշատակութիւնքը տպագրութեամբ 'ի գիտութիւն իմ հայրենակցաց, որոց համար, որպէս ես կարծում եմ, կ'լինի շատ հարցասիրական, ծանօթանալու հնութեանց և փառահեղութեանց հետ հին Հռոմի թագաւորութեան և Իտալիայի այժմեան դրութեան, նա մանաւանդ այն պատճառով, որ այսպիսի պատմական նկարագրութիւնք, և առաւելապէս Վենետիկի, Պոմպէյի և Հերքուլանումի՝ չկայ հայ լեզուաւ։ Վասն ճիշդ և անսխալ շարադասելոյ իմ տեսած առարկաները՝ ես ունէի, որպէս ձեռնարկ, ելևելի ճանապարհորդների և մատենագրերի երկասիրութիւնքը, զոր օրինակ,—նկարագրութեան համար Վենետիկի, Պոմպէի և Հերքուլանումի՝ գիրքը պ. Վ. Կլասօվսկու, տպագրեալ Պետերբուրգումը 'ի 1856 ամի. իսկ վասն միւս քաղաքների Իտալիայի գիրքը անուանեալ Ընդհանուր աշխար-

հագրութիւն, հեղինակութիւն Օլխինի և Ռուսովի, հատոր 2-դ, տպագրեալ 1866 թուականին Պետերբուրգում, որոնցից քաղել եմ ես մեծ մասը պատմութեան, իսկ միւս յաւելուածները քաղել եմ ճանապարհորդութենից Ն. Ս. Վսէվոլոժսկու, հատ. 2-դ, տպագրեալ Մոսկվայում 1839 թուակ., — այլ և շարադրութենից Հարտվիգի, մակագրութեամբ ,,Հրաշք ստորերկրեայ աշխարհի'', տպագրեալ Պետերբուրգում 1863 թուականին և Կատակոմբի, կամ Վէպ առաջին ժամանակի քրիստոնէութեան գրքից. աշխատասիրութիւն Անգլիացի Նուգենիայի Տուր, տպագրեալ Մոսկվայում 1869 ամի: Այս շարադրութեան պատրաստելոյ ժամանակը ինձ շատ օգնական եղաւ յայտնի ամենեցուն գիտնական Պրոֆէսսոր Ստեփանոս Նազարեանցը, որ ո՛չ միայն յանձն առաւ թարգմանել մեծ մասը իմ գրածիս Ռուսերէնից 'ի Հայ աշխարհաբառ լեզու, այլ և լցոյց մի քանի հարկաւոր ծանօթութիւններով: Առ 'ի տալ այս գրքին առաւել հարցասիրութիւն, ես զարդարեցի սորան մի պատկերով Վեղուվեան հրաբուղխ սարի: Գիրքս այս հրատարակվումէ տպագրութեամբ երկու բարի նպատակներով. առաջինը որ ծանօթացնէ Հայե-

րին հին Հռոմայեցւոց կեանքի հետ, նա մանաւանդ Պոմպէյի և Հերքուլանումի, և երկրորդ՝ որ նորա վաճառմանից գոյացած գումարը, բացի ծախսից, 'ի գործ դրուի յօժանդակութիւն ուսման Թիֆլիզի երկու Գայիանեան և Մարիամեան Հայ օրիորդաց դպրոցների:

Այս նպատակով հրատարակելով մեր այս երկասիրութիւնը, կ'յուսանք, որ սիրալիր ընդունելութիւն կ'ցոյց տան նորան ընթերցողները, և ներողամտութեամբ կ'նայեն նորան, աչքի առաջ ունենալով մեր նպատակը:

Վասիլիյ Խոջայեանց

ԻՏԱԼԻԱ

Վեզուվեան հրաբուղխ սարը:

Պարզալով պատմութիւնը Հռոմի, որոյ դաղթաշէնքում (կոլօնիում) պատահած է այն տխուր և ողբալի անցքը, այսինքն կործանումը Վեզուվի հրաբուղխ սարի զօրութեամբ Պոմպէյի և Հերկուլանում քաղաքների, որք համարեա տասն և եօթը դար լաւայի և մոխրակոյտի տակ թաղած մնալով, վերստին գտուած են,—ինձ շատ ու շատ ցանկալի էր անձամբ անձին տեսանել այդ վատաբաղա քաղաքները: Վերջապէս հասաւ ժամանակը, երբ կարող էի ես լցուցանել իմ վաղուց ունեցած փափաքը: Ես չկորուսանելով ժամանակ, 1865 թուականին ստացայ անցագիր (պասպորտ) դէպ ի օտար աշխարհ և Թիֆլիզից ճանապարհ ընկայ իմ կնոջ հետ միասին: Պետերբուրգի վերայով անցանելով Ռուսաստանի սահմանից դէպի օտար աշխարհ և ճանապարհորդելով Աւստրիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Շվէյցարիայում և Իտալիայում, վերջապէս յաջողութեամբ հասանք մեք 1866 թուականին ցունվարի 13-ին Հռոմ: Ես կամենում չեմ նկարագրել իմ տեսած ուշադրութեան արժանի բաները վերոյիշեալ թագաւորութիւնների մէջ, որովհետև դրքա մեր պատմութեան շրջանից դուրս են. այլ իմ միակ նպատակն այն է, որ իմ

ընթերցողներին առանձին այն տպաւորութիւնքը, որ ստած են իմ վերայ ըստ և անբարբառ քաղաքները Պոմպէյի և Հերքուլանում և նոցա պատուհասող ահաւոր Վեզուվ հրաբուղխ սարը, որոյ նկարագրութիւնը, ինչպէս կարծում եմ, շատ կդրաւէ ուշադրութիւնը ամենեցուն, որոց բաղդը բերած չէր ուղևորութեամբ տեսանել այս աշխարհը Իտալիայի։ Այս տեղերի հետ միասին կ'նկարագրեմ համառօտապէս Նէապոլիսը, Հռոմ, Վենետիկ և միւս ուշադրութեան արժանի քաղաքները Իտալիայի։ Մի շաբաթ մնալով Հռոմ — մշանջենաւոր քաղաքում և ականատես լինելով հռչակաւոր Հռոմէական կարնավալին (բարեկենդանին), որ առանձին փառահեղութեամբ տօնախմբվում էր կօրսօ ասած փողոցում, և հարեւանցի քննելով քաղաքը և նորա մէջ եղած երևելի եկեղեցիքը, (որովհետև մեք դիտաւորութիւն ունէինք վերադառնալ այս տեղ զատկի տօնին, առաւել մանրամասնապէս քննելու այդ քաղաքը), մեք շտապեցինք դէպի մեր ճանապարհորդութեան նպատակը, դէպի Նէապոլիս քաղաքը։ Մօտենալով Նէապոլիսին, մեր առաջին ուշադրութիւնը ուղղեցինք Վեզուվ սարի վերայ, որոյ կատարից (ծայրից) բարձրանում էր ծուխը և չքանում էր օդի մէջ։ Մեք վարձեցինք օթեան Նէապոլիսում բոլորովին հանդէպ այդ սարին Միջերկրական ծովի Նէապոլիտանական ծոցի եղրումը, և երկու օր հանդստացած պատրաստուեցանք ճանապարհ ընկնել դէպի այդ սարը։ Բայց յառաջ քան թէ կ'նկարագրեմ մեր ճանապարհորդութիւնը դէպի Վեզուվ սարը, նոյնպէս դէպի Պոմպէյի և Հերքուլանում քաղաքները, ինձ ցանկալի էր տալ ընթերցողներին այս սարի և այս անբաղդացած քաղաքների համառօտ պատմական նկարագրութիւնը, որ հիմնած է երևելի մատենագիրների վկայութեան և մանաւանդ պարոն Կլաուվկու շտապագրութեան վերայ։

Պոմպէյի և Հերքուլանում հին ժամանակներից ծովային

վաճառականութեամբ ծաղկած, բայց իւրեանց ժողովրդով և քաղաքական կշռով երկրորդակարգ, գտանվում էին Իտալիայի ամենապատուական մասում կամպանիայի մէջ, որ հնումը ասվում էր Լէյ։ Պատմագրների վկայութեանով, Կամպանիայի առաւել հին բնակիչքը էին Օսկեանք կամ Օպիկեանք, որ չկարողանալով պաշտպանել իւրեանց ինքնիշխան ազատութիւնը Փիւնիկեցոց երեսից, այս ձեռնարկու վաճառականքը և գաղթականների հիմնարկողքը 14 դար Քրիստոսից յառաջ տիրապետեցին Հեսպերիայի ծովահայեաց մասին, հիմնեցին այն տեղ, բայի միւս շինքերից, մի հրաբուղխ բլրի վրայ, Սարնոյի գետաբերանի մօտ մի քաղաք, անուն տալով նորան Պոմպէյի։ Հինգերորդ դարի կիսումը Քրիստոսից յառաջ, Կամպանիայի մեծ մասը անցաւ Սամնիտացոց իշխանութեան տակ և 80 տարի կամակորութեամբ պատերազմից յետոյ, որ այդ պատերազմական ազգը ունէր Հռոմայեցոց հետ, դարձաւ սոցա ժառանգութիւն։ Պոմպէյի քաղաքը երկարամեայ բարեվիճակութենից և ծաղկելուց յետոյ աւերուեցաւ մի սաստիկ դեսանաշարժութենից 63 թուականին Քրիստոսից յետոյ։

Խօսելով հին Պոմպէյի կործանման վրայ, անպատճառ հարկաւոր է սկսանել պատմութիւնը Վեզուվի նկարագրութեամբ, առանց սորա կարելի չէր լիովին վերահասու լինել այս անցքին, ինչպէս որևիցէ ներգործութեան, առանց ցոյց տալու նորա պատճառը։

Վեզուվը շատ և անչիշատակ ժամանակներից մահ սպառնալով իւր առաւել մերձակայ բնակիչներին և աւերածք այս սարի տակ տեղերում, այս հրաբուղխը բարձրութեամբ աւելի ցած է քան թէ Էտնա, Տէնէրիֆի սրածայրը և միւս մեծամեծ սարերը երկրագունդի։ Բայց չկայ ոչ մի հրաբուղխ սար առաւել նշանաւոր իւր սաստիկ արտահոսութեամբք, և բնակիչների ուշադրութեան առաւել արժանի իւր հանքային բաղ-

մոլինակ բերքով։ Նորա բարձրութիւնը ծովի մակերևութի վերայ, ըստ չափման Ֆոմբոլդի, չէ աւելի 607 տասղեց (554½ սաժենից)։ Նա կանգնած է իւր դրացի Ալպենեան սարերի գօտուց առանձնացած և ունի իւր շրջապատումն 52 վերստ։

Սարի գլխին և մօտ դէպի վայր, նա մանաւանդ մերձ հրաբուղխի, պատահումեն անդադար փոփոխութիւնք։ Երբեմն մին օրուան մէջ հաւասարվումեն և ոչնչանումեն բլուրները և նոցա տեղում բացվումեն փլատակներ և ճեղքուածք, ուր միշտ երևումէ կրակ կամ յանկարծ ամբողջ քարայրեր լցվումեն ներսից դուրս ճնշած վուլկանական հողով և հաւասարվում են այրուած ու ածուխ դարձած տափարակ հողաբլրի հետ, որ գօտևորումէ հրաբուղխ սարի բերանը։ Մի խօսքով այս տեղ գետինը նոյնչափ անկայուն է, որչափ ծովի ալիքները։ Նրա վրայ բարձրանումեն և հանդարտումեն մրրիկներ։ Բորբոքումը վեղուվի խորքում լինումէ ամենահին ժամանակներից։ Նա երբեմն այնպէս սաստկանումէ, որ յառաջացնումէ հրեղէն արտահոսութիւնք, որոց յառաջընթաց է երկրաշարժութիւն, իսկ երբեմն հանդարտումէ տասնաւոր և հարիւրաւոր տարիներով։ բայց այս արտաքին խաղաղութիւնը խաբէական է։ Նկատուած է, որ մեծամեծ արտահոսութիւններից յառաջ ծովային ալիքը շատ հեռանումեն ծովեզրից, իսկ քաղցր ջուրը ցամաքումէ շրջակայ աղբիւրներում և ջրհորներում։ Հրաբղխական նիւթերը բաժանվումեն լաւա և մոխիր։ Առաջինը դուրս է թափվում վեղուվի բարձրութենից, վերին տափարակ հողաբլրի զանազան տեղերից, մանաւանդ գլխաւոր հրաբղխական բերանից։ Այս հեղանիւթը մեթ հրեղէն գոյն ունի, նման է կարմրացած երկաթի կղկղանքի։ Արտահոսութեան միջոցին լաւայի քանակութիւնը մեծանումէ. այնուհետև նա հեղեղներով հասանումէ սարի ոտքին, այլև մինչև ծովը, ուր շռդաչիւնով և ճայթիւնով պաղելով սառչումէ, կաղմակերպելով բլրային շերտեր։ Պաղելու միջոցին նա պնդանումէ ծանրութեամբ և յեղափոխվումէ կամ դէպի ծակծակ նիւթ կամ դէպի կարծր քար, որ յարմարաւոր է տաշելու։ Լաւայի հոսանքը փառահեղ է և ծանրընթաց, վասնորոյ միշտ կարող են փախչել նորանից թէ մարդ և թէ անասուն։ Նա իւր ճանապարհի վերայ հանդիպելով որ և իցէ արգելքի, դադարումէ առժամանակ և երբ շատանումէ այս նիւթը, այն ժամանակ ուռչելով պատումէ իւր շրջակայքը և անցնումէ այն առարկաների վրայ, որք նորան արգելք էին տուել, ածուխ դարձնելով բոլորը, որ ինչ ճանապարհի վրայ պատահել էր նորան. ապա դարձեալ հոսումէ առաջին ծանրութեամբ դէպի վայր։ Եթէ նորան արգելք էին որպիսի և իցէ սպնդային հանքաբերք, դոքա այնուհետև ճայթունով փշուր փշուր էին լինում, երբ պատումէ նոցա լաւան, իսկ ծառերը նորանից բորբոքվումեն կամ թէ բոլորովին չորանում։ Պնդացած լաւան յեղափոխվումէ կանաչագոյն դարչինեան գունով քար, երբեմն գեղեցկանկար կէտերով մակերևութի վերայ։ Զտաշած լաւան գործ է ածվում փողոցների սալայատակելու (մօստօվոյի) համար, իսկ տաշելով շինումեն Նէապօլսումը և նորա շրջակայքումը զանազան գեղեցիկ սեղաններ, բաժակներ, թանաքամաններ, կնիքներ, այլ և մատանիք և ականջի օղեր։ Այս լաւայի զօրութեամբ աւերուեցաւ Հերքուլանումը։

Բրբղխական մոխիրը լինելով շատ բազմօրինակ ըստ իւր քիմիական բաղադրութեան, թէպէտ միատեսակ է միշտ, հողմի միջոցութեամբ տարվումէ դէպի անչափելի հեռաւոր տեղեր արտահոսութեան կենտրոնից. զոր օրինակ, արժանահաւատ մատենագիրների վկայութեամբ, նա 79 թուականին Քրիստոսից յետոյ տարուած է Վեղուվից դէպի Եգիպտոս և Ասիական, իսկ 472, 1139 և 1631 թուականներում դէպի Կաբրիա, Սարդինիա և Կոստանդնուպօլիս։ Այս կրակած մոխիրը

խառնած ջրի հետ թանձրանալով պատումէ ամբողջ դաշտեր և պարարտացնումէ նոցա, իսկ նօսր և ջրայինը հեղեղումէ փողոցները և հրապարակները, բարձրանալով մինչև ի տների կուրները, մտանումէ նոցա ներս տեղերը պատուհաններից, դռներից և այլ ճեղքուածներից։ Յետոյ երբ որ ջրային մասը նորանից շոգիացած էր, փողոցները և տները մնումեն լցուած կարծրացած նիւթով։ Սոյն այս բանը պատահած է Պոմպէյի քաղաքում 79 թուականին Քրիստոսից յետոյ։

Վեզուվեան սարի հրաբուղխ բերանից դուրս ճգած ծխի սիւների բարձրութիւնը զարմանալի է։ Եթէ արժան էր հաւատ ընծայել պատմութիւններին, 1631 թուականին մի այդպիսի ծխասիւն բարձրացած է մինչև 1000 տօազ (տօազը ունի 2¾ արշին), ունելով մի տրամագիծ 20 տօազ լայնութեամբ։ Բայց ի դորանից, Վեզուվը, միւս հրաբուղխ սարերի մեծագոյն մասնի պէս, արձակումէ իւր միջից մի և նոյն միջոցին բոց, մխիր, ծուխ և ծանր ու մեծ քարեր, որ ճայթիւնների զօրութեամբ ցրվումեն դէպի հեռաւոր տեղեր։ Այս բանի մէջ արժանի է զարմանալու, որ զանազան տեսակ նիւթերի բաղմութենից, որ զանազան ժամանակներում այս ու այն կողմ դուրս էին ճգուած Նէապոլիտանի հրաբուղխ սարի խորքից, որ հաստ ծածկուած են շրջակայքը, կարելի էր ճիշտ հաշուելով կազմել մի սար գոնեա չորեքպատիկ առաւել բարձր քան թէ Վեզուվը։ Ո՞ր տեղից է առնում նա այս նիւթերը և ո՞րպիսի պիտի լինէր այն դատարկութիւնը, որ նա փորելով դոյացուցել էր գետնի մէջ։

Վեզուվ սարի առաջին հրաբղխութիւնքը, ինչպէս ջանացել է ապացուցանել Խտալական երկրաբան Պելիչեան, պատահած են արդէն երկար ժամանակ տրոյական պատերազմից յառաջ։ Դոցանից պիտոյ է որոշել մինը առաւել յետոյ պատահածներից, որ հարիւր տարի յառաջ քան գշխնութիւնը

Հռոմի, դուրս քարշեց ծովի խորքից մի մասը այն հաստատուն հողի, որոյ վերայ այժմ գտանվումեն Նօլա և Նօչերա։

Օ՜ինի այս յեղափոխութեանս, որ դէպի չէք դարձուց մի ամբողջ ծովածոց, Վեզուվ սարը իրրև թէ իւր քաջագործութեան դժուարութենից թուլացած, հանդարտեց և շինաւ ամբողջ դարերով։ Բարելից հարաւային բնութիւնը, որ հարիւրաւոր չափով հատուցանումէ մարդուս ամենափոքրիկ աշխատութեանը, չ՝յապաղեց ողկուզաբեր այգիների և նռենիքի կանաչութեամբ զարդարել ոչ թէ սարի ստորոտքը և գառիվայրքը, այլ և կատարը, որտեղից յառաջ թափվումէր լաւան իրրև մի ամենակործան գետ, և դժուար էր հասկանալ նայողին այս ծաղկազարդ անխռով երկրի վերայ, թէ ի՞նչու բոլոր աւանդութիւնքը, որ պատկանումէին դորան, ունին մի խիստ և մութ կերպարանք։

Մինչ այս, մինչ այն, մոռնումէր Վեզուվ սարի զարթնելը քնից. դորան նախընթաց էին ֆիզիկական յայտնութիւնք, որոց անսովոր տեսիլը ակնարկումէր թէ մոտակաչքումը կար մի ներդործող հրաբուղխ սար։ Զորօրինակ Պլինիոսը, բաց ի միւս բաներից, պատմումէ 'ի մասին մահուան պոմպէյական տասնապետի, Մարկոս Հերեննիոսի, որ կայծակից զարկուած էր մի պարզ եղանակի միջոցում։ Մեք խօսում չենք այն շատ անգամ պատահած դեռնաշարժութիւնների վերայ, որոց ամենասաստիկը պատահած է 63 թուականին Քրիստոսից յետոյ։

Դորանից յետոյ անցաւ 16 տարի, և ահա Պոմպէյացիք, որ իւրեանց կիսաւեր քաղաքից ցանուցիր փախած էին դէպի շրջակայ սահմանները, առ փոքր փոքր սկսան հաւաքուիլ իւրեանց հայրենական մոխրապատ աւերակների մէջ. նոցա դիմացկոտ աշխատասիրութիւնը, այն նշանաւոր նիւթական կարողութիւնը, որ սեփական է վաճառական ծովագնացների, շատ շուտով ջնջեցին փոքր ինչ յառաջ նոցա հասած թշուառութեան

հեռքը. քաղաքը վերսին ծնանելով, զարդարուեցաւ նոր փայլողութեամբ և փառահեղութեամբ։ Սակայն, աշխատաւորներին վիճակուած չէր հնձել իւրեանց աշխատանքի և ծախքի պտուղքը. անկատար մնացին և բարեգործութիւնքը Տիտոս կայսեր, որ ուղարկեց դէպի Կամպանիա երկու անդամք ծերակուտի Հռոմից, ազդողապէս հոգաբարձու լինելու դարման մատուցանել վնասներին և հասուցանելու ամենայն պիտոյք այդ անապատացած երկրին։

79 թուականի Օգոստոսի 23-ին հասաւ Պոմպէյի վերջին օրը. նա պիտի զոհ լինէր Վեզուվի կործանական հրաբուղխութեան, թէպէտ նորա բնակիչքը համարումէին իւրեանց անձը այս մասին ապահով, կարծելով թէ իւրեանց հրաբուղխ սարը արդէն լցուցել է իւր պաշտօնը և թէ արդէն հեռաւոր հնութեան ժամանակամիջոցումը մաշելով իւր վառուն պաշարը, մոռած է հասարակ սարերի կարգը։ Այս պատճառով ահա, երբ որ նոքա տեսան մոռացած լեռնաբերանի վերայ ծխի պտոյտքը, ամենեցուն զարմացքը դրեթէ տեղիք տուեց այն ահուդողին, որ ձգումէին ժողովրդի սրտի մէջ խուլ զարկուածներ, նոյն իսկ առաւօտից թնդալով գետնի տակ և դղրդելով նորան։

Հրաբուղխ սարը անվատակելի կերպով աշխատումէր և նորա աշխատութիւնը մօտենումէր իւր որոշական կէտին. մի ժամին, ճաշից յետոյ, երբ որ ծուխը թանձրացած ստորերկրեայ զօրութեամբ, նստեցաւ գետնի և ծովի վերայ, երբ որ դորանից շրջակայ օդը լցուեցաւ խեղդող դարշելի խանձահոտութեամբ, այնուհետև սկսաւ արտահոսութիւնը ահաւոր զօրութեամբ։ Սարը ճեղքուեցաւ մի քանի տեղերում, մանաւանդ թէ իւր հարաւակողմեան արևելեան գագաթի վայրի վերին մասումը, որ դարձած էր դէպի ծով, և նորա դէպի վայր ճեղքուածներից դուրս թափուեցաւ լաւա օձակերպ հեղեղներով։ Երեկոյն մօտենալով թափուեցաւ հրաբղխական մոխիրը, որ ամեն կողմից

բարձրացած էին հորիզոնի վերայ, թէպէտ չկար ոչինչ հողմ, յառաջացաւ մի սև անթափանցելի շրջապատ, որ աւելի նման էր խաւար սենեկի, ուր չկար ոչինչ լուսի մուտք, քան թէ հասարակ գիշերի մթութեան։ Այս սև յատակի վերայ, որ երկիրը ծովի ու երկնքի հետ խառնելով շինած էր մին անզանազանելի ամբողջութիւն, բորբոքվումէին և շիջանումէին կայծակներ, զանազան նիւթերի միասին վառողութենից փայլելով ծիածանի գոյնզգոյն ներկերով, երբեմն դուրս թռչելով հրաբղխութեան բերանից դէպի ամպերը, իսկ երբեմն ամպերից դէպի ներքը։ Մի քանի ժամից յետոյ արտահոսութիւնը լրացորոշուեցաւ միւս նորանոր յայտնութիւններով. Վեզուվը սկսաւ արձակել իւր խորքից քարեր, որ իրրև գնտակներ բազմութեամբ թափուեցան շրջակայ սահմանների վերայ։ Դոցանով աւերուած տանիքները մօտակայ քաղաքների և գիւղերի մէջ, գազերի շառաչիւնը և ճայթիւնքը հրաբուղխ սարի միջից, լացը և կոծը ժողովրդի, որին վիճակուած էր ականատես լինելու տարերքի պատերազմին—այս բոլորս խլանումէր որոտի թնդիւններից, որ միշտ լծակից են մեծամեծ արտահոսութիւնների, և երկրահնչիւն հեծեծանքից ծովի, որ աւելի ալեկոծվումէր խորքումը, քան թէ իւր մակերևութի վերայ։

Հրաբղխական կայծակների փայլողութեան տակ, աստեղափայլ անձրևի պէս ցած թափուող կայծերի տակ, ոմանք Պոմպէյացիներից շտապումէին դէպ 'ի ծովը, բայց սարսափելով նկատումէին, որ նա դէպի յետ էր փախած իւր ահարկու դրացու երեսից։ Նոցա նաւահանգիստը, ուր փոքր ինչ յառաջ տակաւին փողփողումէին դրօշները (բայրաղները) վաճառական նաւերի վերայ, չկար այլ և։ նա թաղուած էր քարերի և մոխրի տակ։ Զվախեցածները անակնկալ փոփոխութենից շարունակումէին փախչել նոր բացուած ցամաքի վերայ և հասանելով ծովին, շտապով հեռանումէին ծովի ափից. այսպէս փրկվում

էին նոքա. միւսերը ահից բռնուած, չիարդանալով հասկանալ թէ ինչու հեռացած էր ծովը, շփոթվումէր նոցա միտքը, դարձեալ յետ էին դառնում իւրեանց տեղը և կորնչումէին։ Այս բոլոր ահաւորութիւնքը, լինելով արդէն շատ բաղմամամանեայ, այնու ամենայնիւ ժամից ժամ առաւել բաղմօրինակվումէին և առաւել կործանական էին դառնում։ Սկսաւ մի երկրաշարժութիւն. ճարճատուելով քանդվումէին տունները և տաճարները, ճեղքվումէին նոցա մէջ դէպի ցած գլորուած սիւները և արձանները։ Նոյն իսկ սարը, այսպէս ասել, խախտուեցաւ տեղից. նորանից բաժանուեցաւ մի ամբողջ հողակոտոր և ցած գլորուեցաւ որպէս փոշեղէն ամպեր և լաւայի ցայտեր։ Երկրաշարժութենից յետոյ կրակը շնչաւ հրաբուղխ սարի վերայ, բայց աւերածքը լրացրեցին մի սաստիկ հեղեղ վաղուց հաւաքուած թուխպերից և եռացուն ջուր, որ շատրուանի պէս վեր էր ցայտում սարի հրաբուղխ կոկորդից։ Այնուհետև, դեռ ևս չսառած մոխրի խառնուրդը, անձրևային և հրաբղխական ջրի հետ կազմելով մի վառուն ցեխ, հեղեղեց նորանով դաշտերը, խորասոյզ արեց ոչ թէ միայն փողոցները և հրապարակները, այլև լցրեց տունները Պոմպէյի մէջ, որ բացուած էին դեռևս շարժութենից և նոցա վերայ թափուած քարերից. Այս ողբալի անցքի ականատեսը, երևելի բնագէտն Պլինիոս երեցի քուերորդին Պլինիոս կրտսերը, իւր երկու նամակի մէջ առ պատմաբան Տացիտոսը համառօտաբար նկարագրած է դորա մի քանի մանրամասութիւնքը. նա միւս բաների մէջ գրում է և այս. յանկարծ տունները այնպէս ցնցուեցան սաստիկ երկրեայ զարկողութենից, որ մեք ահի մէջ սոսկալուած էինք շտապով թողել մեր տան գաւիթը և յանձն առանք պատսպարան որոնել ուր և իցէ արձակ տեղ քաղաքից դուրս։ Խռովութեան մէջ ընկած քաղաքացիների բաղմութիւնը գալիս է մեր յետևից, մեծ հոգսի մէջ է, ճնշում մեզ և ամէն մինը, ինչպէս սովոր

են ահից բռնուած մարդիկ, կարծումէր, թէ նորան հարկաւոր էր առնել այնպէս, ինչպէս առնումէին միւսերը։ Եւ ահա մեք քաղաքի պարսպից դուրս էինք, բայց դեռ ևս դուրս եկած չէինք ահաւոր անցքերի սահմանից։ Մեր կառքերը վեր վեր էին թռչում և ամենայն բոպէ դուրս էին գալիս շաւղից, թէպէտ և մեք աշխատումէինք մնալ նորա վերայ։ Ծովը որպէս թէ շուռ էր գալիս իւր վերայ և փախչումէր դողացող ափերից. տեղ տեղ նորա աւազուտ յատակը մերկանումէր, ցուցանելով այս տեղ ու այն տեղ ծովային խոտեր։ Ծովի վերայ, օդի մէջ կախուած էր սև թուղպ, որի բոլոր նիւթը երբեմն կարատփումէր փայլատակութենից։ Մեր վերայ թանձրութեամբ թափվումէր մոխիր, և ծուխը, այսպէս ասել, ընկած մեր քամակից, քշումէր մեզ և բաղմութիւնը սաստիկ նեղումէր մինը միւսին. ճնշողութենից բռնվումէր շունչը։ Ես կամենում էի մեծ ճանապարհից դուրս գալ դէպի մի կողմ, քանի որ տակաւին կարելի էր որպէս և իցէ որոնել տեղի դրութիւնը. բայց ուշ էր արդէն. վերայ հասաւ մի անթափանցելի խաւար, որ նման էր ոչ թէ մի անլուսնակ և աստղներից չլուսաւորուած գիշերի, այլ կատարեալ խաւարի՝ մի սենեկի, որի փակած և ծածկած էր ամեն կողմից։ Փախստականները լուսաւորումէին իւրեանց մոլորեցուցիչ ճանապարհը լապտերներով. տղամարդիկը, կանայքը և երեխայքը հնչեցնումէին օդը յուսահատութեան աղաղակներով, լացով ու ողբով։ Որը կանչումէր իւր հայրը, որը իւր որդին, որը խնդրումէր իւր կորուսած կինը. մինը այնտեղ վայ էր տալիս իւր զլխին, միւսը իւր բարեկամների և ազգականների յաւուրմն էր։ Կային և մարդիկ, որ մահու երկիւղից օգնութիւն էին կանչում մահը։ Ոմանք աղօթումէին, միւսները բարձրաձայն ծաղր էին առնում, հաստատումէին թէ այլ ևս չկան աստուածք ոչինչ տեղ, թէ արդէն հասած է աշխարհի վերջին դիշերը։ Առաւել չարամիտները բաղմապատկումէին ընդ-

հանուրի ահուդողը, համբաւներ տարածելով Իւրեանցից հնարած ահաւոր բաների մասին։ Միանգամ, մեր չորս կողմումը տարածուեցաւ մի տեսակ պայծառութիւն, և իսկոյն զարթեցաւ սրտերի մէջ փրկութեան յոյս։ բայց աւաղ, դա էր միայն մի մթնեցող կրակի լուսաւորութիւն, որ շուտով դադարեցաւ հեռաւոր տարածութեան մէջ, և նոյն միջոցին վերևից թափուեցաւ մոխիր, բայց այնպիսի թանձր, որ անդադար պիտոյ էր դորան թափ տալ մեր վերայից։

Ընտահոսութիւնը փոփոխելով իւր կերպարանքը և աղդողութեան ասպիճանը, տևեց երեք օր ու գիշեր։ Երբ որ Վեզուվը վերջապէս հանդարտեց, Կամպանիայի երկնակամարը, ինչպէս յառաջ, փառահեղաբար լուսաւորուեցաւ արեգակից, բայց նորա ճառագայթները այլ ևս չդտան Իւրեանց սիրելի աշխարհը։ Ձիթենիների և կանանչազարդ ողկուզաբեր այդիների տեղերում, քաղաքների և մարմարիոնեայ ամարանոցների գերեզմանի վերայ կուտակութեամբ դրած էր մոխիր և ալիքանման պաղած լաւա։ Անշարժ գերեզմանաթումբեր Իւրեանց տակումը ամբողջ տանուր դարիներով ծածկեցին ճարտարութիւնների գանձերը, և դոցա հետ միասին բոլոր հետքերը կեանքի, որ փոքր ինչ յառաջ այնքան ուրախութեամբ և գործունէութեամբ շարժումէր Ստաբիայում, Պոմպէյայում, Օլնտում (ուր այժմ գտանվումէ Տորրէ դէլ Անունցիատա), Հերքուլանումում, Տաբրոնիայում և Վեղերիսում։ Գոլը հեռացած էր իւր առաջին ափերից, գրեթէ երկու վերստի չափ։ Մինչև այժմ իսկ երևում են ալիքների զարկողութեան հետքը, սկսեալ Պորտիչից մինչև Կաստելլամարա։ Իսկ Պոմպէյի քաղաքի վատաբաղդ բնակիչների համար պատմումէ Դիոն Կասիոսը այսպէս։ Քաղաքի կործանման ժամանակն նորանք նստած էին թէատրոնումն, ուր լինում էին խաղարկութիւնք—դրամատիկական (ողբերգական) ներկայացումներ կամ գլադիատորների պատերազմը, և թէ չունենալով ժամանակ աղատուելոյ, գտան նորանք մահ այն տեղ, ուր եկեալ էին բաւականութիւն ստանալու։

Բաւական համարելով այս պատմական ծանօթութիւնքը Վեզուվի մասին, թող այժմ անցանենք նկարագրելու մեր ճանապարհորդութիւնը դէպի այդ սարը։

1866 թուականին փետրուարի 6-ին վարձելով մի կառք և տեղաւորուելով նրա մէջ, ես, իմ կինս և մի ուղեցոյց տեղական բնակիչներից իւր կնոջով, մեք ուղևորուեցանք Նէապօլից դուրս մինչև Թիշինեան իջևանը։ այս տեղ հարկաւոր եղաւ մեզ վարձել թամբած ջորիք, որովհետև ճանապարհը մինչև Վեզուվի ստորոտը ըստ մեծի մասին բաղկանալով լաւայ հեղեղից, որ տեղ տեղ ցուցանումէ խորտաբորտութիւնք, չէ բոլորովին անվնասանք ձիաւոր ճանապարհորդութեանը։ իսկ ջորիները երթալով միշտ չափահաւասար քայլափոխով և զգուշութեամբ, շատ փոքր է պատահում որ սայթաքուին (բուրդումիշ լինին)։ Բաց ի ուղեցոյցներից, որ ճանապարհորդները վարձումեն Նէապօլում ուղևորուելով դէպ ի Վեզուվիան սարը, այն տեղի կառավարողների հոգաբարձութեամբ նշանակվումէ այլ ևս իւրաքանչիւր ճանապարհորդող ընկերութեան համար մի մի ուղեցոյց 5 ֆրանկ վճարով և առանձնապէս նոյնքան ևս ամեն մի ջորու համար։ Եւ այդպէս կազմուեցան մեզանում երկու ուղեցոյցք, որոց հետ մեք ամենեքեանքս ուղևորուեցանք զառիվայր տեղերով լաւայի վերայից դէպի Վեզուվ։ Ցետ մի և կէս ժամի ճանապարհորդութեան մեք հասանք սուրբ Սալվադորի բլրին, որ զարդարուած էր բարգաւաճ ողկուզաբեր և շագանակի ծառերով։ այս բլրի վերայ կարդով շինած են փոքրիկ տուներ, որ ասվումեն պատսպարանք, ուր և բնակումէ հիւրանոց պահողը աբեղայական զգեստով, որ վաճառումէ Խակրիմէ-քրիստի ասած ըմպելին, որ շատ թունդ

գինի է, և այն։ Իւրանոցի քամակում տեղաւորուած են մետէորոլոգիական գիտանոցներ։ Տեղ տեղ, մանաւանդ թէ սարի ոտքում, ցրուած էին փառաւոր կանաչազարդ ողկուզաբեր այգիք, որովհետև այս մասում Իտալիայի ծառերը միշտ պատած են կանաչ տերևներով։ Այգեպանների երեխայքը և բաւական չափահաս աղջիկները, որ շատ օրինաւոր հագնուած էին, ամենևին չէին ամաչում ձգել իւրեանց ձեռքը և լաստ իւրեանց սովորութեան ողորմութիւն խնդրել։ Ցառաջ գնալով դէպի սարը և դեռևս բաւական հեռի լինելով նորանից, մեք նկատեցինք ճանապարհորդներ, որ բարձրանում էին դէպի սարը և նորքև էին իջանում սարից. դոքա հեռուից երևում էին որպէս մրջիններ կամ սև սև կէտեր։ Մօտենալով սարի ոտքին, որ ասվում է Սորիո դել կավալիո, այսինքն ձիաների ախոռ, տեսանք ամբոխ Նէապոլիտանցոց, որ զբաղուած վազվզումէին այս և այն ոթոռի կամ կրէսլայի շրջակայքում։ Երբ որ մեք ցած իջանք ջորիներից, խսկոյն առաջարկուեցան մեզ պօրտշէզ, այսինքն կրէսլա, ամրացուցած փայտերի վերայ դագաղի նման. սոցա մեջ նստեցնելով մի մի ճանապարհորդ, չորս մարդ դնումէին ուսերի վերայ և բարձրացնում էին դէպի սարը։ Գինը ամէն մի մարդոյ այդպիսի կերպիւ բարձրացուցանելու սարի վերայ, է 20 ֆրանկ, իսկ իջուցանելոյ 5 ֆրանկ։ Ճանապարհորդներից մի քանիքը, որ չէին ցանկանում թանգութեան պատճառաւ վարձել պօրտշէզը, վեր էին ելանում ինքեանք մեծաւ դժուարութեամբ։ Ինչպէս ասուեցաւ, Վեզուվ սարը այնպէս բարձր չէ, որ դժուարութեամբ վեր ելանելի լինէր, սակայն բոլոր դժուարութիւնը այն էր, որ նա գրեթէ ուղիղ վայրասոյզ է (վերտիկալ). այլ և նոյն իսկ ճանապարհը, որով մեզ պիտոյ էր բարձրանալ, բաղկանում էր փոշիացած լաւայից և խոշոր աւազից, որ և ոտները թաղվումէին նոցա մէջ այնպէս խոր, որ ամենևին անկարելի էր յառաջ դիմել։ Ես փորձ փոր-

ձեցի ոտքով բարձրանալ, բայց յետ մղուեցայ (սլքուեցայ) դէպի առաջին տեղը։ Իմ ջանքը անօգուտ լինելով, խնդրեցի իսկոյն երկու պօրտշէզներ, մինը ինձ, միւսը իմ կնոջս. սոցա մէջ նստեցանք մեք և բեռնակիրքը (մշակները) բարձրացուցին մեզ իւրեանց ուսերի վերայ, և այդպէս սկսաւ ուղևորութիւնը։ Ցաւալի էր ինձ նայել այս ողորմելի բեռնակիրների վերայ, որ տկարանումէին իմ պօրտշէզի ծանրութեան տակ, որոց վերայից քրտինքը հեղեղի պէս թափվումէին. դոքա երբեմն գտանելով ճանապարհին մին փոքր յարմարաւոր ժայռոտ տեղ, աղաչումէին ինձ ցած իջանել և մի քանի քայլ յառաջ գնալ ոտով, որ նոքա որչափ և իցէ կարողանան շունչ առնուլ. որ և ես շատ յօժարութեամբ յանձն էի առնում։ Այդպէս, յաջողութեամբ հասանք մեք սարի գլխին։ Այս տեղ պատկերացաւ մեր աչքի առաջև մի ահագին տափարակ տարածութիւն, ուր այս տեղ ու այն տեղ հողի տակից դուրս էր գալիս ծուխ, իսկ հեռուից լսելի էր հրաբուղխ սարի թնդիւնը և ճայթիւնը։ Այս միջոցիս մեր առաջնորդքը ցոյց տուեցին մեզ արևելեան կողմում մի փոքրիկ սար, որոյ միւս կողմում, ինչպէս ասում էին նոքա, գտանվումէ հրաբուղխ սարի կոկորդը (ժերլօ)։ Մինչ մեք յառաջ էինք գնում դէպի այն կողմ, ուստի սիւնաձև բարձրանումէր ահագին չափով ծուխ և անհետանումէր օդի մէջ, թնդիւնը և ճայթիւնը հրաբղխական բերանի մէջ սկսան զօրանալ, և մեք, որչափ կարելի էր, շտապեցանք դէպի մեր նպատակը որ շուտով լցուցանէինք մեր հարցասիրութիւնը։ Բայց փոքր ինչ աւելի մօտ գնալով, նկատեցինք մի բաւական խոր լեռնածերպ (ձոր), որոյ միւս կողմում բարձրանում էր մի փոքրիկ սար, որ փակում էր մեր տեսութենից հրաբղխական բերանը։ Ցած իջանել այս ձորումը և անցանել միւս կողմը շատ դժուար էր, որովհետև իջանելը և բարձրանալը ճանապարհ չունէր և միանդամայն գլխի վայր

էր, և այս բոլոր ձորը բաղկացած էր փոշեացած լաւայից և խոշոր աւազից։ Թէպէտ այսպիսի ահագին դժուարութիւն ունէի իմ առաջիս, բայց ինձ այնքան ցանկալի էր տեսանել հրաբղխական կոկորդը, որ իսկ և իսկ առաջարկեցի իմ ուղեցոյցներին հետևել ինձ։ Բայց երկու ուղեցոյցներից մինը միայն, որ բերած էի Նէապօլից, վճռապէս հրաժարուեցաւ, իսկ միւսը, որ որոշած էր կառավարողների կողմից, յանձն առաւ, առանձին հատուցմամբ 5 ֆրանկի, որոյ պայմանը ես ընդունեցի խսկոյն։ Թողլով իմ կինս միւս ճանապարհորդների մօտ մեծ սարի վերայ, ես սողալով, առանց մեծ դժուարութեան, ցած իջայ ձորի մէջ, բայց վեր բարձրանալը դէպի դէմառդէմ կանգնած փոքր սարը այնպէս հեշտ չէր, ինչպէս ցած իջանելը։ Ես երկար միջոց պատերազմեցայ դժուարութիւնների հետ. երբ մի փոքր բարձրանում էի, նոյնժամայն հետէի լողվում, լաւայի փոշու մէջ ընկղմուած։ Ջկնի երկար աշխատութիւնների, իմ ուղեցոյցս, իբրև փորձառու այդպիսի դիպուածների մէջ, ունելով ձեռքը մի երկայն դաւազան և աւելի վեր բարձրանալով քան թէ ես, առաջարկեց ինձ, որ ես ձեռք ձգեմ և պինդ բռնեմ դաւազանի ծայրից. բայց ես մտածելով թէ նա, իբրև նիհար և թեթև մարդ, կարողանալու չէր պահպանել իմ ծանրութիւնը և ես հեշտ կարող էի քարշել նորան իմ հետևից և նորա հետ միասին գլորուիլ ձորի մէջ, մերժեցի նորա առաջարկութիւնը, և սկսայ գործ դնել իմ բոլոր ջանքս և երկար աշխատութիւններից յետոյ յաջողեցաւ ինձ վեր բարձրանալ դէպի փոքրիկ սարը, որ տեղից մեք անցանք դէպի միւս կողմը, ուր պատկերացաւ իմ աչքիս առաջև մի ահաւոր տեսարան։ Իմ ուղեցոյցս ընտրեց մի տեղ, որ հրաբղխական կոկորդից հեռու էր ոչ աւելի 20 կամ 30 սաժէն, ասելով թէ կարելի չէ աւելի մօտ երթալ, որովհետև սրանից յառաջ երկու անգղիացիք համարձակուելով մօտենալ հրա-

բղխական բերանին (կրատէր), որ աւելի լաւ կարողանան տեսանել և քննել կոկորդը, դարձան ղոհ իւրեանց անտեղի համարձակութեան, և այդ ժամանակից տէրութեան կառավարիչքը նշանակումն իւրեանց ուղեցոյցքը ճանապարհորդներին առաջնորդելու։ Տեսարանը հոյակապ էր և միանգամայն ահաւոր. կարող էք պատկերացնել ձեր աչքի առաջև դժոխքը, որ նկարած է երևելի ճարտարապետ Ռափայելի ձեռամբ,—մի սարի մէջ ահագին ծակ (կրատէր), որոյ միջից դուրս դալով կրակ և թանձր ծուխ ճայթիւնով և աղմկով, որպէս թէ հարիւրաւոր թնդանօթների բերանից, ամենայն բոլորդ դուրս էին ձգվում կարմրացած ահագին քարեր դէպի մեծ հեռաւորութիւն օդի մէջ, որ դարձեալ ներս էին ընկնում կամ նոյն բերանի մէջ, կամ թէ նորա ափերում։ Դեռ ևս առաջին դուրս սրծած կրակած քարերը ցած չթափուած, և ահա մի այլ ճայթիւն դուրս էր ձգում նմանապիսի քարեր, որք միմեանց հետ զարկուելով օդի մէջ, կոտրատվում էին և կրակի կարկտի պէս ցրվում էին շրջակայքումը կամ դարձեալ ներս էին թափվում կոկորդումը, և այս դժոխային պատերազմը լինում էր փոխ առ փոխ ամենայն բոլորդ։ Կոկորդից դուրս եկած ծուխը հողմի զօրութեամբ տարուելով դէպի ամենայն կողմ, պատումէր բոլոր շրջակայ տարածութիւնը։ Այս թանձր ծխի ծծմբահոտութիւնը այնպէս խեղդող էր, որ ճնշումէր իմ շնչառութիւնս. որպէս զի չխեղդէր ինձ շնչարգելութիւնը, ստիպուեցայ թաշկինակով (աղլուխով) փակել բերանս։ Նոյն իսկ յատակը, որոյ վերայ ես կանգնած էի, սաստիկ և անդադար դողում և երերվում էր, իսկ իմ կօշիկների ներքանքը (պադօշները) զգալի կերպով տաքանում էին։ Ամենայն բան, որ լինում էր իմ շրջակայքում, այնպիսի ահ ու դող բերեց իմ վերայ, մանաւանդ թէ վերջին իններորդ ճայթիւնը, որ ես կապուեցայ ու սառեցայ երկիւղից, և ուրախ չէի, որ յանձն էի առած լոկ հարցասիրու-

թենից այցելութիւն առնել այս բացուած դժոխքիս։ Մինչ այս մինչ այն, իմ կինս, որ մնացած էր հանդիպակայ սարի վերայ և լումէր հրաբղխական կոկորդի ահաւոր և անդադար գոչոցքը, ամենայն սաստկութեամբ աղաղակելով կանչումէր ինձ, որ շտապով հետ դառնամ։ Երբ որ ես այս կացութեան մէջ դտանուած էի 10 րոպէ, իմ ուղեցոյցս տեղեկութիւն տուաց ինձ, որ այժմեան հրաբխակ կոկորդը բացուել է մի ամիս յառաջ, իսկ հինը, ցոյց տալով մատամբ, որ փոքր ինչ հեռի էր նորանից, փակուել է. ուրեմն վտանգաւոր էր աւելի երկար մնալ այս տեղ, որովհետև շատ հեշտ կարողէր պատահիլ, որ այս տեղը, ուր մեք կանգնած ենք, բացուիլ նոր հրաբղխական կոկորդ և կուլ տալ մեզ իւր անդունդքի մէջ։ Այս բանս լսելով, սարսափ եկաւ իմ վերայ։ Ես շտապով թողի այս դժոխանման տեղը և վազելով վերադարձայ նոյն ճանապարհով, որով հասած էի այն տեղ։ Փոքրիկ սարից իջանելով, հանդիպեցայ ես մի նոր դժուարութեան, այսինքն, վերելանելու դէպ ի այն սարը, ուր ապաստանէր իմ կինս։ Այս վերելանելու ժամանակը կրեցի նոյն դժուարութիւնները, որպիսի կրեալ էի առաջին անգամ նորա դէմառդէմ սարի վերայ բարձրանալու ժամանակը։ Ինչ և իցէ վերջապէս ողջութեամբ դուրս եկայ ես այս ահաւոր դժոխքի միջից, բոլորովին մրոտուած և ծծմբահոտուած. բայց չկարողանալով ոտքի վերայ կանգնել անզօրութենից և վաստակաւորութենից, վայր ընկայ գետնի վերայ և մնացի այս դրութեան մէջ համարեայ մի քառորդ ժամ. ապա հաղիւ թէ ուշս վերադարձած, վերկացայ և մեք վերատին ճանապարհ ընկանք դալու Նէապոլիս նոյն ճանապարհով և կարգով, որպէս գնացած էինք։

Այսպիսի կերպով աւարտած մեր ճանապարհորդութիւնը դէպի Վեզուվ սարը, մեք պտտասուեցանք միւս օրին ուղևորելու դէպի Պոմպէյա և Հերքուլանում ի նեղքոյ այն տպաւորութեան, որ արած էր իմ վերայ այս հրապուրիչ սարը՝ կործանիչ նոյն քաղաքների։

ՊՕՄՊԷՅԱ.

Նէապոլիսից մինչև Պոմպէյա համարվում է 12 իտալական մղոն և այդ տեղ կարելի է հասանել երկու ճանապարհով, երկաթուղով և կառքով։ Ես նախապատիւ համարեցի վերջինս, այն պատճառով յատկապէս, որ կառքը դտանուելով մեր իշխանութեան նեղքոյ, ես կարող էի աւելի վաղ ճանապարհ ընկնիլ և աւելի ուշ վերադառնալ, որ աւելի ժամանակ ունենայի զննելու քաղաքի հնութիւնքը, որ անկարելի էր ճանապարհորդելով երկաթուղով։ (Այսպիսի ճանապարհորդութիւն կատարեցինք մեք քանի մի անգամ, որովհետև մին անգամ դնալով անհնարին էր մանրամասնաբար զննել այս քաղաքը)։ Առաջին անգամ վարձած կառքի մէջ տեղաւորուեցանք ես, կինս և ուղեցոյցը և ճանապարհ ընկանք դէպի Պոմպէյա։ Երկու և կէս ժամից յետոյ մեր կառքը դադարեցաւ և մեր ուղեցոյցը յայտնեց մեզ, թէ մեք արդէն տեղ էինք հասած։ Աւելի ճիշտ քննելու հնութիւնքը այս քաղաքի, ես վեր առայ ինձ հետ բաղդատելոյ համար ճանապարհորդութեան գիրքը պարոն Կլատովկու, որ եղեալ է տատ 1849 թուականին և մանրամասնաբար զննել է և նկարագրել է Պոմպէյան և Հերքուլանումը։ Մեք իջանելով կառքից, հանդիպեցանք այս տեղ զանազան լեզուներով խօսող ճանապարհորդների բազմութեան, արանց և կանանց, որ ըստ մեծի մասին եկած էին Ամերիկայից։ Նախ անց կենալով մի փոքրիկ այդու մօտից, յետոյ խճաքարեայ (շօսսէ) ճանապարհի վերայով, յանկարծ բացուեցաւ մեր աչքի առաջև մի անասելի բան, որ մեք նկատած չէինք մեր դպրոցական

բոպէին։ Այս է մի հողապատնէշ (վալ), մի տեսակ պարիսպ մի և կէս վերստ երկայնութեամբ և երեք սաժէն բարձրութեամբ, արուեստական սար աւազից և խճից, որ դուրս էին հանած Պոմպէյի յայտնագործած մասնից։ Այս գերեղմանական հողը ծածկումէ եկաւոր մարդու աչքից հնութեան սրբարանը, քարացած զոհը, որ դարերը արհամարհողական վերհանձնութեամբ ձգած էին մշանջենաւորութեան բացած կոկորդի առաջև։ Մեք ներս մտանք քաղաքի մէջ հիւսիսային արևմտեան կողմից նախագաւիթը քաղաքի, որ ասվումէ Աւղուստոս Ֆելիքս։ Ցանկարծ պատկերացաւ մեր առաջև քաղաքը, որ կարծես թէ քանի օր յառաջ ՀԷաստուած էր (խարաբա էր դարձել) երկրաշարժութենից կամ հրայրացքից, ամայացած էր նորանով, որ բնակիչքը հեռացած էին այլ տեղ։ Թէպէտ քաղաքը անապատացած և անմարդաբնակ էր, բայց դու ամենայն քայլափոխում տեսանումես մարդու ունայն գործունէութեան նշանները։ Այս տեղ ձգվումէ տրօտուարի դեղեցիկ ճանապարհը, որ շատ քիչ է փոսացած նորա վերայ մեն եկած ձիերից և մարդկան ոտերից. կարծես, նոյն լոպէին պարտի դուրս գալ դրացի տունից փաթաթուած տօգումը (հռոմայեցւոց վերարկու) որ և իցէ ժամանակակից Ներոնի կամ Վեսպասիանի։ Ներսի և դուրսի պատերի սրուածքը նկարուած են և մնացած են այնպէս անարատ, որ կարծես թէ քանի օր յառաջ են շինած, այն քան լուսափայլ են նոցա վերայ հին գոյները։ Դրան շէմքի մօտ յատակի (պօլի) վերայ փոխանակ տանտիրոջ, եկողին ողջոյն է մատուցանում մի մողայկաշէն վերնագիր ,,salve, որ կամի ասել ,,ողջոյն քեզ“. բրօնզաշէն աստուածների առաջև դեռևս խախտած չէ իւր տեղից զոհարանը իւր ջրի դորակով (ամանով) և ողջ է տակաւին այն բուռն մոխիրը, որ մնացած էր նուիրագործութենից յետոյ. խոհանոցում մրոտած կաթսայն տակաւին կախած է շիջած կրակատեղի վերայ. շտեմարաններում

դրած են ամաններ և կճոյճներ շագանակներով, ձուերով, չամիչներով և զանազան տեսակ ցամաք պաշարներով։

Նթէ կամիմք սկսանել կարգով նկարագրել այս քաղաքը, այնուհետև հարկաւոր էր մեզ դարձուցանել մեր բանը դէպի առաջուան դիպուածքը, որով յայտնագործուեցաւ նա, յետ մոխրի տակ թաղուելուն 79 թուականին Քրիստոսից յետոյ։

1748 թուականին գիւղացիք սրբելով իւրեանց ողկուզաբեր այգիքը Սարնօ գետի եզերքումը, հանդիպեցան մի արձանի կտորտանքի և մի ամբողջ սիւնակարգի։ Թագաւոր Կարոլոս երրորդը իմանալով այս բանս և ուղարկելով այն տեղ բանագէտ մարդիկ, ստուգեց որ այդ Պոմպէյա քաղաքն էր. նա հրամայեց անյապաղ ձեռնարկել դուրս փորելու նորան հողի տակից։ Այս դուրս փորելը այնքան ծանրութեամբ է կատարվում, որ մինչև այժմ բացել են քաղաքի չորրորդ մասը։ Այս քաղաքի բնակիչքը, որպէս երևումէ, եղել են ոչ աւելի քանթէ 20 հազար հոգի, իսկ ըստ այլ պատմագրի 40 կամ 45 հազար հոգի։ Մոխրի տակից հանել են մինչև ցայժմ 600 մարդերի ոսկորներ։ Արդէն բացուած մասը Պոմպէյա քաղաքի, ըստ ամենայն հաւանականութեան ամենաերևելին է և առաւել արժանի ուշադրութեան, որք են ժողովրդի հրապարակը (ֆորում), թէատրոնները, գլխաւոր տաճարները, բաղանիքները, և ճոխ մանաւոր տունները։ Պոմպէյայի շրջապատը է երեք վերստից մին փոքր աւելի և բաղկանումէ իւր մակերևութի վերայ 119,330 սաժէնից։ Հեղեղից բերած հողը և մոխիրը լցուցին ոչ թէ փողոցները, հրապարակները և անցքը տների մէջ, այլ և նոյն իսկ տունները, որովհետև դոցա վերին յարկերը (էտաժները) քանդուած են, վասնորոյ այս տունները չունին ոչ տանիք (կտուրներ) և ոչ առաստաղք (օճղրք)։ Այս ամայացած տունները այժմեան տէրութիւնը ըստ մեծի մասին ծածկել է, որ անձրևից բոլորովին չ՝ոչնչանան։ Պոմպէյումն

մինչև ցայսօր բացած են հինգ քաղաքի դռներ Իւրեանց աշտարակներով։ Այժմուս համարում են այս տեղ 25 մնքրած փողոցներ և խոստոնակափողոցք (պէրէուլօկ)։ Քաղաքը քարած է լաւայով, որ մինչև ցայժմ շատ լաւ է մնացած։ Հեշտ անցկենալու համար մին տրօտուարից դէպ ի ի միւսը, տեղ տեղ փողոցներու մէջ տեղերում ամրացած են շատ լաւ տաշած քարեր, որոց վերայ ոտը դնելով անցնումէին միւս կողմը, որ ոտները չ՝ցեխոտուէին։ Այս միջև քարերը այնպէս են յարմարեցուցած, որ արդելք չէին կարող լինել կառքերու անցնելուն։ Տրօտուարների տակը շինած են ջրմուղներ խողովակներով (ջրի միլեր) որ անձրևի և այլ կեղտոտ ջրերը տանումէին դէպի ծովը։ Բաց ի փողոցներից մինչև ցայսօր Պօմպէյայումն բացած են երկու հրապարակներ, որոց առաջինը շրջապատած է գլխաւոր հասարակաց շինուածներով և տաճարներով։ Այս քաղաքումը համարեա ամենայն երկիրուղ ճանապարհի վերայ հանդիպումեն շատրուաններ. ջուրը, որ մերձակայ սարերից բերած է նոցա մէջ, ցայտումէր դէպ ի վեր և թափվումէր դէղեցկաշէն քարեայ դաշտակի (բասէյնի) մէջ։ Զրեղէն շտեմարանների մոտակայքում, երբեմն և առանձին, փողոցների անկիւնում բարձրանում են մի քանի փոքրիկ քարաշէն ղոհարանք 'ի պատիւ տեղական պաշտպանների կամ աստուածների, որ հնումը ասվումէին լարէ։

Բոլոր տունները Պօմպէյում ցուցանումեն մի և նոյն կերպարանք դուրսից և մի և նոյն դասակարգութիւն սենեակների ներսից, զանազանուելով միմեանցից մեծութեամբ և անշան մանաւորութեամբք, համեմատ տան տիրոջ ճաշակին և նիւթական կարողութեանը։ Կարելի է մնացել, 'որ Պօմպէացիք շինում էին Իւրեանց տունները քաղաքային իշխանութեան կողմից միակերպ հաստատուած պլանով։ Այս հոյակապ շինուածները ցուցանումեն, որ Հռոմայեցիք, որոց կարգում և դաղթա-

կանքը, իբրև տիրապետողք գրեթէ բոլոր աշխարհի, ունէին ահագին հարստութիւնք, որ չէին խնայում զեղեցութեան վերայ։

Տունները ունին քանի մի մուտքեր. ոմանք դռանից տանում են դէպի խանութներ, որք գտանվումեն համարեա ամենայն բնակարանումը, որչափ և նա հոյակապ լիներ, միւսները դէպի նորա ներս։ Այս մուտքերը ըստ մեծի մասին երկու կողմից ունին սիւներ քանդակաշէն, որք պատկերացնումեն ծաղիկներ, թռչուններ, կենդանիք, հելքուլէսը։ Պատերը դուրսից և ներսից սրած են քարիպէս պինդ ծեփով և նկարած են լուսավայլ գուներով, առաւելապէս կարմիր գունով, իսկ պօլէրը մոդայիկով

Այս տեղի ամեն մի տան գլխաւոր և ընդհանուր յատկութիւնը այն է, որ նա բաժանած է երկու կիսամասն. առաջինը է հիւրընկալական և երկրորդը տնտեսական։ Վերջին կիսամասնս պարունակումէ իւր մէջ ներքին գաւիթը սիւնազարդ ճեմելիքով, ննջարանը, սեղանատունը, դահլիճը, պատկերների թանգարանը, մատենադարանը, բաղանիքը, բուրաստանը՝, խահանոցը, շտեմարանը և այլն։

Պօմպէյում մինչև այժմ բացարած մոխրի տակից տունները, գրեթէ բոլորեքեան երկուէտաժանի են, որ երևումէ ողջ մնացած սանդուղքներից. քաղաքի արևմտեան և հարաւային արևմտեան մասնումը միայն, ծովեզերեայ բլուրների վերայ հանդիպումեն երեքէտաժանի և աւելի բարձր տուներ, ուր բարձրանում էին երկար ու բարձր սանդուղներով։ Այս բարձր տները ունէին բալկոններ երկաթեայ։ Տունները ծածկումէին կղմիտրով (կրամիտով), որ գոյնզգոյն նկարուած էին որպէս սիրամարգի փետուրներ։ Առհասարակ բոլոր տունները Պօմպէյում չունին լուսամուտք դէպի փողոցը (քուչէն)։ Տների դերդաստանական մասումը հանդիպում են բրօնզեղէն և մարմա-

րիոնեայ արձաններ ոգիների, յաւերժահարսների և բաքխոսական քրմուհիների, թեթև և օդեղէնք որպէս գաղափարական պատկերք սիրով վառուած երիտասարդի։ Ըստ ճարտարապետական արուեստի ճշդութեան, այս քանդակագործութիւնքը և արձանքը կարելի է համարել կենդանի. սոցա անշնչաւորութիւնը յայտնվում միայն նորանով, որ նոքա չեն շարժվում, իսկ նոցա ծիծաղը և մարմնի դրութիւնը այնպէս ճիշդ են, որ կարծես թէ այս լոպէիս պարտին խօսել։ Ես բոլորովին զարմացած մնացի Պոմպէյում այս մարմարիոնեայ արձաններից մինի վերայ, որ պատկերացնում էր մի ծիծաղաղէմ մանուկ. այնպէս զարմանալի բնական էր, որ ես երկար միջոց աքանչացած չկարողացայ յագենալ և հեռանալ նորանից։ Հիւրընկալութեան սենեակքը և ննջարանքը առհասարակ փոքրիկ են, մանաւանդ վերջիններս, որ աւելի նման են մի փոքրիկ նախասենեակի, քան թէ ննջարանի։ Պատերով սեղանատան նեղուածքից որպէս և պատերի վերայ նկարած պատկերներից, Հռոմայեցիք չէին նստում սեղանի մօտ, որպէս մեք, այլ ճաշում էին պառկած. իսկ նստել սեղանի մօտ թոյլ էր տուած միայն ծառաներին և հասարակ ժողովրդին։ Տունների մէջ կան ընտանեկան աստուածուհիք, որ անշուշտ պիտի ունենար ամենայն տանուտէր. դոքա ունէին բոլոր սալք ու կարգը աղօթարարութիւնք և զոհաբերութիւնք մատուցանելու. անուշահոտ խունկերը և սուրբ սպասքը տեղաւորածեն այս տեղ պատերի խորութեան մէջ աստուածի կամ աստուածուհու արձանի առաջև, որ պառաւելապէս պաշտելի էին գերդաստանների մէջ։ Բաղանիքները, ուր Պոմպէացիք համարեա ամեն օր լուացվում էին, շինած կան տան յետնակողմեան անկիւնումը. խահարանքը, շտեմարանքը և դոցա նման շինութիւնքը հեռացուցած են դէպի երկրորդ յարկը։

Պոմպէյի, ըստ իւր ծովեզերեայ կացութեան, ունէր նշանաւոր վաճառաշահութիւն, այս պատճառով հասկանալի է,

որ այս քաղաքում պիտի լոյս ընկնէին բազմաթիւ զանազան տեսակ խանութներ. տուն չկար, որ շրջապատած չլինէր այդպիսի խանութներով դուրսի կողմից. բացի դրանից քաղաքի աւելի բազմամարդ մասների մէջ այս խանութները շինուած են մին տեղում։ Խանութների առաջև դրան ճակատին նկարած են վաճառելի նիւթքը, զոր օրինակ, եզը՝ մսավաճառի, խաղողի ճութեր՝ գինեվաճառի մօտ, երբեմն կախարդական նշաններ՝ նախանձորդների չար աչքերի դէմ։ Տունները Պոմպէյում, վաճառականների, արուեստականների, նաև օրական մշակների լի են վերնագրով, որով աղաչում էին գլխաւոր իշխաններին, որ նոքա պաշտպանեն նոցա, զոր օրինակ „բոլոր ոսկերիչքը խնդրում են պաշտպանութիւն Կուապիոս Եդիլից"։ Այսպիսի շողոքորթութիւն դէպի պաշտպանքը դծագրած է նոյնպէս այն շինութեան պատերի վերայ, ուր գտանվում խաղի տունը*), այլ և անառակ կանանց օթևանը, ոչ հեռի բաղանիքից։ Պոմպէյում առհասարակ բաղանիքի մօտ գտանվում անառակ կանանց տուն։

Պոմպէյական կենդանագրութիւնը (նկարչութիւնը), որ լինում էր չոր ու թաց ծեփի (սրուածքի) վերայ սօսնձային (ծէբօ) գոյներով և ալ ֆրեսկօ, զարմանալի ամուր է. ոչ արեգական և ոչ լուսնի ճառագայթները կարող են ոչնչացնել արդէն մի անգամ վերայ քաշած գոյնը։ Իսկ ձիթով նկարչութիւնը անյայտ էր հին ազգերին։ Կասկած չկայ որ մեր ժամանակուայ նկարչութիւնքը իւրեանց ամրութեամբ շատ ու շատ ստոր են, քան թէ հիները, թէպէտ և շատ են մեր յառաջադիմութիւնքը քիմիական և արուեստաբանական գիտութեան մէջ։

Պատկերների դէմքի արտայայտութիւնքը, մանաւանդ նոցա վերարկուքը նշանաւոր են այնպիսի գեղեցկութեամբ, որոց մէջ հիները մնում են աննմանելի։ Ամենայն տեղ երևում հա-

*.) Ղոմար խաղացողների տուն։

մնձայնութիւն և յաջողակութիւն գործի լուցման մէջ։ Զարմանալի է այն մանրամասնական, բայց և հանճարեղ ճշդութիւնը որով օրինակուած են գազաններ, թռչուններ, ձկներ, կանաչեղէնք, ծաղիկներ. առաջիններին պակաս է միայն շունչը, իսկ վերջիններիս համը և հոտը. ահա թէ որպէս ամեն ինչ դոցա մէջ բառ առբառ համաձայն է բնութեանը։ Պոմպէյում, բացի միւս պատկերներից, յայտնագործած է մի շատ սիրտ գրաւող պատկեր. այս է մի կին որ իւր ստինքով (ծծով) կերակրում է իւր հայրը բանտումը, որ դատապարտուած էր սովամահ լինելու։ Այս պատկերները և քանդակագործութիւնքը, որ ցուցանում են որ և իցէ շատ բացայայտ հեշտախտական և անպատշաճ տեսարանք, որ այնքան սիրելի էին հիներին, պահվում են Նէապոլսում Բուրբոնեան մուզէօնի առանձնական պահարանում, ուր ներս են թողնում տղամարդեր միայն, որ ցանկանում են տեսանել նորանց։

Այսպէս համառօտաբար ստորագրելով բովանդակ Պոմպէյի պատմութիւնը, ես դառնում եմ դէպի Աւգուստայ Ֆելիքսի դարպասը (դուռը), ուր մեք սկզբում ներս էինք մտած, որ նկարագրեմ այն առարկայքը, որ տեսած էինք մեր ճանապարհի վերայ։

Դարպասի մօտ, աջակողմում գտանվում է մի տուն քաղաքից դուրս, որ պատկանած է ծառայութենից արձակուած Արրիոսի Դիօմիդայ։ Այս շինութիւնը բաղկանումէր երեք յարկից, որոց վերին յարկը չկայ այժմս, իսկ միջինը փոքր ինչ աւելի բարձր է քան թէ փողոցի ճանապարհը։ Իւր մեծութեամբ, զարդերի փառահեղութեամբ և սենեակների ճոխ զարդարանքով նա գերազանց է բոլոր տներից Պոմպէյում, որ յայտնի են մինչև այժմ։ Երբ որ ես կանգնած էի այս տեղ, մօտեցաւ ինձ մի զինուոր և մատոյց ինձ մի փոքրիկ փունջ

Արամազդ.

Գտեալ Պոմպէյումը.

վարդերից և բամբակի ծաղիկներից, 'ի հարկէ այն դիտաւորութեամբ, որ ըստ սովորութեան իտալիացոց, ստանար որ և իցէ փոխարէն ինձանից։ Զկամենալով վերդովել նորա սիրտը, ես ընդունեցի նորա ընծայաբերութիւնը, տալով նորան փոխարէն մի փոքրիկ դահեկան արծաթի։ Սորանից յետոյ նա ուղեցոյց եղաւ մեզ, երբ որ մեք գնում էինք այդ տունը, թէպէտ և առանց նորան ունէինք մեր հետ առաջնորդ մի նէապոլիտանցի մարդ, որ հմուտ էր Պոմպէյի հնութիւններին։

Այս տունը յայտնագործելու (բաց անելու) միջոցին, մի ստորերկրեայ (տակի) կորիդորում գտած են 27 կանանց ոսկրակազմեր, որ ընդհանուր ահ ու դողի և խռովութեան մէջ իջել էին այս տեղ իւրեանց պաշտպանելու։ Այդ անբաղդները շարքով կանգնած էին մինը միւսի մօտ սեղմուած պատին։ Այս կանանց մինի դեղեցիկ կերպարանքը նշանաւոր էր առանձին կենդանագիր դծագրութեամբ, որ ասես թէ գաջաշէն ձևակերպութեամբ տպաւորուած էր նուրբ մոխրի մէջ, որ ծածկած էր նորան և կարծրացած էր յետոյ։ Այս տեղ գտած են նոյնպէս մատանիք, օղամանեակք, փոքրիկ շղթաներ և գինդեր (ականջի օղեր), բոլորը զուտ ոսկուց։ Դարպասի մօտ գտել էին երկու ոսկրակազմք, (սկելէտք) տղամարդերի, որ համարում են լինել տանուտէր Դիօմեդը և իւր ծառայն, այն պատճառով, որ առաջինը ձեռնում բռնած ունէր մի բանալի և մի պարկ արծաթի և ազնիւ քարերի, իսկ միւսը կրում էր շալակի վերայ մի արկղ, լցրած արծաթի ամաններով։ Բացի սորանից այս տեղի շրջակայքումը դուրս են փորել շատ ոսկորներ մարդերի։ Այս տան մէջ գտած են մեծագին բաներ և դահեկաններ շատ, Կալիգուլա, Կլաւդիոս և Վեսպասիան կայսրների ժամանակից։

Այս տան միւս կողմում սկսանում են գերեզմաններ։ Առհասարակ Պոմպէյեան գերեզմանները շինած են մարմարիոնից

կամ տուֆից և իւրեանց ճարտարապետական շինուածով աւելի վեր են քան այն տեղի բոլոր հասարակաց և մասնաւոր շինութիւնքը։ Թէպէտ և նոցա մեծութիւնը, արտաքին ձևերը, պատուանդանքը և զարդերը բազմօրինակ են, սակայն նոքա ընդհանրապէս ցուցանումեն շատ կամ փոքր նմանութիւն տան, ապացուցանելով դրանով թէ աւելի երկար ժամանակ պիտոյ էր մարդուն մնալ գերեզմանումը։ (Յայտնի է նոյնպէս, զի եղիպտացիք, որ ապրում էին մահու համար, ասումէին տունը հիւրանոց, իսկ գերեզմանը տուն։) Որ ինչ հայումէ դէպի նոցա ներքին կարգադրութիւնը, պիտոյ է ասել, որ այդ տեղ պահպանվումէր միշտ միօրինակութիւն. գերեզմանի խորանը, այսինքն մի նեղ սենեակ, ուր մի ցած դրան միջից ներս էին մտնում դլուխը խոնարհեցուցած և մարմնը կորացուցած. խորութիւնք պատերի մէջ, փոշեամանքը և արտասուանոցքը պահպանելու համար. փոքրիկ պատուհաններ, որ հազիւ թէ ներս էին թողում լոյսը, իսկ վերևից կամարակապ։ Գերեզմանների վերայ դտանվումէին փառահեղ շէնքով քանդակազարդութիւնք և արձաններ։ Այս փողոցի մէջ, մի ժամանակ բնակում էին քաղաքից դուրս դտանուած տների մէջ հարուստ և երևելի պօմպէացիք. և այս տեղ, քաղաքային իշխանութիւնը ոմանց նոցանից առանձին պատուի համար տալիս էր մի բաժին քաղաքի հող, վասն փառաւոր թաղման։ Այսպէս մեռածների և կենդանիների օթևանքը սահմանակից էին հին ազգերի մէջ, որ մեռանում չէին, այլ միայն տեղափոխվում էին մին տնից դէպի միւս տուն. և այս խորհրդով նոցա գերեզմանքը առ հասարակ կառուցած են տների ձևով։ Եւ իցէ թէ այս սահմանակցութենից յառաջացաւ այն հաւատը, որպէս թէ մեռածների տուները թափառումեն նոցա առաջին օթևանների չորս կողմով, չդադարելով մասնակից լինել իւրեանցից յետոյ կենդանի մնացած ազգականների և բարեկամների խորհուրդներին, ցաւին և ուրախութեանը։

Երբ որ գերեզմանատները մաքրում էին մոխրից, դտան այս տեղ միւս բաների մէջ չորս կանացի մարմինների ոսկրակազմեր (սկելէտք) և դոցա հետ միասին բաւական շատ արծաթ և ուրիշ մեծագին բաներ։ Այս ոսկորների դրութեանը նայելով, եթէ չենք խաբվում, ցոյց են տալիս ահարկու և սարսափելի անցքի նշանքը. այս տեղ մեռած է մի կին միջակ հասակում, երկու աղջկների դրկում, պինդ սեղմած կուրծքի վերայ իւր երկու կամ երեք տարեկան մանուկը։ Սոքա փախչումեն եղել քաղաքից, բայց ճանապահի վերայ հանդիպելով փոշու և խեղդող շոգիների զօրութեան, ընկել և մեռել են սիրոյ դրկախառնութեան մէջ։

Ահա մեք դտանվումենք քաղաքի դարպասի մօտ, որ տանումէ Հերքուլէսի դարպաս (մեծ դուռը)։ Մեր քամակումդրած է մեր արդէն ընտած նախադաւիթը քաղաքի, իսկ մեր առաջև նոյն իսկ քաղաքը։ Այս դուռը ցուցանումէ երեք կամարակապք։ Դարպասի պատի սրուածքի վերայ դտանվումէ յայտարարութիւն (ամֆիշայ) այն կուռի, որ ամֆիթէատրումը պիտի կատարուէր դաղանների և դլադիատորների (սրամարտիկ ըմբիշների) մէջ։ Դարպասի մօտ եղած քառանկիւնի սեան վերայ դտանվումէ մի ձևարկերպած քանդակագործութիւն պատկերացուցով Փալլոսի, որ ըստ մասին նման է ծալած մկրատի, սուր ծայրովը դէպի վեր և դործ էր ածվում հին Հռոմայեցոց մէջ որպէս յուռութուլունք (պաշտպանութիւն) ձախորդութեան և հիւանդութեան երեսից, որ հասանումէին կախարդութեամբ, չար աչքից և դիւթական երդմնեցուցմամբք դևերի։ Այս տեղ շինած են սենեակներ կամ առանձին օթևանք եկաւորների համար և միւս սալք ու կարդ հիւրանոցի։ Այս տեղից փոքր ինչ հեռի դալիս են աւերակներ,

իսկ հանդէպ նոցա, փողոցի անկիւնում կառուցած է մի մեծ տուն վեստալեան բնակարան։ Սակայն որպէս թէ հակառակ այն բոլոր բաներին, որ յայտնի են մեզ Վեստայի քրմուհիների պաշտօնական անարատութեան մասին, այս տեղ յատկապէս գտած են մինը առաւել անպարկեշտ պատկերներից, այսինքն մին Ֆաունոս (աստուած դաշտերի). որ մերկացնում է մի արբեցած կին պաշտօնեայ բաքոսի։ Առ հասարակ այս տունս ամենագեղեցիկն է իւր ճարտարապետական շինուածով։ Այս տեղ բաց ի միւս բաներից գտած են մարդկային ոսկորներ շատ։

Մի տան մէջ, որ պատկանում էր վիրաբոյժ բժշկի, գտել են վիրաբուժական գործիների սալք ու կարգ, որ ուշադրութեան արժանի են այն պատճառով մանաւանդ, որ նոցա մէջ քանի մինները, ինչպէս կարծում էին, հնարած են միայն վերջին ժամանակներում օպիրատիվեան բժշկականութեան լուսատու ճրագներից։ Առաւելապէս արժանի են հարցասիրութեան այս մասին դագաթի ծակող դայլիկոնը (բուրղուն), արգանդի քննողական գործին, վիրաչափ գործին S տառի նման վասն շոշափելու միզափամփուշտի մէջ եղած քարը, կաթետրը (միզանցքի առանցքը), նշտարակ և այլն։

Ապա հանդիպում են ձեղ լուացքի սրահը, սապոն եփելոյ գործատունը, թերմոպոլիոնը, որ ունէին նոյն խորհուրդը, ինչ որ մեր դահվետունքը և հրապարակական կերակրատունքը, պօպինայք կամ խոհանոցք հասարակ ժողովրդի համար, տուն կաքաւող կանանց փառահեղ շինուածով, զարդարած գեղեցիկ նկարներով, որոց առաւել պատուականը ցուցանում է մի կաքաւող պատանի, մի ձեռը փոքր ինչ բարձրացուցած գլխի վերայ, իսկ բոլոր մարմնի կացութիւնը յայտնում է հալ ու մաշուութիւն լի փափկութեամբ և մտացածութեամբ։ Բաց ի սորանից այս կաքաւող կանանց ընտանեկան կռատան մէջ նուիրած է մի սեղան Իզիդիային և Օզիրիսին, որոց արձանք բռնած ու-

նին ձեռքում առատութեան եղջիւրը։ դոցա հանդէպ կանգնած է արձանը Հարպոկրատի՝ մատը շթունքի վերայ. վերջապէս ննջարանում նկարած են երկու մանուկ աստուածք, զանազանք ըստ սեռին, որ մերկանում են Սիրոյ աստուծոյ կիսարձանի առաջև։ Առաւել մօտակայ բնակարանների մէջ միւսներից աւելի լաւ պահպանուած են Պուպպիոսի, Ապոլոնի և Նարցիսի արձանքը։ Բայց ամենամեծ և ամենափառաւոր տունը հիւպատոսեան փողոցում այն է, որ ասում են Սալլուստեան և Ակտէոնեան։ Այս տան մէջ բացի բնակելի սենեակներից գտանվում են խանութներ, որոց մինը է հացադործութեան խանութ, որոյ մուտքում շինած է հնոց (փէչ), բոլորովին նման այժմեան ռուսաց փէչերուն. նորա հանդէպ դրած են երկանաքարեր, փոքրիկ տակառ լի ջրով և ալիւր երկունկանի սափորների մէջ. պատերու վերայ շինած կան պօլկէք, հացերը շարելու համար։ Միով բանիւ այս ամենայն այնպէս լաւ են պահպանուած, որ այն ալիւրը, որ աղացած էր 1780 տարի յառաջ Տիտոս թագաւորի ժամանակը, այժմ կարելի էր ունցել խմոր և թխել հաց։ Մի այլ մօտակայ խոտորնակ փողոցում յայտնագործուած է Մոդէստոս վաճառականի տունը. դորանից յետոյ գալիս է ալիւր աղացող հացագործի տունը և նորա հացթխութեան տեղը, ուր գտած են բոլոր սալք ու կարգը նոցա։ Այս տեղ Պոմպէում գտած են մի քանի հին հացեր, որ այժմ պահում են շուշերու մէջ Բուրբոնեան մուզէոնում. նոքա սեւացած են որպէս ածուխ և ըստ ձեւին նման են ռուսաց կուլիչների (ջատկահացերին)։ Ո՛չ հեռի այս տեղից, փողոց մտքրելու միջոցին գտած են արևացոյցներ (արեգակի սահաթ), որոց ցիֆերբլատի վերայ գծագրած 12 գիծերը նշանակում են օրի 12 ժամերը։

Ջերմուկներ կամ թէ հասարակաց բաղանիքի փողոց ասվում է արևմտեան երկար փողոցը, որ միջից կտրում է բոլոր քաղաքը։ Էդիլ Պանսայի տունը իւր չորս երեսակողմով դար-

ձուցած է դէպի չորս զանազան փողոցներ, և այնքան ընդարձակ է սենեակների բաղմութեամբ, որ կարելի էր նորանց բաժանել երկու կամ երեք բնակարանք։ Այս տունը հոյակապ է իւր ճարտարապետական շինուածքով և սենեակների կարգադրութեամբ։ Բանաստեղծի տունը թէև ճարտարապետութեան մասին չէ ցուցանում ոչինչ առանձնութիւնք, բայց նշանաւոր է նա ազնիւ պարզութեամբ և չափաւորութեամբ։ Այս տան մուտքի մօտ պօղլ վերայ, որ շինած է սպիտակ և սև քարերից (մոզաիկա) պատկերացուցած է մի շղթայով կապած շուն և նորա մօտ այսպիսի վերնագիր cave canem (զգուշացիր շնից), իսկ սենեակների առաւել մեծ մասի մէջ պատերը զարդարած են պատերազմական քաջագործութեամբք Հռոմերոսեան քաջալուններին. ննջարանների մէջ նկարագրած են դայթակղեցուցիչ և անպարկեշտ պատկերներ։ Առանձնասենեակներից մինի մէջ մի պատկեր ցուցանում է մի բանաստեղծ, նստած աթոռի վերայ, ձեռնում բռնած մի փաթաթած պապիրուս (թուղթ)։ Հասարակաց բաղանիքները կամ ջերմուկները բաղում մասամբ նման են թիֆլիզի բաղանիքներին հին ձևի և բաժանած են երկու հաւասար մասներ, դուցէ այր և կին մարդերի համար։ Առաջին սենեակը փողոցի կողմից պատկանում է բաղանեպանին, ապա հետևում բաղանիքի նախասենեակը, ուր հանում էին հանդերձքը, ուր և դրած են մի տուփ, որոյ մէջ ժողովվում էր արծաթը։ Բաղանիքի նախադաւթից յետոյ դալիս է ձուաձև բոլորակ դահլիճ, որ ասվում հովանոցս սրահ։ Նորա մէջ տեղում քարեայ յատակի մէջ հագցրած է բոլորակ մարմարիոնեայ աւազան, փոքրիկ աստիճաններով (ոտի սանդուղք) ներսումը, իսկ նորա չորս ծայրերում շինած են մեծ մեծ խորշեր (նիշք)։ Պաղ ջրի բաղանիքից անցանում էին դէպի երկու ահմանակից սենեակներ, որ ասվում էին տէպիդարիում, այսինքն, դաղ ջրի բաղանիք. կար այլ մի սենեակ, որ սաստիկ ջերմանում էր քրտինք բերող բաղանիքով։ Թէ այս և թէ պաղ սենեկի մէջ դտանվում երկար աւազան շինողի անուան վերնագրով։ Մի քանի քայլ հեռաւորութեամբ դորանից դտանվում է մի խորշ պատի մէջ եռացրած ջրի պահարանով. ուստի ջուրը պտտելով կրանը դուրսէր արձակվում իբրև շոգեղէն ամպեր։ Կամարը յօրինած է արկղաձև կապոյտ և կարմիր քանդակագործութեամբք ներսումը փոխանակ վարդաձև հանգոյցների. նա ունի երկու պատուհանք։ Ամենաջերմ սենեկի յատակը ամրացած է հաստ նեցուկների վերայ, որոց միջոցներով անցանում էր կրակը մերձակայ հնոցից. մինչև այսօր ևս նկատելի է այդ տեղ ձանձախարիթը (կօպօտ) քարի վերայ։ Տաք բաղանիքների հանդէպ կայնի երկու հիւրանոցք գինեվաճառութեան խանութով և մի տուն անառակութեան։ Այս տեղ իսկ դուրս են փորած փոշեկոյտքի մէջ ոսկորներ մի այր մարդու, որ թաղնուած էր սանդուղքի ներքոյ, ունելով իւր հետ մի պարկ արծաթի և պղնձի դրամներով, օղամանեակներով, ապարանջաններով և գինդերով։ Բացի սորանից Պոմպէյում դտած են սամովար, որ ոչինչ բանով զանազանվում չէ մեր սամովարներից, որ մինչև այժմ պահպանվում բուրբօնեան մուզէոնում։

Բաղանիքներ ընդ ամենը մինչև այժմ յայտնուած են չորս հատ։ Դոցանից յետոյ մահուդի գործատունը (ֆաբրիկա) և ներկատունը, որոց մէջ դտած են այս գործատուններին հարկաւոր սաքք ու կարգերը և զանազան տնտեսական կարասիք (հաջաթներ). առաւելապէս արժանի է այս տեղ ուշադրութեան պատի վերայ նկարած մի խումբ մարդերի, որ պատրաստումեն մահուդ։ Մերկուրեան փողոցի բաղմաթիւ խանութների մէջ դտած են ոչ սակաւ արժանի հարցասիրութեան բաներ, զանազան տեսակ կշեռներ և կշռաքարք (բէզմէն), զանգակներ, թանաքամանք, հաւաձուեր, որ չէ կարելի զանազանել նոր ածած ձուերից, կանթեղք, շղթաներ սորանց կախ տալու համար, ցիր-

կուլներ, երկաթի և բրօնզեայ կարթեր (ձկան չանգալ) և մինչև 89 հատ զանազան զարդեր ձիաների համար: Այլև բանկերի մէջը դուխկիք, պօմադներ, սպիտակադեղ և կարմրադեղ կանանց երեսներ զարդարելու համար: Գտած են և գտնուին համարեա ամեն օր տան կարասիք—բահեր, քլունգներ, ղազաններ և միւս տան հաջաթներ, որ աւելորդ է մի ըստ միոջէ սորագրել:

Երբ որ ես գնում էի մեծ փողոցովը և հետզհետէ գննում էի Պօմպէյի շինութիւնքը, յանկարծ դադարեցրեց ինձ իմ ուղեցոյցս, հարցանելով, արդեօք չկամի՞ ես տեսանել մի շինութիւն, որ լինելու էր շատ արժանի իմ ուշադրութեանս իբրև ճանապարհորդի. այլ և յաւելացրեց նա, թէ այդ շինութիւնը թոյլ տուած է տեսանել այր մարդերի միայն, իսկ կանանց ոչ: Չկամելով անտես առնել և այս առաջարկութիւնը, ասացի ես իմ կնոջը, որ քանի մի ժամանակ մնայ միւս կանանց մօտ որ բաղմութեամբ գտանվում էին այն տեղ, և ինքս գնացի ուղեցոյցի եաւէից: Մին քանի քայլ մեծ փողոցից դէպի ձախ շեղուելով, մեք ներս մտանք մի խոտոնակ (պէրէուլօկ) փողոցի մէջ. մի քանի քայլ ևս յառաջ գնալով, ի՞նչ տեսանք, մի զարմանալի բան. մեր աչքի առաջև բաւական մեծ հրապարակում պատկերացաւ երկու սաժէնի չափ բարձր քարեայ սիւն, շատ լաւ տաշած, իսկ սիւնի վերայ նոյն խսկ քարից դուրս կորած նշան անառակութեան: Այս խայտառակ քանդակագործութիւնը, որ գրեթէ 1800 տարի թաղած մնացած էր հրաբղխութեան հոսանքի տակ, այնպէս լաւ պահպանուած է, որ նորան կարելի է համարել շինած մի քանի տարի յառաջ: Դա երկրի խորքից բարձրացած է այժմ, որ տայ մեզ լիակատար ծանօթութիւն, թէ մինչ ո՞ր աստիճան անառակած էին Պօմպէացիք: Այս սիւնի հանդէպ գտանվում է բնակարանը անառակ կանանց և հասարակ ժողովրդի կերակրատունը (խարչէվնեայ): Այս տան դարպասի մօտ կանգնած էր պահապան

ղինուոր, որ նոյն րոպէին ներս թողեց մեզ. երբ մեք գտանվում էինք արդէն տան դաւիթումը, մեր առաջև բացուեցաւ մի բաւական ընդարձակ հրապարակ, իսկ նորա չորս կողմում շարքով փոքրիկ սենեակներ կամ առանձնարանք, որոց մէջ բնակվում էին Պօմպէյի անառակ կանայքը: Այս սենեակների դռների ճակատների վերայ նկարած են նոցա զարշելի խորհուրդների պատկերքը: *) Կանայքը, որոց պատկերքը տեսանվում են պատերի վերայ նկարած, ըստ մեծի մասին գլուխը ծածկած ունին կապիշոնով, իսկ լանջքը փաթաթած կարմիր գօտիով և կապած եաւէից. այսպէս էին հագնում պոռնիկ կանայք, իբրև գանազանութիւն բոլոր միւս կանանցից: Եթէ դու, ո՛վ իմ ընթերցող սառնասիրտ ես դէպի այն բանը, որ ասվում է զարշելի, և կարող ես խաղաղութեամբ նայել մարդկային բնութեան վերայ թէ և դա ոտնակոխ եղած լինէր արատների ներքոյ, մեռցրած տգիտութեամբ և չքաւորութեամբ, ապա ներս մտիր հին ժամանակի ժողովրդական կերակրատունը: Այս տեղ հասարակութիւնը սիրտ դրաւող չէ. դու կը տեսնես քո առաջև սաղանները, գողեր, փախստական նաւաստիք և ստրուկներ, դահիճներ և գերեզման փորողներ. մի անկիւնում խորդում է քնի մէջ ընկղմած, արբեցած քուրմը Կիբելէի. միւս անկիւնում իւր ամօթը վաճառող անառակ կինը զուարճացնում է պատուելի հասարակութիւնը երգասացութեամբ և անամօթ մարմնաշարժութեամբ, որ յարմարաւոր էին նորա ճաշակին: Խաբէական սրնդի արտասուքմունքը, բացագանչութիւնք և թընդիւնք սատիկ զրուցի քաջալերումն կաքաւող կինը, որ հաւասարապէս բարեմիտ է առ ամենեսեան. և այս բոլոր ամբոխը դինու, խաղի և կանանց երեքպատիկ ներշնչող ազդեցութեան

*) Այս ևս նկարագրած է Կլասովսկու ճանապարհորդութեան մէջ, երես 214.

տակ զուարճանում է և ծիծաղում բարձրաձայն, որպէս թէ աշխարհում չգիտէին երբէք, թէ ի՞նչ ասել է ցաւը:*

Ես չկարողանալով աւելի երկար մնալ այս տեղ, շտապով վերադարձայ դէպի կինս, որ դաշտ Ամերիկացի կանանց ընկերութեան մէջ, որոց աքքը հեռացած էին նոցանից նոյն պատճառով:

Ֆօրտունայի փողոցը բաղկանում է Իզեդեան կամ Նօլեան դարպասներից: Ոչ հեռի քաղաքասահմանից, արդէն քաղաքից դուրս դուրս գուած են ոսկորներ մարդերի, որ որոնած էին փրկութիւն հրաբուղխի հոսանքի երեսից. նոքա ունէին իւրեանց մօտ ոսկոյ մատանիքներ, բրաչէներ, մանեակներ և ականջի օղեր, բաւական մեծ քանակութիւն արծաթի, բաժակներ և սեղանի դրդաղներ. այս բոլորս շտապով փաթաթած էր կտաւի մէջ: Սոքանից յետոյ արժանի է ուշադրութեան բաքոսեան քրմուհիների տունը իւր պատմական և սենեկային նկարչութեամբ. ապա տունը Ֆաունոսի կամ մեծ մոգայիկաշէն կերտուածը: Այս գեղեցիկ մոգայիկեան գործը պատկերացնում է կոտորածը Դարիոսի ձեռամբ Աղէքսանդրի մեծի Իսոս ծովաքաղաքի մօտ, Կիլիկիայում:

Յառաջ քան մեր գալուստը Պոմպէյայում յայտնագործած էին քարացած մարդիկ, որոց մինը մի աղջիկ էր, իսկ երկուքը այր մարդիկ. առաջինը ահացած կերպարանքով կրծկուած էր (կուչ էր եկել). նորա ձեռնամատերի վերայ կային մատանիներ, իսկ կուրծքի վերայ մանեակ: Դուրս փորելու միջոցին նորա ոտի մի մատը կոտրուել էր և երևումէր ոսկը: Այս բոլոր քարացած նիւթերը պահվում են Պոմպէյում մեծ շուշի տակ ժողովրդին ցոյց տալու համար:

Ընկիւնային շենուածը հարաւային կողմում փողոցի, որ

*), Ես նոյն ճանապարհորդութեան մէջ 164 երես.

նորանից ստացել է իւր անուանակոչութիւնը, է Ֆօրտունայի տաճարը: Առ հասարակ բոլոր հեթանոսական տաճարները Հռոմայեցոց շինած են ըստ օրինակի Յունաց բարձր պատուանդանների վերայ, ուր բարձրանում էին միայն շինութեան ճակատի կողմից, որ սովորաբար յօրինած էր սիւնազարդ սրահով: Ներքին սրբարանը բաղկանում մի կամ քանիմի խորաններից, ամէն կողմից շրջապատած է որմով և ունի իւր սիւնազարդութիւնը: Որմերը սիւների միջոցում ունին խորշեր, իսկ բոլոր շինուածքի խորութեան մէջ, այսինքն մուտքի հանդիպակաց կողմում շինած է մի բարձրութիւն՝ պատուանդան դլխաւոր աստուածի արձանի համար. երբեմն այդպիսի պատուանդաններ լինում են քանի մի ուրիշ կուռքերի համար: Ֆօրտունայի տաճարի մէջ յօրինած 12 աստիճանեայ սանդուղքը տանում դէպ ի նախադուռը, որ ամրացած է երկաթի վանդակապատով և զարդարած վեց կորնթեան սիւներով: Նա կառուցած է բարձր պատուանդանի վերայ, ունի իւր խորութեան մէջ քառանկիւնի սրբարան, վերևից ծածկած, և դուրսից ու ներսից յօրինած գեղեցիկ սպիտակ մարմարիոնով: Այն տեղ կանգնած էին երկու արձանք, մինը կանացի և ոսկեզօծած տունիկայով և ծիրանի պճնեաւորներով ստորին հանդերձի վերայ, իսկ միւսը այր մարդու, որ թէ ի՞նչ պատճառով, յայտնի չէ, համարում են Կիկերոնի արձանը, որոյ վերարկուն գունաւոր էր: Սանդուղքի մօտ, դուրս ցցուած պատուանդանի վերայ կուբիկաձև սեղան վասն զոհաբերութեան արտաքոյ տաճարին, իսկ մուտքից դէպի աջ կողմը յօրինած են օթևանք տաճարի սպասաւորների համար:

Ֆօրտունայի տաճարից ձգվում է լայն փողոց դէպի հարաւ, մինչև դատաստանի հրապարակը (ֆօրում). նորա աջակողմում տեսանվում են շարքով խանութներ և մինը վեց մուտքից տաք բաղանիքների մէջ. ձախակողմում նոյնպէս խանութներ և նոցա

մէջ Բաքոսի տունը, որ այսպէս ասուած է, միա դնելով գինու աստուածի պատկերացուցին սրահի (ատրիումի) պատերից մինի վերայ։ Այս տեղ խանութների մէջ, ինչպէս երևումէ, վաճառումէին շուշեղէն և կաւեղէն անօթներ, որ մեծաքանակ բաղմութեամբ դուրս են փորել այս տեղ, այլ և ոսկեղէն և արծաթեղէն բաներ. արձանը Ֆօրտունայի, մի քանի փոքր արձաններ գողերի և վաճառականների աստուածների Լայլն։ Ոչ հեռի այս տեղից գտանվումէր բնակարանը կաթնավաճառի, որոյ վիվէսկայի վերայ նկարած է մի կաթը տուող այծ. այլ և գլադիատորների (սրամարտիկների) դալրոցը։

Մեք տեսանք արդէն վերևում նկարագրած ոսկերոտիքը մօր և նրա զաւակների, որ հանդիպած էին մահու քնքուշ գրկախառնութեան մէջ։ Երբոր վերջին ժամանակներում դուրս էին փորում մի խոտորնակ փողոց, որ կից էր մէրկուրեան փողոցի, փորած և բացած փոշեկոյտի մէջ գտան այլ և երկու ոսկերոտիք, որ պինդ գրկած էին իրեար։ Այս վատաբաղդների ոսկորներից երևումէ, որ նոքա չեն պատկանում մի և նոյն սեռի. այլ և որ այդ անբաղդացածները դեռևս չէին դուրս եկած վարդակարմիր մանկութեան օրերի սահմանից։ Ո՞վ էին դոքա. որպէս հաւանական է ըստ ամենայնի, էին դոքա տարփածուք (սիրողներ), կամ թէ մանուկ ամուսնակիցք, քան թէ եղբայր և քոյր։ *)

Այս տեղից դէպի աջ, լայն և ոչ երկար փողոց, Բաքոսի քրմուհիների տան և հրապարակական բաղանիքների մօտից բերումէ դէպի մի տեղ, փառահեղ և աղնուական ըստ իւր խորհրդին հին քաղաքների մէջ, այսինքն դէպի քաղաքացոց հրապարակը (ֆօրում) Պոմպէյի։ Ֆօրումի վերայ հին Յունաց և Հռոմայեցոց մէջ կատարվումէին, քննումէին և վճռվումէին

*) Ճանապարհորդութիւն Կլաստոկու երես 230.

բոլոր գործերը, սկսեալ կրօնական և թագաւորական գործերից մինչև վաճառականքը և բիրժականը, ուստի ամբոխվումէին հասարակաց հանդիսաւորութիւնք, սուրբ թափորքը քուրմերի, այլ և գլադիատորական մարտնչողութիւնքը։ Պոմպէյեան քաղաքացոց ֆօրումը շրջապատած է հրապարակական շինութեամբ. նոյն իսկ հրապարակը շրջապատած էր երկաթի վանդակապատով, մի քանի դարպասներով. երեք կողմից յօրինած է սիւնազարդ սրահ. սիւների միջոցներում բարձրանումէն պատուանդանք ամենարժանաւոր քաղաքացիների արձանների համար, և այժմ իսկ տեսանելի են քարի վերայ նոցանից մի քանիների անունները։

Առաւել մեծակշիռ շինութիւնը ֆօրումի է տաճարը Յուպիտերի և հրապարակական դանձատունը։ Այն սանդուղք, նոցա երկու կողմից հսկայաձև արձաններ վեց կորնթական սիւների մօտ,—շինութեան խորքի մէջ երեք սենեակք միմեանցից բաժանած վանդակապատով է հասարակաց դանձի պահարանը. վերջապէս զանազան անկիւներում քանդակազարդած աստուածներ և աստուածուհիք բարձր պատուանդանների վերայ. ահա ընդհանուր դաղափարը, որ հեշտ էր կազմել հին Յուպիտերի տաճարի մասին, որոյ մնացորդքը լաւ պահպանուած են մինչև այսօր։

Դորանից դէպ ի մի կողմը գտանվումէր բանտը, ուր դտած են ոսկերոտիք, որպէս հաւանական է անբաղդ կալանաւորների։ Բանտի մերձակայքում սիւնակարդի երկայնութեամբ ձգվումեն շարքով խանութներ, որ վաճառում էին մահուդ, կտաւ և զանազան տեսակ ապրանքներ։ Ըստ կապակցութեան դոցա հետ, շատ արժանի է հարցասիրութեան մի Պոմպէյեան ֆրէսկո (թաց պատի վերայ նկարած պատկեր). պատկերի վերայ ձևացուցած է մի մագաղին, ուր վաճառական մարդ առաջարկում է մի ծաքած թօփ մատէրիայի մի դէմուդէմ նստած կնոջ. սա

վիճումն՝ գտանելով պակասութիւն այդ մատէրիայի մէջ. մինչ վաճառողը աշխատումէ, ինչպէս երևումէ, ծախել իւր ապրանքը, ինչպէս նորա արտաքին ցոյցն էր, լցուցանելով իւր խօսքերը իտալական միմոսականութեամբ:

Վ. Հեներայի (Աստղկի) տաճարը թէպէտ աւելի մեծադոյն է քան թէ միւսերը Պոմպէյայում, բայց իւր ճարտարապետական շինուածքի մասամբ յետադասէ բոլոր միւսերից, մանաւանդ Իւպիտերի տաճարից: Յետոյ տաճարքը Օգոստոսի և Մերկուրիոսի: Առ ի չ՛ճանաչելոյ ընթեցողների ուշադրութիւնը այս տաճարների երկար ու ձիգ նկարագրութեամբ, կարելի է ասել միայն, որ դոքա գրեթէ նման են միմեանց իւրեանց միատեսակ խորհրդով:

Դէպի Ֆորումի հարաւային արևմտեան անկիւնը դարձուցած է իւր առաջնակողմեան երեսով Բազիլիկա անուն շինուածը, տեղի դատաստանի և հատուցման և առաւել մեծահչակ բիրժայական պայմանագրութիւնների, հին քաղաքների մէջ: Այս փառաւոր, ահագին շինուածը բաղկանումէ երեք մասներից. մի միջին և բաց մասից, վերևից, և երկու երկրորդականներից, որ պարունակումեն երկյարկեան ծածկած սիւնազարդ ճեմելիք. Բազիլիկայի խորքի մէջ շինած է բարձրաւանդակ, ուր բազմումէին դատաւորքը. նորա առաջև, բարձր բրօնզեղէն պատուանդանի վերայ, կանգնած էր մի ձիու արձանը, որպէս հաւանական է, կայսերական ձիու արձանը. վերջինի յետքում գտանվումէ մի փոքրիկ սենեակ վանդակապատ լուսամուտի քամակում—տեղի հարցաքննութեան դատաստանի տակ ենթարկուածների: Սիւնազարդ ճեմելիքի միջոցներում մի տեղ կարգով դրած են քարեայ քանդակագործութիւնք և մետաղեայ արձաններ, միւս տեղում զետեղած են աւազաններ և շատրուաններ: Սորանից փոքր ինչ հեռի տունը Եւստաքեայ քրմուհու, որ արժանի է ուշադրութեան իբրև օրինակ բուն հռոմէական ճարտարապետութեան, և բաղկանումէ երեք հա-

է ձգել տապարը և պրդէն ճեղքել է միջի երկու պատը բայց երրորդ պատի առաջև նորան հասել է կորուստ:

Վերջապէս, Պոմպէյում բացարած ամփիթէատրոնը, որ ունի երկայնաբոլորակ ձև և դասակարգութեամբ իւր աստիճանների, որոց վերայ տեղաւորվումէին հանդիսականքը, նման է վերևում նկարագրած թէատրոններին: Վեղուվի հրահոսանքի միջոցին, ժողովուրդը զուարճանումէր այս տեղ խաղարկութիւնների տեսարանով: Երկու երկայն, ծածկած կորիդորներ, գօտևորումեն թատրոնական հրապարակը, կրելով իւրեանց վերայ երկու կարգեր նստարանների: Դուռներ դուրս ելանելու այս թէատրոնից շինած են թուով հարիւր, այն պէս որ հարկաւորութեան միջոցին կարելի էր դուրս գալ այն տեղից միանգամայն: Երկու լայն մուտք տանումեն դէպի թատրոնի հրապարակը. երրորդ մուտքից ներս էին թողում նորա մէջ գազանները, մերձակայ գազանանոցի կորիդորի միջով, որ դիտաւորութեամբ նեղ էր շինած այն պատճառով, որ գազանը միանգամ ներս թողած, չկարողանար յետս դառնալ: Գլխաւոր դարպասի հանդէպ գտանվումէր սեղանատունը, ուր կերակրումէին այն գլադիատորներին, որք հաւասարի պարտէին նուիրել իւրեանց անձները մահու այս անհաւասար պատերազմի մէջ վագրների և առիւծների հետ. Սուսերամարտիկները (գլադիատորները) դուրս էին գալիս ասպարէզ սովորաբար երկու երկու. երբ որ նշանը տալիս էին, նոքա մտանումէին միմիեանց հետ կատաղաբար կռիւ, որոյ մէջ անհրաժարելի էր արիւնահեղութիւն կամ մահ յաղթուածին: Գլադիատորների պաշտօն ընդունումէին ըստ մեծի մասին ստրուկներ, պատերազմական գերիք և յանցաւորք, այս վերջինքը փոխանակ մահու:—Գլադիատորական ճարտարութիւն ուսանելու համար կային առանձին վարժարանք:

Այս բոլոր բացարած մինչև այժմ Պոմպէյի մէջ շինուածքը և հնութիւնքը չեմ նկարագրում, որովհետև շատ երկար

տուածից։ Ալևելեան ոլմը, որ ցուցանումէ պատշգամաղարդ ճեմելիք, պատկանումէ փողոցին, որ ասուած է վաճառական փողոց, ուր բաց ի միւս տեսակ խանութներից, յայտնուած է պիրօժնի ծախելու խանութ, ուր գտել են պատրաստած կտորներ խմորից ունցած, այլ և ֆօրմիր պիրօժնի համար և կնիք քանդակած տառերով դրոշմ դնելու պիրօժնիներու վերայ։ Կնիք դնելը ամենայն հայի վերայ սահմանադրած էր իշխանութեան կողմից Պօմպէյում։

Պօմպէյում մինչև այսօր բացել են երկու թէադրոնք, մեծ և փոքր կամ օդէօն (երաժշտութեան դահլիճ). դոքա շինած են մին մինի մօտ. երկուքն ևս արժանի են քաջ ուշադրութեան, տալով նոցա առաջին տեղի բոլոր միւս շինուածների մէջ։ Դուք տեսանումէք ձեր աչքի առաջև մի լիակատար շինուած, որին պակաս են միայն զարդեր և այն ամէնը, որ տալիս է փառահեղութիւն, բայց էականը, գլխաւոր բանը, պահպանուած է դարերով և անշարժ մնացած է իւր սկզբնական տեղում։ Բաւական էր միայն առնել քանի մի աննշան նորոգութիւնք, որ այսօր իսկ մտանէին գործածութեան մէջ։ Այն մասը, որ նշանակուած է հանդիսականների համար (թամաշաւորների համար), իւր բոլոր երկայնութեամբ և լայնութեամբ բաղկանումէ համակենդրոնեան կիսաբոլորակ նստարաններից, որ աստիճան առ աստիճան բարձրանալով մինը միւսի վերայ, բնականաբար նոյն չափով երկայնանումէ, որ չափով բարձրանումէ։ Նստարանների վերայ որոշած էին տեղերը հանդիսականների համար. նոքա միմեանցից բաժանվում էին գունաւոր գիծերով։ Այս բաժանումը ցուցանումէ, որ այս տեղ կարող էին հաւաքուիլ մինչև 5,000 մարդ միանգամայն։ Բոլոր կիսաբոլորակի տրամագծի ուղղութեամբ գտանվումէ տեղի վան երաժիշտների, դորա յետքից, առաջնակողմում նոյն իսկ թատրոնական բեմը։ Հին թէատրոնների մէջ, որովհետև գրքա չունէին առաստաղք (օճօրք)

կ'լինի նոցա վերայ խօսակցութիւնը, միայն իմ ցանկութիւնս այն էր, որ տամ շատ կամ սակաւ գաղափար այս հնութենական քաղաքի մասին, որ աւելի քան թէ երկու հազար տարի յառաջ լինելով այնքան ծաղկեալ, այժմ համարեայ թէ կիսով չափ նոյնութեամբ հողի տակից բարձրանումէ մեր աչքի առաջև և տալիս է մեզ ճիշտ հասկացողութիւն այն ժամանակի դրութեան թէ քաղաքի և թէ նորա մէջ բնակուող ժողովրդի։

ՀԵՐՔՈՒԼԱՆՈՒՄ։

Պօմպէյին գնելուց յետոյ մեք ուղևորուեցանք դէպ ի Հերքուլանում։ Ամեն բան ինչ որ ասացինք վերևում այն գանազան կարծիքների մասին Պօմպէյի քաղաքի ծագման վերայ, պատկանումէ և նորա դրացի Հերքուլանումին. այսինքն թէ նա հիմնարկած է Օսկայ ձեռամբ. նա դրած է Վեզուվի ստորոտքում։ 63 թուականին Քրիստոսից յետոյ նա կործանուեցաւ երկրաշարժութեամբ, իսկ 79 թուակ. թաղուեցաւ Վեզուվի հրաբղխական մոխրի տակ։ Հերքուլանումը իւր այժմեան վիճակի մէջ ցուցանումէ ոչ այլ ինչ, բայց միայն մի ստորեկրեայ գետնափոր, որոյ մէջ շինութիւնքը չքացած են 'ի ներքոյ 60 մինչև 70 ոտնաչափ հաստութեամբ շեղջակոյտերի, որ բաղկանումեն մանր գորշագոյն և փայլուն մոխրից, որ յառաջ նեռս էր ծծած իւր մէջ ջուր, իսկ յետոյ ամրացած էր իբրև հողակոշտեր, որ հաղիւ կարելի էր փշրել երկաթի բրով և բահով։ Սակայն շեղջակոյտները ոչ յանկարծ ծածկեցին քաղաքը, այլ հետզհետէ կամաց կամաց վերայ թափուելով, այնպէս որ բնակիչները ժամանակ ունէին փրկել իւրեանց անձը. այս բանս ապացուցանումեն այլ ևս այն սակաւաթիւ դատ

և տանիք (կտուր), հանդիսականքը պաշտպանում էին իւրեանց անձը արևի երեսից իւրեանց շլեապերի լայն ափերով, իսկ անձրևի երեսից, վերարկուներով։ Փոքր թէատրոնը կամ օդէոնը իւր շինուածով և կարգադրութեամբ բոլորովին նման է մեծին. նա կարողանում էր տեղաւորել իւր մէջ 1,500 հոգի հանդիսական և վերևից ծածկած էր միշտ տանիքով։

Պոմպէյում յայտնագործած տաճարը Իզիդայի փառահեղ է և կառուցած է աղիւսներից (ադուռից) ախորժելի ճարտարապետական ոճով։ Ցայտնի է, որ Իզիդայի պաշտօնը անցած է դէպի Իտալիայ Եգիպտոսից։ Քրմուհիքը և քուրմերը այս աստուածուհու՝ վատահամբաւած էին իւրեանց անառակութեամբ։ Այս տաճարի կարգադրութիւնը մերկացնում է վարագուրի միւս կողմում եղած գաղտնիքը քուրմերի, դուք կարող էք տեսանել այս տեղ ծածուկ սանդուղքը, որոյ վերայով նոքա, ոչ ումից չնկատուելով, բարձրանում էին և մտանում էին աստուածուհու արձանի քամակը և նորա բերանով հրատարակում էին պատգամախօսութիւնքը թէթևամիտ և սնարդամիտ ամբոխին։ Գաւիթներից մինի մէջ գտած են ոսկորներ մի մարդու, որ հրաբղխութեան սաստիկ հոսանքի միջոցին հանդիսատուտումէր ձուին և ձուերը, կերակրի վերայ դինի խմելով։ Հաւանական է, որ դա քուրմ էր։ Տաճարի մուտքի մօտ հրահոսական փոշիով ծածկած էր ոսկերոտքը մի թանդագին քարեր սիրող մարդու, որ կողոպտել էր տաճարի մեծագին բանները։ Նա, որպէս հարկ է կարծել, դողէր, և նորա մօտ գտել են շատ դրամ արծաթի և ոսկոյ, արծաթեայ պօղնոս, եգիպտական կուռքեր և այլ արծաթեղէն և ոսկեղէն բաներ։ Կռատան մէջ գլխաւոր արձանը պատկերացնում է Իզիդան. նորա ձեռնում կայ փականք։ Այս տաճարի մէջ գտանուած են այլ և ոսկերոտիք քուրմի, մի կայլենով։ Հաւանական է, որ տաճարի մուտքը փակած էր վլատաներով, և երբ կամեցել է փախչել, նա ձեռք

պարմանալի լաւ պահպանուած, վերջապէս առաւել արժանի հարցասիրութեան, մի օրացոյց, դծագրած մարմարիոնեայ կիւռոսի չորս երեսի վերայ։ Ցիշենք նոյնպէս մի փոքրիկ անօթ անդոյր (երեսին քսելոյ կարմրադեղ)։ Քանդակագործութեան կերտուածների մէջ համարուած են ոչ թէ միայն պատուական, այլ և բարձրիգլուխ գերազանցք, նախ, տնզուգական արձանը դնայուն Արիստիդէսի, կամ թէ ճարտասաններից մինի։ Հռչակաւոր կանոնն ամբողջ ժամեր կանգնած այդ արձանի առաջև երկիւղածութեամբ զննելով նորա կատարելութիւնքը, զարմանում էր „թէ ինչպէս այդ արձանը քայլափոխելով չէր հասնում իւրեան,—“ այնպէս բուն և կենդանի արտայայտած է նորա մէջ շարժողութիւնը, տօգայի (վերարկուի) ծալերով և ոտքի յառաջբերութեամբ։ Երկրորդ երկու ձիաւորների արձանք Բալբեանց, հօրը և որդուն. վերջինը պատկերացուցած է այն րոպէին, երբ նա գտանվումէր փօրումի մէջ. ձիաւորի ձեռը փոքր ինչ բարձրացուցած է և ձգած դէպ 'ի յառաջ. այս է մի շնորհակալական մարմնաշարժութիւն որպէս պատասխանի ժողովրդի ողջունատուութեանը։ Ձիու մէջ, միտ դնելով դէպ ի վեր ուղղած ականջներին, նկատելի է նորա ուշադրութիւնը հեծածի կամքին, և նորա մարմնի վերա շատ բացայայտ ցոյց են տուած երակները, որպէս հաւանական է, այն աշխատութենից, որով սանձահարումէ նա ձին, հոգածու զգուշութեամբ, մի՛ գուցէ որ և իցէ մարդ շրջակայ ամբոխի մէջ, ոտնակոխ առնէր։

Երքուլանի պատկերներից արժանի է ուշադրութեան այն հետաքրքիր աղախինը, որ ճարտարութեամբ ներս է նայում այն նամակի մէջ, որ նորա մանուկ տիկինը բռնած ունի ձեռքում. Եւայի արժանի դուստրը խորամանկութեամբ ժպտումէ, որպէս հաւանական է, խնդալով այն քաղցր բանի վերայ, որ վերահասու էր եղած որ և իցէ գաղտնիքի։

ՆԷԱՊՕԼԻՍ·

Պօմպէյին զննելուց յետոյ, ես մնալով Նէապօլսումը մի ամիս և կէս, զննեցի և այս քաղաքը, որոյ նկարագրութիւնը ընթերցող հասարակութեանը չէ լինելու պակաս հարցասիրելի։ Այս քաղաքի մէջ 1866 թուակ. *) համարվումէր 420,000 բնակիչք, 7,192 հոգևորականք, որոց մէջ 1964 աբեղայք և 1495 աբեղայուհիք (կուսանք), 258 եկեղեցիք, 57 երեկոյեան աղօթատունք, 174 միաբանութիւնք և 8 ընկերութիւնք հոգևոր կարգի (դի սպիրիտօ)։ Քաղաքը ունի 50 թեմ. արքեպիսկոպոսը ունի կարդինալական արժանաւորութիւն։ Գլխաւոր փողոցը, որ ասվումէ Տօլեդեան, միջատումէ բոլոր քաղաքը հիւսիսից դէպի հարաւ։ Այս ճանապարհը այն ճանապարհների հետ միասին, որ նորանից ճգվումէին դէպ ի ծովը, շրջապատած է բազմաթիւ ամարանոցներով, քաղաքից դուրս շինած սուներով (կաղնիս) և այգիներով։ Սալայատակը շինած է մեծ մեծ կտորներից լաւայի, որ դուրս էր հոսած Վեզուվի միջից։ Տօլեդեան փողոցը երկու կողմերում ունի բազմութիւն հոյակապ շինուածների։ Զկնի Տօլեդեան փողոցին, ամենագեղեցիկն է Ռիվերա դի Դիայեա։ Սա է մի զբօսարան յօրինած վանդակապատով, ճեմելիքով ի մէջ ակացիների և մշտականաչ կաղնի ծառերի, զարդարած հոտաւէտ ծաղիկներով. և մարմարիոնեա արձաններով. ծովի մէջ դուրս է ցցուած մի բոլորակ փոքրիկ սարաւանդ, որոյ վերայ կայ հովանոց։ Ցմեռնային եղանակում ճաշու ժամանակին այս այգին կացուցանումէ առաւել ընտիր հասարակութեան ժողովման տեղը։ Մի քանի քայլ հեռաւորութեամբ այս այգուց գտանվումէր մեր օթևանը աւելի քան թէ մի ամիս միջոցում, և այդ տեղից պատկերանումէր մեր առաջև ծովը բազմութեամբ

*) Ընդհանուր աշխարհագրութիւն Օլխինի և Ուսովի, հատ. 2.

ոսկերոտիքը և թանգագին նիւթերը։ Այժմուս կործանուած Հերքուլանում քաղաքի հողի վերայ կան Թէպլինա և ըստ մասին Պօրտիչի, բայց հին Հերքուլանումը լիովին յայտնի կացուցանելու համար, հարկաւոր կլինէր բնաջինջ առնել այս և այն գեղեցիկ տեղորայքը, որ չէ ամենևին ոչ հեշտ և ոչ յարմար։ Առաջին դէպ ի դուրս փորած բաները Հերքուլանումի միջից եղաւ յայտնագործութիւնը մի թէատրոնի, որ մի հոյակապ շինուած է և այնպէս լաւ պահպանուած, որ չունի իւր նմանը հնութեան միւս միատեսակ յիշատակարանների մէջ։ Նորա մեծութիւնը, եթէ առնունք շրջապատը, բաղկացնումէ 290 ոտնաչափ դուրսից, իսկ ներսից 230 ոտնաչափ։ Հանդիսականք տեղաւորվումէին 23 միմիանց վերայ աստիճանակարգած նստարանների վերայ, որ բաժանուած էին մասներով. բրօնզից քանդակագործած մուզայքի արձաններ զարդարում էին թատրոնականը, իսկ սիւների մէջ, մարմարիոնեան պատուանդանների վերայ կառուցած էին ձիաւորների արձաններ։ Այս ստորերկրեայ շինութեան մէջ ցած իջանք մեք բազմաթիւ աստիճանների վերայով, ունելով ձեռներումս վառած լապտերներ, որոց օգնութեամբ զննեցինք բոլոր շինուածքը։ Այս տեղ դուք որպէս թէ կենդանւոյն թաղած էիք և իբրև թէ մի թաղման խորքից ձեր գլխի վերայ լսումէիք մի ճնշած շառաչիւն և ձայնը կենդանի մարդերի։ Ոչ մի բանի հետ կարելի չէ համեմատել այն վհատեցուցիչ ներգործութիւնը սրտի այս խոնաւ, սառն, հին կամարների տակ. ակամայ շտապումէ մարդ այս խաւարի և ամայութեան թագաւորութենից դուրս գալ դէպի Աստուծոյ լոյս աշխարհը, և զմայլութեամբ կլանումէ օդը, ջերմացած արևի զօրութեամբ։

Ոչ հեռի թէատրոնից գտանվումէ քաղաքային հրապարակը (ֆօրումը), որոյ գլխաւոր մուտքի մօտ, բաղնիկայի կամարների տակ գտած են ձիաւոր արձաններ Բալբեանց։ Հրապարակի

հանդիսական ծայրումը տեսանելի է երեքասիճանեայ բարձրութիւն, որ պահումէ իւր վերայ Վեսպասիանոսի արձանը, այլև, ինչպէս երևումէ, նորա երկու որդիների կիսարձանքը: Դէպի աջ ու ձախ կողմը նոցանից տեղաւորած էին բրօնզեղէն պատկերքը Ներոնի և Հերմանիկոսի: Ֆօրումից յետոյ դալիս է սիւնազարդ սրահը և երեք կամարակապ տաճարներ. վերջին տաճարի մօտ գտանվումէ մի գերեզման փոշու սափորով. ապա մի փողոց, մանաւոր տունների շարքով, որոց մէջ գտանվումէ ասացեալ պապիրուսեան տունը, որովհետև այդ տեղ յայտնագործած են մինչև 800 պապիրուսեան ծրարներ (կօլօլ ծալած թղթեր), որ թէպէտ սևացած էին, բայց կարելի էր որոշել նոցա վերայ գրուածը: Այս պապիրուսները օրինակվումեն և հրատարակվումեն մեծածալ գրքերի ձևով: Բուրբօնեան մուզէօնի մէջ մեք տեսանք այս պապիրուսները, որ օրինակում էին մինչև 20 մարդ Նէապօլիտանացիք, նստած մի առանձին սենեկում:

Դուրս փորելով մի թաղ, որ առաւել մօտ էր ծովին, յայտնագործեցին մի փողոց, ուղիղ և լայն յատակած սալերով (մօստօվօի շինած) և զարդարած տուներով, որ այժմ մաքրած են մոխրի շեղջակոյտերից, որպէս Պոմպէյի մէջ: Այս տուներս ամենայն մասամբ նման են Պոմպէյան տներին: Երկար սիւնակարգեր, այգիք, բաղանիք, նախադրան մօտ ամրացուցած զանգակով, վան կոչելոյ ծառայքը: Այսպիսի զանգակներ կան և Պոմպէյումն: Այս տեղ զարմանալի լաւ պահպանուած են ոսկի հիւսածքի կտորներ, ոսկի, լօրի, հաւի ձուեր և մի ձու ջայլամի (ստրօուսի), գարի, բրինձ, սպունգ (ամպ), երկու կտորք հացի, մահուդի և կտաւի կտորներ, մի փաթեթ ձկնորսական ցանցի (դամբ), չուաններ, թելերի կծիկ, ծծումբ, քահրուբար, սապոն, թանձրացած իւղ և գինի, այլ և գտել են քառանկիւնի ապակեայ փակած արկղումը զէիթունի պտուղներ և ձկան խաւեար

ձկնորսական նաւակների և շղենաւերի: Փոթորկային ժամանակում այս միջերկրական ծովը ցուցանումէ մի կենդանագիր, բայց նոյնպէս և ահարկու տեսարան. ալիքը սարերի պէս միմեանց հետևից բերվումէին դէպի եզերքը և խռովութեամբ զարկվումէին այդու պատերին, երբեմն թափվելով պատի միւս կողմը: Վիլլարէալէի (թագաւորական ամարանոց) մօտից անցանումէ անչափ լայն փողոց, ուր մի ապարանք ձգվումէ միւսի հետևից: Միւս շարունակութիւնը ճիւղաւորուած Բիվերայի կացուցանումէ փողոցը Դի Պիէդի—գրօտա, որ տանումէ դէպի Պոզիլիպեան գրօտը (տօնել): Այս գրօտը է մի ստորերկրեայ ճեմելիք, որ շինած են Հռոմայեցիք Պոզիլիպպօ սարի միջով, դէպի արևմուտք մինչև Ֆլէգրայեան դաշտերը. նա ունի 2156 ոտնաչափ երկայնութիւն, 76 ոտնաչափ բարձրութիւն և 19 ոտնաչափ լայնութիւն. այդ գրօտը լուսաւորուած է լապտերներով:*) Պոզիլիպպի գրօտի ծայրումը գտանվումէ մի ժայռ և նորա վերայ Հռոմայական մատուռ, որոյ տակին ամփոփուած է մարմին երևելի պուէտ Վիրգիլիոսի: Մարդիկ անցանելու ժամանակը այս մատուռի մօտից ծունր են իջեցնում և երեսները խաչակնքումեն կարծելով թէ այս հեթանոսական մատենագրի գերեզմանը է որ և իցէ սրբի:**) Միւս եկեղեցիների մէջ իւրեանց գեղեցկութեամբ արժանի են ուշադրութեան մայր եկեղեցին (սրբոյն Ջեննարօ), որ կառուցած է Նեպտունոսի հին տաճարի տեղում 14 դարումը, դօթական ոճով. դորա մէջ գտանվումեն մեծագին հին սիւներ և սուրբ Պատրոնայ Եանուարիոսի մասունք: Սուրբ Ջեննարօ Դէ Պօվերի անուն եկեղեցու մօտ գտանվումէ մուտք ստորերկրեայ դամբարանների (կատակօմբեր) Կապօդի մօնտէ բլրի խորքում, որ դասակարգուած են իբրև քանի մի յարկեր մինը միւսի վերայ և պարունակումեն իսկական ստորերկրեայ եկեղեցին: Ապարանքի

*) Ընդհանուր աշխարհագրութիւն օլխինի և ուսովի, հատ. 2
**) Շարադրութիւն Ադոլֆա Բա բաղէնի երես 95 և 96.

հիւսիսային կողմի մի մասը կացուցանում է օպերայի թատրոնը Սան—Կարլո, նստարանների յարկերով (լոժէք), թուով 192. այս է ամենամեծը և ամենագեղեցիկը բոլոր Եւրոպայի թատրոններից։ Պինիայի հրապարակի մէջ գտանվում է Մուզէօ բէալէ բօրբօնիկօ։ Այս է, զինի Վատիկանին Հռոմի մէջ, առաւել մեծ ժողովումը հնութիւնների։ Այս տեղ հաւաքած են որմական կենդանագրութիւնքը Պոմպէյից և Հերքուլանումից, որպէս և մոզայիկներ և արձանագրութիւնք նոյն տեղերից. ապա դալիս են Եգիպտոսեան հնութիւնքը. Ոսկեան և Էտրուսկեան արձանագրութիւնք և բրօնզեղէն կերտուածք, աւելի քան թէ 1500 մարմարիոնեայ և բրօնզեղէն խումբք արձանների, որ յօրինած են միջին դարերում, հին անօթներ, աւելի քան թէ 5,000 տերրակօտայք (կաւեղէն անօթք) և Վօլսկեան քանդակագործութիւնք. աւելի քան թէ 1900 առարկայք ոսկուց և արծաթից, կամէօնք և արուեստով տաշած քարեր, կերակուրք, չորացած պտուղք և կտաւեայ նիւթեր. աւելի քանթէ 3000 էտրուրեան անօթք. վերջապէս 700 շատ փառաւոր պատկերներ (որ հին չեն)։ Սոյն ապարանքի մէջ գտանվում է մինը հինգ մեծամեծ մատենադարաններից Նէապոլիայի և ժողովումն պապիրուսեան ծրարների Հերքուլանումից, ինչպէս ասուեցաւ վերևում։ Այս տեղ առանձին ուշադրութեան արժանի են բազմութիւն (դրուպպա) արձանների, որ յայտնի է անուամբ Ֆարնեզեան եղն, հսկայաձև աստուածուհին ծաղիկների և նոյնպիսի Հերքուլէս։ Վերջինս է գործ աթենացի քանդակագործի Գլիկոնի, և գտած է Կարաքալլայի ջերմուկներում։ Քաղաքի մօտ գտանվում են Նեպտունոսի և Դիանայի տաճարների աւերակքը. այս տեղից փողոցը Վիա Անտինիանա, տանում դէպի Ամֆիթէատրոնը, որ մի քառորդաչափ փոքր է քան թէ կօլիզէյումը Հռոմի մէջ, որ և պարունակում է իւր մէջ 30,000 մարդիկ. այս Ամֆիթէատրոնում սուրբ Եանուարիոսը մատնուած է

ի պատառումն վայրենի գազաններին։ Հին Բայեա քաղաքի մօտ գտանվում է չքաւոր գիւղաքաղաքը Բայեա իւր ամրոցով. այս տեղ կան բազմաթիւ աւերակներ մի քանի տաճարների, բայց մանաւանդ թէ աւերակներ զանազան ամարանոցների, որոց հետ կապակից են ամենամեծ, պատմական յիշատակի արժանաւոր անուններ։ Այս տեղ չարագործ Ներոնը սպանած է իւր մայր Ագրիպինան։ Կղզիները Կապրի և Անակապրի արժանի են ուշադրութեան. դէպի վերջինս տանում է ապառաժից դուրս կտրած սանդուղքը 554 աստիճաններով։ Սարի վերայ գտանվում են ծովային աւազակի Բարբարոսայի ամրոցի աւերակները։ Տիբերիոսի պալատի աւերակները գտանվում են կղզու արևելեան անկիւններում. հիւսիսային կողմում գտանվում է մուտքը 1826 թուականին յայտնագործած կոպիշէմից, որ է մի երկնագոյն քարանձաւ (grotta Asura). այդ քարանձաւը ունի 100 ոտնաչափ երկայնութիւն և 30 ոտնաչափ լայնութիւն, ջրի հարթակշռի վերայ, բայց մուտքը նորա մէջ այնպէս նեղ է, որ կարող է անցանել միայն մի նեղ մակոյկ ընկողմայած (պարկած) նաւորդներով։ Միայն պարզ եղանակում քարանձաւի ներս լցուած է երկնագոյն կապոյտ լուսով. բայց թուխպ եղանակում կապոյտ գորշագոյն աղօտալուսով. մակոյկը և թիակաւորքը երևումեն քարանձաւի ներսում իբրև նաւորդք օդի մէջ։

Ամառօտ անցմամբ նկարագրելով Նէապոլիայի արժանայիշատակ բաները, ինձ ցանկալի էր իմ ընթերցողներին տալ փոքր ինչ մանրամասն տեղեկութիւն այս քաղաքի բազմաթիւ ականաւոր արձաններից մինի մասին, որ պահպանվում է Սան Սիվերեան եկեղեցում, որոյ նկարագրութիւնը, ինչպէս թվում է ինձ, արժանի է ամենայն մարդու ուշադրութեան։ Այս փոքրիկ եկեղեցին պատկանում է հին արքայական ազգատոհմի սերունդներին. այն տեղ բացի ազգատոհմի գերեզմանատնից, ոչ զարդարած է արժանի ուշադրութեան արձաններով, գտան-

վումէ նկարագիրը փրկչի, բոլոր մարդկային հասակի չափով, և ցուցանումէ այն բոպէն, երբ իջուցանումեն նորան խաչի վերայից։ Նա դրած է տարածուած մահճի վերայ, նորա գլուխը հանգստացած է բարձի վերայ և ինքը ծածկած է մի թափանցիկ քօղով (կիսէյայով)։ Նորա ոտքի մօտ դրած են 4 բևեռներ, ագցան և մուրճ (չաքուչ և քալփաթին)։ Այս բոլորս յօրինած է մի ամբողջ մարմարիոնի կտորից, որոյ երկայնութիւնը մէկուկէս սաժէն է, իսկ հաստութիւնը $^3/_4$ արշին։ Կարելի չէ գրչով նկարագրել այս քանդակի գեղեցկութիւնը և կատարեալ նմանութիւնը բնութեան։ Դուք կարողէք պատկերացնել մտքով մի բնական մարդ բարձրահասակ և գեղեցկադէմ, հաւլած ու մաշած շատ ու խիստ տանջանքից, աչքերը խոր ընկած, փորը ներս ընկած, ուսի կողերը անչափ զգալի կերպով որոշվումեն փորի շրջակայքում. այլ և ամենանուրբ երակները բոլոր մարմնի վերայ ամենևին բնական են։ Նոյն իսկ կիսէյան, որ շինած է նոյն իսկ անբաժան մարմարիոնից, նորա բոլոր դէպի վայր թափուած ծալերովը, այնպէս բնական է և թափանցիկ, որ ձեր առաջև պատկերանումէ մի իսկ և իսկ մեռած մարդ, որոյ վերայ ձգած է կիսեայի քօղ։ Այս քանդակը բաւական հին է և չունի իւր նմանը, գոնեա իմ տեսած քանի մի հազար արձանների մէջ, որ շինած էին քրիստոնէական դարերում։ Այս արձանը կարողէ իւր ընտիր յօրինուածով ախոյեան հանդիսանալ ընդդէմ լաւկոնեան արձանախմբին Հռոմում։ Այս եկեղեցիս, որ բաց է առաւօտից մինչև երեկոյ, գալիս են տեսանելու արձանը ճանապարհորդք, մանաւանդ Ամերիկացիք, այնպէս որ մեք երկար միջոց պէտք է սպասէինք, մինչև հասանէր մեր կարգը մօտենալու և զննելու այդ անգին գանձը։ Միտ դնելով մեր նէապօլիտանցի չիչերոնի (առաջնորդին), որոյ արժանահաւատութեանը երաշխաւոր չեմ ես, առաջուան անգլիական մինիստր լորդ Պալմէրստօնը այնպէս հիացած էր այս արձանի վերայ, որ առաջարկել էր տիրոջը վաճառել նորան Անգլիայի վերայ նորա ոսկի կշռով. բայց այս վաճառարութիւնը չէր յաջողել։ Մարմարիոնը, որից շինած է այդ արձանը, կարողէ կշռել, որպէս կարծումեմ, աւելի քան 30 փութ։

Յետ զննելու սուրբ Սիվերիոսի եկեղեցին, մեք զննեցինք ամենափառաւոր մենաստանը, որ ասվումէ կարտեղեան վանք սուրբ Մարտինոսի։ Բայց յառաջագոյն պիտոյ է ծանօթացնել ընթերցողը կարտեղեան հոգևորականների պատմութեանը։ Կարտեղեան կրօնաւորների միաբանութիւնը հիմնած է տասն և մի երորդ դարում, սուրբ Բրունօի ձեռամբ. այս միաբանութեան աբեղայքը նշանաւոր են իւր խոշորակեաց (խիստ) բարքով և տևողական լռութեամբ, որ ընդհատվումէ միայն աղօթքներ երգելու համար։ Այս աբեղայքը երբէք երևում չեն աշխարհականներին։ Կարտեղեանց վանքը Նէապօլսում գտանվումէ բարձր սարի վերայ, որ տեղից երևումէ բոլոր քաղաքը իւր գեղեցիկ շրջակայքով։ Այս տեղ թոյլ տուած չէ ներս մտանել կանանց, չնայելով որ իւրեանք աբեղայք ոչ ոքին չեն երևում. այս պատճառով իմ կինս վանքի դարպասի միւս կողմում մնաց կառքի մէջ, մինչև իմ վերադարձը։ Ներս մտանելով վանքի մէջ, հիացայ ես նորա փառահեղութեան վերայ. ընդարձակ գաւիթները յատակած են լաւայի սալերով. անկիւններում դրած են սուրբերի մարմարիոնեայ արձաններ. վանքի մուտքի մօտ գտանվումեն խուցեր աբեղաների համար, որոց դռները դարձուցած են դէպի միւս կողմը, իսկ հրապարակի մէջ տեղում քառանկիւնի շրջապատած է մի տեղ գերեզմանատան համար. սա չունի ոչինչ գերեզմանական յիշատակարանք, նա և իսկ հողը, որոյ տակին ամփոփած են մեռեալ աբեղայքը, հերկած է որպէս թէ սերմանելու համար։ Այս աբեղաների ոսկորները դուրս են փորվում, որոյ մասին մեք կ'խօսինք ներքևում։ Այս եկեղեցիս սուրբ Մարտինոսի ճոխ է

զարդերով. դորա մէջ ամենայն տեղ հանդիպումեն ոսկի, արծաթ, պորփիւր և յասպիս. սեղանի շրջակայքումը կան մեծագին պատկերներ, երևելի է մանաւանդ մեր փրկչի ինքնությունը խաչի վերայից. բոլոր նկարները ցուցանումեն գրեթէ մարդկային հասակի չափ, և չէ կարելի տեսանել մի աւելի գութ շարժող և աւելի մօտ բնութեան բան. այդ մի կենդանի պատկեր է: Ըստ վկայութեան Վսեվոլոժսկիյ անուն ճանապարհորդի, որ հրատարակած է իւր ճանապարհորդությունը 1839 թուականին, անգլիացիք տուած են այդ պատկերի համար 300 հազար մանէթ, բայց աբեղայքը յանձն առած չեն վաճառել դորան: Մի այլ պատկեր, ոչինչ պակաս գեղեցիկ քան առաջինը է Աւետեաց պատկերը, որ նկարած է սեղանի շրջակայքումը պատի վերայ, ձիթեղէն գոյներով: Հրեշտակապետը մի ծաղկի շիւղ ձեռնումը դարձուցած է երեսը դէպի Մարիամ կոյսը, որ նստած էր սենեկի մէջ: Մարիամ կոյսը տեսանելով հրեշտակապետը, դառնումէ դէպի փախուստ, ուղղությամբ դէպի դուռը, և նոյն միջոցին գլուխը դէպի յետ դարձուցած, վախեցած կերպարանքով զննումէ հրեշտակը: Այս պատկերը փառաւոր է, մանաւանդ երկիւղի կենդանագրությամբ Մարիամ կուսի երեսի վերայ.

Արկաւոր է այլ ևս տեղեկություն տալ կարտեղեանց միս զարմանալի մենաստանների մասին. դոցա մէջ Վալոմբրեանը Ֆլորենցիայի մօտ, յատիշտակիչ է մտքի. իսկ մի աւելի պատուականագոյնը գտանվումէ Պիզա քաղաքի մերձակայքումը, գեղեցիկ հովտի մէջ, հիմնարկած 1347 թուականի մի հայ կաթոլիկ վաճառականի ծախքով: Բայց, անտարակոյս, մինը աւելի արժանայիշատակներից է ոչ հեռի Նէապոլսից, la cava անուն ձորի մէջ, Սալերնոյի մօտ եղած վանքը Երրորդությեան, որ պատկանումէ կապուցինեան կրօնաւորներին: Գիտէք, թէ որպէս է դոցա գերեզմանատունը. այդ է երեք երկայն մատուռներ, որ ունին միմեանց հետ հողորդակցություն և զարդարած են մարդկային ոսկրներով: Գլուխներից յօրինած են սեղաններ, կամարներ և որմախորշեր կամ թէ խորություն (նիշ), և այս նիշերի մէջ դասակարգուած են աբեղաների ոսկերոտիք, հագցրած կրօնաւորական հանդերձներով. մինը նստած է, միւսը, կանգնած է ոտքի վերայ կամ թէ ծունր է խոնարհեցուցած: Կան այնպիսիք, որոց գլուխը միայն երևումէ կապիշոնի տակ, իսկ ձեռները դուրս են եկած թևերի միջից և բռնած ունին խաչեր: Միւսերը բացած բերաններով ցուցանումեն երկու շարք սպիտակ ատամներ: *)

Այս ևս մի ուշադրության արժանի տեսարան ոչ հեռի Նէապոլից Սոլֆատարայի ծծմբային սարի մօտ, ուր և գտանվումէ Անեանոի լիճը,—այն է մի գետնափոր որ ասվումէ շանայը (սոբաչեայ պէշչերա): Որովհետև յայտնի է, որ ածխաթթուումը հանգչումէ կրակը և շիջանումէ լապտերը, իսկ կենդանոյն սպառնումէ յանկարծակի շնչարգելությունը կամ մահը, վասնորոյ այս գազի զօրությունը շատ անգամ գործ են ածում խիստ և սաստիկ փորձերու համար: Խեղճ անասուններուն, որոնք ճանապարհորդների բաւականությեանը համար, ամէն օր քանիցս անգամ պարտ էին մեռանել և կենդանանալ, ցած են թողում ածխաթթուի կուտակի վերայ, որ այրի խորքումը անդադար արծարծվումէ: Այն ինչ այս անասունները մերձենում են թիւնաւոր գոլորշուն, նոյնժամայն նոքա ըմբռնվումեն կուչ գալով (սուդօրոգի), կորուսանումեն ընդունակությունն շարժուելոյ. շնչառությունը արգելվումէ և ահա մերձ է մահը. բայց նոցա շուտով դուրս են քարշում, դնումեն խստակ օդումը.

*) Այս վանքը ևս նկարագրելէ պ. Վսեվոլոժսկին իւր երկրորդ հատոր ճանապարհորդության մէջ երես 84 և 85.

զարկումէ կենդանական կայծը, նոքա սթափվումեն և զարթնում՝, միայն նորա համար, որ դարձեալ շուտով ենթարկուին նոյն իսկ տանջանքներին։ Այս բարբարոսական թատրոնը տուած է տէրութենից կապալաւ (իջարով) մի շինականին. այս տմարդի գործը ներկայացնվումէ հետևեալ կերպիւ. դուք գալիսէք այս շինականի մօտ, տալիս էք երկու ռուբլի, և նա վեր է առնում իւր հետ սև փոքր շունը, ներս է տանում նորան մի ցած և հոտած գետնափոր այրումը և նստեցնումէ մի իւրան յայտնի անկիւնում. աչքերը այս խեղճ շան շուռ են գալիս դէպի ճակատը, նա վայր է ընկնում մէջքի վերայ, սկսումէ ոտները ապդին անդին ձգել և շնչասպառ է լինում. տէրը շուտով դուրս է քարշում նորան խստակ օդումը, երկիւղ կրելով, որ բոլորովին չսատակի. սրանով վերջանումէ ներկայացումն։ Ո՞հ, ես չեմ տեսել աւելի վատաբաղդ, քան այս խեղճ շունը։ *)

Նէապոլիսից դուրս Պոմպէյումը գտանվումէ հին երևելի թագաւորական պալատ և գեղեցիկ զօրզոդիական այգի, ուր կան բազում հաղուագիւտ դաղաններ, անասուններ, թռչուններ, սողունք և այլն։ Ես չկամիմ մի ըստ մոչէ նկարագրել այս ահարկու դաղանները, զոր օրինակ, առիւծներ, վագրեր, ինձեր և այլն, որովհետև նոցա նման դաղաններ կան և այլ թագաւորական և առանձնական զօրզոդիական այգիների մէջ, նա մանաւանդ Լոնդոնումը, որ մեծագոյն է և հարուստ քան միւսները, բայց կամիմ ստորագրել մի արժանի ուշադրութեան անասունը, որ անուանվումէ կէնդուրու. նորա մեծութիւնը

*) Սորա ստորագրութիւնը գտանվումէ Հարավիդի չարագրութեան մէջ, հրաչք ստորերկրեայ աշխարհի անունով, երես 88 և 89, Այլ և Վսէվոլոժսկու ճանապարհորդութեան մէջ, հատոր երկրորդ. երես 22 և 23.

աւելի չէ քան թէ մի մեծ այծի, նորա առաջին երկու ոտները այնքան կարճ են, որ չէ կարող մանդալ, իսկ ետևի ոտները շատ երկայն են և միշտ նստած է այս ետևի ոտների վերայ երկու տակ ծալած, և երբ կամենումէ յառաջ դնալ, փոխանակ մանդալու, թռչոտումէ քամակի ոտներով. սա ունի փորի վերայ մի առանձին բնական պարկ, և երբ ծնումէ դաւակ՝ նստացնումէ նորան այս պարկի մէջ և ինքն բերանով կանաչ խոտ կտրելով կերակրումէ նորան. պարկի մէջը միայն գլուխն է երևում այս նոր զաւակին, և երբ մայրը թռչոտումէ այս կամ այն տեղ, այս խեղճ փոքրիկ կէնդուրուի գլուխը ապդին անդին է ընկնում։ Ցեսարանը այս երկարգանդեայ *) անասնոյն շատ դրաւող է։

Չէ կարելի լռութեամբ անցանել այն բնութեան երևութի մասին, որ պատահումէ ոչ հեռի Վեզուվեան սարից Ավէրն անուանեալ տեղումը, որ պատած է ճերով կործանող թռչուններու. այդարև, երբ որ այս տեղ երևումէ թռչունը, նորա թևերը թուլացած ծալվումեն, գլուխը ցած է թեքվում և այս ուրախ արագաթռիչ օդային բնակիչը՝ անշնչացած գլխիվայր է ընկնում գետնի վերայ կամ ճումը։ Այս կորստական ազդեցութիւնը բացատրվումէ գազերու ճնասակար զօրութենից, որք դուրս են գալիս հողի տակից և պատճառումեն շնչարգելութիւն։ Հին մատենագիրները չունենալով հասկացողութիւն այս բնութեան երևութի մասին, անուանումէին այս տեղերը դժոխոց դրունք, որոց միջով դժոխքի ատուածները տանումէին իւրեանց թագաւորութիւնը մեռելոց հոգիքը։ **)

Մեր կեցութեան բոլոր միջոցում Նէապոլսու մէջ, որքան այն տեղի բնութիւնը և մշտականաչ այգիքը, որ ըստ մեծի մասին լի են լիմոնի և ապելսինի ծառերով,

*) Двуутробій.

**) Вулканы и землетрясенія, сочиненіе. Цюрхера и Маргалле, изд: въ С. П. бургѣ 1869 г.

հասուցանում էին մեզ հաճութիւն, նոյնքան և տանջողական և անտանելի էին գիշերները պիծակների (մճծակների) խայթման պատճառով. այդ պիծակները, թէև ժամանակը ձմեռային էր (Յունվար, փետրվար և մարտ), մտանում էին մահճի վարագոյրներումը (պօլօղներումը), որոց միջին թաքչումէինք մեք նոցանից, և խայթումէին մեզ անխնայ: Նոյնչափ և անհանգիստ էին առնում մեզ և չէին տալիս քնել, մանաւանդ լուսաբացին, անտուն լացցարօնքը *) որ իւրեանց դերդաստաններով գիշեր—ցերեկ ապրում են բաց երկնակամարի տակ, փողոցներում, և պատուհանների տակ, լուսածագին սկսանում են բարձրաձայն խօսիլ և աղաղակել: Վերջապէս հասաւ ժամանակը, երբ հարկաւոր էր մեզ վերադառնալ դէպի Հռոմ, այսինքն մեծ պահքի չորեքշաբաթի շաբաթը, որ ակնատես լինէինք Հռոմի հոգևոր մեծահանդէս տօներին, և մեք եկանք այդ յաւիտենական քաղաքը 1866 թուականի Մարտ ամսի 14-ին:

ՀՌՈՄ.

Երբ որ վերադարձանք Հռոմ, մեք դտանք բոլոր հիւրանոցքը ճանապարհորդ մարդերով լիք, որ եկած էին այս տեղ մնանակից լինելու տօնախմբութիւններին. այս պատճառով ստիպուեցանք վարձել մանաւոր օթևան մի այրի հռոմէացի կնոջ մօտ: Այստեղ ասացին մեզ, որ մեզ պիտոյ էր կանուխ հոգալ տոմսակներ (բիլէտներ), առանց որոց կարելի չէ դտանել պատուաւոր տեղ Պապի նուիրագործութեան միջոցին սուրբ Պետրոսի եկեղեցում, այսինքն Աւագ հինշաբաթի օրին և

*) Աղբատներ Իտալիումը:

Զատկի կիրակէին: Գիտելով, որ Հռոմում բնակումէ ուսումնականութեամբ հռչակաւոր հայ կաթոլիկ արքեպիսկոպոս Եղուարդ Հիւրմիւզեանը, ես միւս օրին իսկ դիմեցի նորա մօտ: Երբ որ սանդուղից բարձրացած էի., հանդիպեցաւ ինձ նորա սենեկապանը, որ տարաւ ինձ մի հոյակապ դահլճի մէջ, որոյ անկիւնում կար մի փոքրիկ օթևան, ուր նստած էր արքեպիսկոպոսի դպիրը, մի հոգևոր անձն Մխիթարեան ընկերութենից. սա իսկոյն վերկացաւ տեղից և մօտեցաւ ինձ, և երբ որ ես սկսայ խօսել նորա հետ հայերէն, հարցանելով արքեպիսկոպոսի մասին, դպրի երեսը պայծառացաւ ուրախութեամբ, և լսելով իմ խօսակցութիւնը, նեռի պէս թռաւ դէպի իւր մեծաւորի առանձնասենեակ իմաց տալու նորան իմ դալուստը: Երբոր զեկուցումն էին տուած նորան, թէ ես Ռուսաց հպատակ եմ կովկասու աշխարհից, Հայաստանի մասնից, նոյն րոպէին շտապով դուրս եկաւ իւր սենեկից մի զառամած ծերունի միջակ հասակաւ և դրկախառնելով ինձ, տարաւ իւր օթևանը, ուր նստած էր այլ ևս մի կրօնաւոր Մխիթարեան ուխտից, Իմանուէլ անունով: Նա առանձին ուշադրութեամբ և ուրախութեամբ ականջ դրեց մեր ճանապարհի պատմութեանը և թէ մեք ինչ խորհրդով եկած էինք Հռոմմ: Երբ որ խօսքի թելը հասաւ տոմսակների, որ հարկաւոր էին Սուրբ Պետրոսի եկեղեցին մտանելու ժամանակին, այնուհետև անկեղծ ցաւակցութեամբ յայտնեց նա ինձ, թէ ահա երեք օր է, որ բոլոր տոմսակները բաժանած էին, և որովհետև չկային այլ ևս, ուրեմն նա կարող չէր լցուցանել իմ խնդիրը: Զկնի երկար թախանձանքից՝ ես շարժեցի նորա պատուասիրութիւնը, ասելով. թէպէտ նա հռոմէական արքեպիսկոպոս է, բայց ազգով հայ է, և եթէ նա մի հայի համար, որ եկած էր այնքան հեռաւոր աշխարհից, լինելու էր այնքան անպօր և կարող չէր օգնել ինձ այս դժուարին դրութեան մէջ, այնուհետև ինձ մնումէր

մի բան—անյապաղ, վաղուեան օրին դուրս գնալ Հռոմից։ Այս տեղ փոքր ինչ մտածութեան մէջ ընկաւ նա և հանգստացնելով ինձ փայփայողական խօսքերով, ասաց ինձ, թէ նորան մնում մի հատ հնար գործ դնելու. վաղուեան օրին առաւօտուն դիմել դէպի Դուռը—Պապի զինուորական նախարարը, կարդինալ Անտոնելլին և խնդրել նորանից երկու տոմսակ իմ կնոջ համար, իսկ իմ մասին հարկաւոր չէր տոմսակ, որովհետև աղնուական կարգի մարդիկ մուտք ունէին և առանց տոմսակի։ Այս խոստումը նա ցոյց ստուգապէս և ճշդութեամբ, և նա միւս օրի 8 ժամին առաւօտուն, անձամբ անձին հասցրեց ինձ երկու տոմսակ, որ հարկաւոր էին Աւագ հինգշաբաթի և Զատիկի կիւրակէի համար։ Բայց ի սրանից նա հոդարարձու եղաւ ազատ կացուցանել ինձ այն բոլոր դժուարութիւններից, որոց կարող էի ես ենթարկուիլ մեր կեցութեան միջոցին Հռոմում։ Պիտոյ է արդարամտութեամբ խոստովանել, որ ես երբէք հանդիպած չեմ այդպիսի բարեմիտ մարդու. նա գոլով ըստ իւր ասիճանի այնպիսի վեհապատիւ և գիտնականութեամբ հռչակաւոր անձն և ալեւոր մարդ, ջանադիր էր ամենայն քայլափոխում հաճոյանալ մեզ և իբրև խանդաղաթ սիրով իւր դաւակները սիրող հայր դգվում մեզ և միշտ քաղցր ժպտմամբ ընդունում մեզ իւր մօտ, պատուասիրում և ճանապարհ էր ձգում։ Առանց որ և իցէ շահախնդրութեան, նորա բոլոր գործերին կցորդ էր մի մաքուր և անկեղծ աւետարանական սէր։ Նա աղդեց իմ մէջ այնպիսի խորին և ախորժելի տպաւորութիւն, որ ես մինչև այսօր կարող չեմ առանց սրտի քաղցրութեան յիշել նորան։

Բայց յառաջ քանթէ գնացած էինք սուրբ Պետրոսի եկեղեցին, հարկաւոր է տալ ընթերցողներին նորա մանրամասն նկարագրութիւնը, ապա թէ ոչ մեր պատմութիւնը ունենալու

չէ կատարեալ կապ գործի հետ։ *) Դէպի հիւսիսային արևելեան մասը քաղաքի, արևմտից դէպի հարաւ ուղղութեամբ, Տիբրիս գետի վերայով տանում սուրբ Անգելոսի կամուրջը, որ կառուցել է Հադրիանոսը, որ և զարդարած է մեծ մեծ հրեշտակներով, գործ Բերնինի ճարտարապետի։ Կամրջի միւս կողմում բարձրանում սուրբ Անգելոսի բերդը։ Այս բերդը ցուցանում մի ահագին աշտարակ, որոյ վերևից կառուցած է Միքայել հրեշտակապետի բրօնզեղէն արձանը։ Հադրիանոսը շինած է դորան վասն թաղելու նորա մէջ իւր ընտանիքը. նորա յաջորդ Պիոսը թաղել է նորան այս տեղ 138 թուակ. Քրիստոսից յետոյ։ Այս տեղից դէպի արևմուտք գտանվում մուտքը Սուրբ Պետրոսի եկեղեցու մէջ (S. Pietroin Vaticano)։ Երբ որ Պետրոս առաքեալը մարտիրոսական մահուամբ մեռած էր խաչի վերայ, նորա աշակերտ Մարկելլոսը փոխադրեց նորա մարմինը 65 թուակ. Քրիստոսից յետոյ մի քարանձաւի մէջ Վատիկանեան սարի տակ, ուր առաջին քրիստոնեայքը թաղեալ էին իւրեանց հանգուցեալքը։ Յետոյ 90 թուակ. Քրիստ. յետոյ Անակլետոս պապը հիմնարկեց այս առաքելու գերեզմանի վերայ մի աղօթատեղի, որոյ փոխանակ 306 թուակ. Կոստանդիանոս մեծը կառոյց մայր եկեղեցին։ 1503 թուակ. ըստ առաջարկութեան Բրամանտէի սկսուեցաւ եկեղեցու շինութիւնը. 72 տարեկան Միքել Անջելոն յաւելացրեց եկեղեցու վերայ գմբէթը պանտէոնական ձևով։ Այս եկեղեցին կառուցած է յընթացս 350 տարուջ. նորա շինութեան ծախքը հասանում 64,324,100 մանէթ արծաթի։ Եկեղեցին առանց նախագաւթի ունի 663 ոտնաչափի երկայնութիւն,**բարձրութիւնը յատակից մինչև փանոսկը (գմբէթը) 405 ոտն., մինչև խաչի ծայրը 487 ոտն., գմբեթի վերայ դրած է գունդ, որոյ տրամագիծը 8 ոտն. և

*) Ընդհանուր աշխարհագրութիւն Օլխինի և Ռասովի, հատ. 2.

**) 95 սաժէն

խաչի բարձրութիւնը 11 ոտն։ Մուտքը եկեղեցու մէջ լինում է Պետրոսեան հրապարակով, այս վերջինս ունի ձուաձև բոլորակ կամ էլիպսեան շրջանագիծ 835 ոտն երկայնութեամբ և 550 ոտն լայնութեամբ. իսկ զկնի նորա հետևում է քառանկիւնի հրապարակ 296 ոտն երկայնութեամբ և 336 ոտն լայնութեամբ, որոց վերայ կարող են տեղաւորուիլ 624,000 մարդ։ Շրջապատող սիւնակարգի 4 շարքը բաղկանում են 284 դօռական սիւներից և 88 խարիսխներից 60 ոտն. բարձրութեամբ, բացի դորանից տանիքի պսակի (բաղուստրադի) վերայ կառուցած են 152 արձանք սուրբերի 11 ից մինչև 12 ոտն բարձրութեամբ։ Հրապարակի մէջ տեղում դրած է Եգիպտական քարկոթողը (օբէլիսկ) Նոնկարնա թագաւորի, որ 39 թ. Քր. յետոյ, Հելիոպօլից բերած է Հռոմ։ Օբէլիսկի երկու կողմում կայ միմի շատրուան $37^1/_2$ ոտն բարձրութեամբ, որոց միջից ջուրը ցայթում է այլ ևս 20 ոտն բարձրութեամբ։ Հրապարակից 22 աստիճանք տանում են դէպի վեր առ հսկայամարմին ապարանքանման ճակատը, իսկ նորա առաջև կանգնած կորնթեան սիւները 88 ոտն. բարձրութեամբ կերպաւորում են նախադաւիթը կամ բակը հանդերձ ճեմիլեքով բակի վերայ, որոց միջին պատուհանից Պապերը տալիս են ժողովրդին օրհնութիւն։ Տաճարի մուտքի վերայ ահագին տառերով դրած է Paulus V Burghesius և այլն. Հինգ հատ մուտք տանում են դէպի եկեղեցու ներսը։ Այն տեղ, ուր միանում են եկեղեցու կողմնաթևերը, գմբեթի տակ կառուցած է բրօնզեղէն, 102 ոտն. բարձրութեամբ, ոսկեզօծ ամպհովանի չորս ոլորուն սիւների վերայ, ծածկելով աւագ սեղանը. նորա առաջև բացվում է, վանդակապատ (պէրիլներով շրջապատած) և 212 անշիջանելի լապտերներով լուսաւորուած գերեզմանը սուրբ Պետրոսի, ուր իջանում են կրկնակի սանդուղքով։ Գլխաւոր սեղանը շինած է նախնական եկեղեցիների ձևով, այսինքն նուիրագործ քահանան պիտի կանգնի

նորա վերայ երեսը դարձուցած դէպի ժողովուրդը։ Պապը միայն ունի իշխանութիւն քահանայագործել այդ տեղ։ Գլխաւոր խորանից կարելի է տեսանել գմբեթը նորա բոլոր փառահեղութեամբ։ Գմբեթի չորս կողմով գօտիկի վերայ դրած է մոզայիկեան տառերով, որոց ամեն մինը ունի $4^1/_2$ ոտն. մեծութիւն, այսպէս. Դու ես Պետրոս. և այդ վիմի վերայ կը շինեմ իմ եկեղեցին և կը տամ քեզ երկնքի արքայութեան փականքը։ Սեղանի քամակում պիտոյ է նկատել չորս բրօնզեղէն հսկայամարմին արձաններ. իւրաքանչիւրը դոցանից մի մատով պահում է բրօնզեղէն աթոռ (կրէսլա), որոյ միջին դտանվում հասարակ փայտեայ աթոռ, որոյ վերայ երբեմն բազմում էին Պետրոս առաքեալը և նորա առաջին յաջորդքը, նուիրագործութեան միջոցին։ Այս չորս հսկայաձև կերպարանքը ցուցանում են չորս պաշտնագործքը եկեղեցու, 2 լատինականք և 2 յունականք. առաջինքը են սուրբ Ամբրոսիոսը և սուրբ Օգոստինոսը, իսկ երկրորդքը սուրբ Յովհան Ոսկեբերանը և սուրբ Աթանասիաս Աղէքսանդրացին։ Կարելի է մի փոքրիկ սանդուղքով վեր ելանել և տեսանել սուրբ Պետրոսի աթոռը. դա փայտաշէն է հին զարդերով փղոսկրից և ոսկուց։ Այս աթոռի երկու կողմերում դրած են երկու հրեշտակներ, իսկ աթոռի ճակատին երկու մանուկներ, որ կրում են քահանայապետի թագը և փականքը։ Հոդին սուրբ աղաւնու կերպարանքով թռչում է վերևում։ Նորանից դէպի ցած դտանվում մարմարիոնեայ արձան, որ պատկերացնում է Արդարադատութիւնը. նա այնպէս գեղեցիկ է, որ ստիպուած էին ծածկել նորան բրօնզեղէն վերարկուով։ Նորա երեսի վերայ սակաւագիւտ ճարտարութեամբ կենդանադրած է հռոմէական կանանց գեղեցկութիւնը։ Այս պատկերը գերազանց է ամենայն մասամբ։ Դէպի աջ կողմը եկեղեցում, այսինքն սեղանից դէպի արևմտեան դուռը տեսանվում ահագին բրօնզեղէն արձանը բազմեցած սուրբ Պետրոսի, որոյ աջ ոտի

մասը արդէն տրորուած ու մաշուած է շատ համբուրելուց։ Բազմաթիւ մոզայիկեան պատկերներից և արձաններից արժանի են ուշադրութեան, սուրբ Ստեփանոսի խորանի մէջ այն պատկերը, որ ցուցանում է այս սուրբ նախասարկաւագի քարկոծումը։ Աստուածամօր խորանի մէջ (Della Pieta) սեղանի վերայ միակը իւր գեղեցկութեամբ, մարմարիոնեայ արձանախումբ—դործ Միքել Անջելօի, պատկերացնում է Մարիամ աստուածածինը բռնած ծնկերի վերայ մեռած Յիսուսի մարմինը։ Ոչինչ կարող չէ լինել այնպէս կենդանագիր և սրտաշարժ, որպէս այս դործը. ճարտարապետը, ասես թէ, դորա մէջ ինքն գերազանցել է իւրեանից։ Ո՛րպիսի խորին ցաւ նկատելի է ամենասուրբ մօր երեսի վերայ, որ զրկուած էր իւր աստուածեղէն որդուց։ Ոքան նայում ես այս անզուգական արձանախումբի վերայ, նոյնքան էս կամիր նայել նորա վերայ և դու չես յագենալու։ Այնուհետև մի քանդակաւոր դործ, որ պատկերացնում է սուրբ Լեոնը, որ դադարեցնում է Ատտիլային Հռոմի առաջէ. նա մատնացոյց է առնում նորան Պետրոս և Պօղոս առաքեալքը, որ զայրացած էին տիրապետողի յանդգնձեռնարկութեան վերայ։ Ես նկարագրեցի միայն պատկերների և արձանների ամենափոքր մասը այն բազմութեան միջից, որ դտանվում են այդ եկեղեցում, որովհետև բոլորը նկարագրելու համար հարկաւոր կլինէր մի ամբողջ գիրք գրել։ Բացի գլխաւոր սեղանից եկեղեցու մէջ, կան այլ էս 9 փոքր սեղանք։ Սիւների թիւն է 1482։ Սեղանների մէջ առաւել ճոխը և մեծադինը է Գրիգորիանը։ 8 ոլորուն սանդուղներ տանում են դէպի վերին դնացքը, սենեակները և տանիքը, որտեղից տեսանելի է բոլոր քաղաքը։ Մեծ գմբէթը բարձրանում է 332 ոտնաչափ տանիքի (կտուրի) տափարակի վերայ. եկեղեցին կարող է ամփոփել իւր մէջ 54,000 մարդ։

Զգնի նկարագրելու սուրբ Պետրոսի եկեղեցին, պիտոյ է նկարագրել և Վատիկանը, որ ունի անբաժանելի կապ այդ

եկեղեցու հետ։ Սուրբ Պետրոսի եկեղեցուն կից է Վատիկանը, Պապի ապարանքը, որ, ասես թէ կացուցանում է քաղաքի մի առանձին մասը, 20 դաւիթներով և 2100 սենեակներով (10,246 սենեակներ, դահլիճներ, փոխանցութիւնք և խորաններ։ Այս շինուածը ունի մի կատարեալ լաբիւրինթոսի կերպարանք, դա յառաջացած է զանազան յաւելուածոյ շինուածներից շատ դարերի ընթացքում։ Սուրբ Պետրոսի եկեղեցու նախագաւթից, կոստանդիանոս ձիաւոր արձանի մօտից դէպի վերն դնում Scala Reggia, այսինքն արքայական սանդուղքի վերայով. 6 մեծ մեծ երկփեղկանի դուռներ տանում են դէպի գլխաւոր օթեւանը. դէպի աջ, սուրբ Պաւղոսի խորանը. աջ կողմից դէպի Սիքստինեան խորանը. (որ զարդարած է Միքել Անջելոյի ֆրեսկօներով). այդ տեղ տեսանվում են ահեղ դաղաստանը մի պատի վերայ, մարդարէքը, մարգարէուհիքը, աշխարհի ստեղծագործութիւնը, Ադամ և Եւա և այլն, նկարած կամարի վերայ, խորանի շուրջը։ Վատիկանի թեւակողմում դտանվում են մուզէօնը և մատենադարանը։ Գլխաւոր մեծադին բաները մատենադարանի են 25,000 գրչագիր մատեանք, 80,000 հատոր տպածք։ Մուզէում սաքրում կամ սուրբ մուզէօն պարունակում է իւր մէջ հին քրիստոնէական ժամանակների և միջին դարերի յիշատակարանքը։ Մուզէօնը Բիաբամոնտի, պարունակում է իւր մէջ հնութիւնների ժողովման մեծ մասը. դահլիճը Բրաչիո—նուովո ցուցանում է ականաւոր մարմարիոնեայ արձաններ։ Եգիպտական մուզէօնը նշանաւոր է նոյնպէս։ Վատիկանեան մուզէօնի գլխաւոր մասը, անտարակոյս, կացուցանում մուզէօնը Պիո—Կլեմենտինո, որոյ անշինութիւնը սկսուած է Յուլիոս երկրորդի ձեռամբ, և ցուցանում է բոլոր աշխարհի մէջ առաւել նշանաւոր ժողովումը հնութիւնների, որոյ մէջ դտանվում են Հռոմում դուրս փորած (աւելի քան թէ 7000 հատ) արձաններ։ Սոցա մէջ են Պերսէյոս, Լաօկօն, Մելքաֆեր, Անտինուս և Ապողն Բելվեդերեան։ Միւս

օթեւանները են. սրահ դաղանների, պահարան արձանների, սենեակ կիսարձանների, դահլիճ մուզանների. Գրիդորեան մուզէոն Էտրուրեան հնութիւնների, 11 սենեակ, Էտրուրիայի ծովեզերքում դուրս փորած սափորների, սարկոֆագների, տերրակոտաների, կուժերի, անօթների, բաժակների, ոսկի, արծաթի և բրոնզեղէն կերտուածների և արձանների:

Սուրբ Պետրոսի եկեղեցու նկարագրութենից յետոյ, մեք անցանենք դէպի պատմութիւն այն հանդիսաւոր արարողութիւնների մասին, որ կատարուեցան սուրբ Պետրոսի եկեղեցու մէջ Աւագ հինգ շաբաթի օրին և Զատկի տօնին: Հասաւ ժամանակը, երբ պիտոյ էր մեզ գնալ այդ եկեղեցին վասն տեսանելու ոտնալուայի հանդէսը Պապի ձեռամբ և խորհրդաւոր ընթրիքը, որ նա կատարումէ յիշեալ եկեղեցու վերին յարկումը: Եդուարդ Ալքեպիսկոպոսը ուղարկեց մեզ կառքով մի ուղեցոյց Հռոմայեցի իւր դուստրով, որ ճանապարհակից լինէր մեզ դէպի եկեղեցին: Նոքա առաջարկեցին ինձ հագնել ֆրակ և զարդարուիլ պատուանշաններով, եթէ ունէի այդպիսի բաներ, իսկ իմ կնոջս հագնել թուլ սգաւոր հանդերձ, առանց որ և իցէ խայտաճամուկ (բանդերանդ գոյների). ապա թէ ոչ, նա կարող չէր ներս թողուիլ եկեղեցու մէջ: Մեք լցուցինք մեզ տուած պատուէրը և չորեքեանքս ուղեւորուեցանք դէպի եկեղեցին, ուր այն տիկնայից համար, որ ունէին տոմսակներ կարգաւորած էր առանձին տեղ բարձր պատուանդանների վերայ նստարաններով, իսկ ազնուական կարգի այր մարդերի համար առանձին տեղ առանց աթոռների, միւս ժողովուրդը կանգնած էր վանդակապատի միւս կողմում: Թագաւորաղն անձների և դիպլոմատիկական ընկերութեան համար կարգաւորած էին առանձին տեղեր բարձրութեան վերայ: Վերևը գմբէթի չորս կողմով գալերէյումը նկատվումէին հազարաւոր սև սև կէտերոտքա մարդիկ էին, որ զբահաւորուած բինոկլներով զննումէին

ներքևում եղած արարողութիւնքը: Մեր առաջև, դէմ յանդիման նստած էին բարձր ամֆիթատրոնի վերայ 12 կրօնաւորք զանազան կարգերի. նոցա ոտքի տակ սփռած էր մի օթոց (խալիչայ), որոյ վերայ գործած էր խորհրդաւոր ընթրիքի պատկերը: Նոքա կրում էին սպիտակ բրդեայ հանդերձ և մի տեսակ քառանկիւնի սպիտակ գլխներ. նոցա աջոյ ոտը մերկացած էր. ոտնալուայի անօթքը արծաթի էին, ճոխապէս ոսկեզօծած: Շուտով լսուեցաւ թէ Պապը գալիս է. նա զգեստաւորուած էր իւր քահանայապետական հանդերձով, և նորան ընթացակից էին աւելի քան թէ 30 կարդինալք և բազմութիւն արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների: Այս միջոցին կղերիկոսքը, որ կանգնած էին խիտ վանդակապատի միւս կողմում հանդէպ գլխաւոր սեղանին, երգեցին մի երգ այնպիսի ախորժելի ձայնով, որ ամենեցուն վերայ բերեց մի քաղցր յափշտակութիւն մտքի:*) Սկսուեցաւ պատարագը, իսկ գլխի աւարտման պատարագին, Պապը, ինչպէս մեզանում, հանեց վերայից զգեստը և թագը և կապելով մէջքին մի կարճ գոգնոց դուրս եկաւ այն տեղ, ուր նստած էին առաքելական կրօնաւորները: Այս արարողութիւնը կատարուեցաւ այնպէս, որպէս կատարումեն մեր պատրիարգները և եպիսկոպոսները, այն զանազանութեամբ միայն, որ Պապը, յետ լուանալու իւրաքանչիւր կրօնաւորի ոտը, համբուրումէր այս լուացած ոտը: Ոչինչ բան աշխարհիս երեսին, ինչպէս գրած է Ճանապարհորդ Վսեվոլոժսկին, չէ ազդում այնպիսի զօրաւոր տպաւորութիւն, որչափ կարողութիւնը խոնարհութեան կերպարանքի տակ: Հին ժամանակներում քաջալունքը, մեծամեծ թագաւորները և իմաստունքը հեթանոսութեան չգիտէին խոնարհութիւն. այս առաքինութիւնը առաջին անգամ ծնած է Բեթլէհեմեան այրի մտրում Մարիամ կուսի Որդու հետ, և արդարև այս առաքինութիւնը նախա մեծար կերպով աստուածեղէն է: Իւրաքանչիւր առաքեալ, յետ

*) Այս կղերիկոսները ներքինիք են (кастраты), որպէս վկայումէ պ. Վսեվոլոժսկին իւր գրքի մէջ, երես 109.

լուանալու նորա աջոյ ոտը, ստանումէր գործակալից—դանձապետից երկու մեդալիոնք ոսկեղէն և արծաթեղէն, իսկ կարդինալից մի փունջ ծաղիկ։ Այս սրբազնագործների երեսների վերայ կենդանագրվումէր ամենասորին երկիւղածութիւն, և նոքա, ինչպէս թվումէր, ցաւումէին առ ի սրտէ, տեսանելով թէ որպիսի ցածութեամբ խոնարհվումէր նոցա առաջև Յիսուսի Քրիստոսի փոխանորդը։ Երբ որ Պապը արդէն լուացած էր երեք կամ չորս կրօնաւորների ոտքը, իմ ուղեցոյց ընկերը ասաց ինձ թէ մեզ պարտ էր օգուտ քաղել ժամանակից և կանուխ վեր ելանել դէպի վերին յարկը, ուր պիտի կատարուէր խորհրդաւոր ընթրիքը. ապա թէ ոչ, անկարելի կլինէր մեզ տեղ գտանել այն տեղ, զկնի ոտնալուային, որովհետև եկեղեցու մէջ այս միջոցիս (ինչպէս հրատարակեց յետոյ լրագրերը) կանգնած էին աւելի քան թէ 50,000 մարդ. իսկ դահլիճը, ուր պիտի կատարուէր խորհրդաւոր ընթրիքը, կարող էր ամփոփել իւր մէջ ոչ աւելի քան թէ 4 կամ 5 հազար մարդ։ Այս պատճառով շտապեցանք մեք թողուլ մեր տեղը, և իմ կնոջ և հռոմայեցի կնոջ հետ միասին գնացինք դէպի այն կողմը, որ տանումէր դէպի վերին յարկը. բայց աւաղ. ճանապարհին ձգած էր Պապի թիկնապահ զինուորների շղթայաշարը (ցեպ) և այդ տեղ կանգնած շտաբ—օֆիցերները թողում չէին ոչ ում անցանել դէպի միւս կողմը. բայց բաղմութիւնը աճեցաւ ահագին թուով և յառաջացաւ նեղուածք և ճնշումը։ Թէև այս տեղ առաջնակայ էին զանազան տեսակ օսարերկրեայ երևելի աղնուականք փառաւոր զգեստներով, պատուանշաններով և աստղերով զարդարուածք, սակայն և դոցա չկար համարձակութիւն սահմանից դուրս գնալ։ Այս տեղ մի երևելի տիկին ժողովրդի խուռն բազմութեան մէջ, փոքր ինչ որ շնչասպառ առնէին, և նորան դուրս տարան գրեթէ կիսամեռ։ Վերջապէս յաջողեցաւ սորան ու նորան ճանապարհ բանալ, դոցա հետ և մեք կարողացանք անց կենալ դէպի միւս կողմը, և ամենեքեանքս միասին վեր ելանք մի լայն մարմարիոնեայ սանդուղքով դէպի վերնայարկը և մտանք մի մեծ մարմարիոնեայ դահլիճի մէջ, ուր նոյն իսկ 12 առաքեալների և Պապի համար պատրաստած էր սեղան։ Երբ որ Պապը ոտնալուայի արարողութիւնը լցուցել էր, նոյնպիսի զգեստաւորութեամբ, որպիսի էր, այսինքն ժամարարի շապկով ու ուրարով, ընկերակցութեամբ նոյն 12 առաքեալների, ներս մտաւ դահլիճը։ Այս տեղ նոյնպէս կարգաւորած էին նոյն աստիճանակարգով առանձին տեղեր ժողովրդի իւրաքանչիւր կարգի համար։ 12 կրօնաւորներ բռնեցին իւրեանց տեղերը աթոռների վերայ սեղանի չորս կողմով, իսկ Պապը ոսքի վերայ կանգնած, սպասաւորումէր նոցա. նախ օրհնեց նա զատկական դառը, իսկ յետոյ ձեռնալուայի ջուր մատոյց առաքեալներին և սկսաւ պաշտօն մատուցանել ընթրիքի վերայ առ ի յիշատակ այս խօսքերիս, և որ մեծն է 'ի ձէնջ, եղիցի կրտսերն ամենեցուն, վասն զի որ բարձրացուցանէ զանձն խոնարհեսցի, իսկ որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրասցի։ Կարդինալները և Եպիսկոպոսները երկար շարքով արծաթի ամանների և սկաւառակների մէջ բերումէին արգանակ (սուպ) և զանազան տեսակ խորոված և եփած ձուկն և մատուցանումէին Պապին; որ և իւր կողմից մատուցանումէր 12 առաքեալներին, որ ամենևին չձանձրանալով հանգիստ և անխռով ուտումէին։ Այս արարողութիւնը աւարտած, Պապը բաղմեցաւ իւր դահի վերայ և սկսաւ ծանր ու լսելի կերպով կարդալ աւետարանի այն գլուխը, ուր Փրկիչը կատարած էր խորհրդաւոր ընթրիքը։ Աւետարանի ընթերցուածը աւարտած, Պապը վերկացաւ տեղից և սկսաւ օրհնել ժողովուրդը, որ նոյն բոպէին ագահութեամբ արձակուեցաւ դէպի սեղանը, որ ձեռք ձգէր մի կտոր ձուկն կամ հաց, և այս տեղ յառաջացաւ մի այնպիսի նեղուածք և ճնշումն, որ

մեք ստիպուած էինք շուտով հեռանալ և վերադառնալ տուն:

Զկնի Աւագ հինգշաբաթուն հասաւ Զատկի կիւրակէի տօնը: Այս օրս չէր այնպէս համեստ, խաղաղական, ինչպէս առաջինը: Կիւրակէի 10 ժամուն առաւօտուն մեք գնացինք սուրբ Պետրոսի եկեղեցին, նոյն կարգով և զգեստով, ինչպէս առաջին անգամը, և տեղաւորուեցանք մեր տեղակարգումը: (Հռոմէական ծէսը պահանջումէ, որ Պապի սրբազնագործութեան միջոցին բոլոր ժողովուրդը, արք և կանայք հագնուած լինին սև հանդերձով:) Այս օրս, եկեղեցու մէջ տեղումը, դռնից մինչև սեղանը բռնած ունէին ճանապարհ Պապի թիկնապահ զինուորները (գվարդիա), որ բաղկանումէին քանի մի հազար սոլդատներից, շտաբ և օբէր—օֆիցերներից, բոլորովին հանդիսաւոր ձևով, երկու շարք ամէն մի կողմում, իսկ մէջ տեղում զօրապետները: Փոքր ինչ յետոյ երևեցաւ Պապը դռան առաջև. նորա մուտքը եկեղեցու մէջ այս անգամ չէր այնպէս, որպէս Աւագ հինգշաբթի օրին: Նորան կրումէին աթոռով ուսերի վերայ վեց շվէյցարներ (ծառայք), աթոռն զարդարած էր ոսկով և պատուական քարերով և ամրացուցած էր պատգարակի վերայ. նորա չորս կողմը պատած էին կարդինալներ և եպիսկոպոսներ. նորան ծածկումէին երկու կողմից երկու լայն թևեր ջայլեման (ստրօուսի) սպիտակ փետուրներից, այնպէս, որ նորին սրբազնակատարութիւնը երևումէր որպէս թէ փակած սրբարանի կամ ուխտի տապանակի մէջ: Այս օրին ունէր նա գլխի վերայ երեքպատիկ փայլուն թագ. չորս հասարակ թագեր և երկու եպիսկոպոսական սաղաւարտներ տանումէին նորա ետևից խորանապետքը. իւր պատմուճանի մէջ նա նման էր մի արձանի, որ կենդանանումէր միայն, երբ որ նա բաշխումէր իւր չորս կողմը օրհնութիւն հաւատացեալներին: Երբ որ նա երևեցաւ եկեղեցու դրան սեամի (շէմքի) վերայ, գերագոյն զօրապետը,

կանգնած զօրախմբի մէջ տեղում, հրաման արեց բարձրաձայն զինուորներին՝ և նոքա պատիւ տուեցին Պապին իբրև թագաւորի. որովհետև նա այսօր մնանումէր եկեղեցի ոչ իբրև հռոմէական եպիսկոպոս, այլ իբրև թագաւոր: Նորան ցած դրեցին գլխաւոր սեղանի առաջև, ուր նա կատարեց մի կարճառօտ աղօթք, իսկ յետոյ հանդերձը փոխած, սկսաւ նա նուիրագործել: Սրբազան սպասաւորութեան միջոցին նորա ձայնը հազիւ թէ հասանումեր մեզ ժողովրդի բազմութեան և մեծ հեռաւորութեան պատճառով: Իսկ երբ որ նուիրագործութիւնը հասաւ այն տեղին, ուր Պապը արտասանումէր—է «ԷՔՕ-ԼԷՕ» «ԷՔՕ-ԼԷՕ», այնուհետև զօրապետը բարձր ձայնով հրաման տուեց զինուորներին և սոքա հրացանները ցած թողած և գլխարկները վեր առած ծունր խոնարհեցուցին, իսկ յետոյ նշանացի արեց նոցա վեր կենալ և կարգաւորուիլ առաջին կերպով: Երբ որ պատարագը աւարտուեցաւ, մեր ուղեցոյցը ասաց մեզ թէ պիտոյ էր դուրս գնալ եկեղեցուց և կանգնիլ Վատիկանի հրապարակում եկեղեցու ճակատի հանդէպ, որ կարողանայինք տեսանել, երբ որ Պապը օրհնելու էր ժողովուրդը վերնայարկի պատշգամից, ուր կատարվումէր խորհրդաւոր ընթրիքը: Այս պատճառով մեք ամենեքեանքս շտապով դուրս եկանք եկեղեցուց և դադարեցանք հրապարակումը, որ յետոյ լցուեցաւ ժողովրդի բազմութեամբ: Բոլորեցուն աչքը դարձուցած էին դէպի պատշգամը (բալկոնը), ուր պիտի երևէր Պապը: Փոքր ինչ միջոց սպասելուց յետոյ, սկսան երևիլ պատշգամում կարդինալներ և եպիսկոպոսներ, իսկ յետոյ նոյն իսկ Պապը նոյն գահի վերայ: Ամենեքեան ծունր խոնարհեցուցին, 'ի հարկէ և մեք, ինչպէս միւսերը: Թագաւորեց խորին լռութիւն: Պապը սկսաւ կարդալ, ինչպէս հաւանական է, աւետարան. նա արտասանումէր խօսքերը այնպէս բարձրաձայն, որ նորա ամեն մի խօսքը հատիկ հատիկ հասանումէր մեր ականջին.

ընթերցուածից յետոյ նա սկսաւ երեք անգամ խաչակնքել բազմութիւնը և բարձրացրեց ձեռները դէպի երկինք, կարդալով Աստուծոյ օրհնութիւնը և արտասանելով Urbis և Orbis: Սրանից յետոյ բոլոր ժողովուրդը հոգեպայծառ ողջունական ձայնարկութեամբ սկսաւ հնչեցնել և լցուցանել օդը, դդակներ վեր վեր ձգելով օդի մէջ, և շարժելով թաշկինակները աղաղակումէր Vivat (կեցցէ՛)։ այս բոլորէս սկսաւ թնդանօթաձգութիւն սուրբ Անգելոսի բերդից և Հռոմի բոլոր եկեղեցիներից հնչեցաւ զանգակների ձայնը։

Նոյն օրի երեկոյին ճրագներով լուսաւորուեցաւ սուրբ Պետրոսի եկեղեցու գմբէթը։ Ժողովուրդը կանուխ, երեկոյեան պահուն սկսաւ հեղեղի պէս թափուիլ Վատիկանի հրապարակի վերայ, ուր երաժշտութիւն կար։ մեք նոյնպէս եկանք այս տեղ իւր ժամանակին։ Ինն ժամուն, յանկարծ եկեղեցու ահագին գմբէթը և սիւները լուսաւորուեցան ճրագներով, որ կարելի էր համարել մի տեսիլք կամ առ աչք բան։ մանաւանդ թէ փառաւոր էր խաչը գմբէթի վերայ, վառուելով և շողշողելով, որպէս թէ նորա վերայ շաղ էին տուած գոհարներ (բրիլիանտներ)։ Տեսարանը փառաւոր էր։

Միւս օրին քաղաքից դուրս որոշած էր ճրագալոյց և հրաւէստութիւնք (ֆէյերվերք)։ Եղուարդոս Ալքեպիսկոպոսը ուղարկած էր երկու ձրի տոմակ նոյն խակ ուղեցուցով, որոյ հետ միասին և ուղևորուեցանք մեք հանդիսակատարութեան տեղը, ուր եկաւ և սրբազան հայրը երկու կրօնաւորներով, մանաւանդ որ այս հանդիսակատարութիւնը լինումէր ի պատիւ Պապին։ Մեր համար, որովհետև ունէինք տոմակներ, որոշած էր պատուաւոր տեղ աթոռներով։ Բոլոր քաղաքը խռնուեցաւ այս տեղ։ Մութ դիշեր էր։ Մեր հանդիսակաց կողմում, հրապարակի վերայ յօրինած էր վրան ճրագալուցի և հրաւէստութիւնների համար։ Հնչումէին երաժշտական գործիքը։ Երբ որ

մթացաւ, յանկարծ դաղով լուսաւորուեցաւ բոլոր վրանը և կերպաւորուեցաւ մի ահագին պապական թագ նոյն խակ կրակից, վերնագրով „Պապ Պիոս 9-դ. ապա սկսան արձակել բակետներ։ Հրաւէստութիւններից առաւելապէս արժանի էին ուշադրութեան դաղեղէն թռչուններ, ձուկներ և օձեր, որ թռչում էին մի կողմից դէպի միւսը օդի մէջ թռռակուռների (մավթուլների) վերայ, որ ի հարկէ անտեսանելի էին գիշերով։ Այս բոլորս երևումէր մի կախարդական բան։ Չէ կարելի նկարագրել մանրով այն հոգեպայծառութիւնը և զարմացումը, որ ազդեցին մեր վերայ այդ հրեղէն նիւթերը, որ նեսի պէս թռչումէին մի ծայրից դէպ ի միւսը։ Հռոմայեցիք և այժմ կորուսած չեն ճարտարապետական հնարագործութիւնքը իւրեանց նախնիքի։

Միւս երեկոյին որոշած էր տօնախմբութիւնը Կոլիզէյումի (Վեսպասիանու ամփիթեատրօնի) մէջ։ Այս տեղ կար երաժշտութիւն, հրաւէստութիւնք և լուսաւորութիւն բենգալեան հրով։ Այս տօնախմբութեանը մասնակից չէին հոգևոր անձինք, որովհետև դա էր բուն աշխարհական։ Մեք ուղևորուեցանք դէպ ի Կոլիզէումը ունելով մեր հետ մեր ուղեցոյց հռոմաեցին իւր դստերով։ Այն տեղ, ուր Հռոմէական կայսրների օրերում թափուած է այնքան սրամարտիկների (գլադիատորների) արիւն հասարակութեան զբօսանքի համար, մեք ստանումէինք այժմ հաճութիւն ըսելով մի գեղեցիկ նուագածութեան ձայներ և հիանալով փառաւոր հրաւէստութիւնների վերայ։ Այն տեղերը, ուր մի ժամանակ նստած էին մօտ հարիւր հազար մարդ, ականատես լինելով գաղանների պատերազմին գլադիատորների հետ, այժմ լուսաւորվումէին բազմագունեան բենգալեան հրով, որ իւր կախարդիչ լոյսը ձգելով պատերի աւերակների և նստարանների վերայ, տալիս էր դոցա մի թովիչ գեղութիւն։ Մինչև խորին գիշերը տևեց այս ժողովրդական զուարճութիւնը։

հասարակութիւնը ցրուեցաւ դրեթէ 12 ժամին կէս գիշերի։ Կոլիզէումը է մինը ամենահսկայական շինուածներից աշխարհիս վերայ։ Նորա մնացորդքը զարմանք են բերում մարդու վերայ, որպէս և սասանութիւն, եթէ յիշումենք նորա մէջ եղած սուսերամարտները գազանների հետ։ Վեսպասիանոսը հնազանդեցնելով իւր իշխանութեան ներքոյ Հրէաստանը, գործ դրեց 12,000 գերիք, այս ամփիթէատրոնը կառուցանելու համար. բայց Տիտոսին, որ բնաջնջ արեց Հրէայքը, պահուած էր վերջ հասուցանել այդ շինուածը։ Նա նուիրեց այս շինուածը հռոմէական ժողովրդին և բացեց դորան հանդիսաւոր խաղարկութեամբք։ 500 առիւծք, վագրք և փիղեր դուրս բերուեցան թատրոնի հրապարակի վերայ, կեսարի և նորա ժողովրդի զբօսանքի համար. 3000 սրամարտիկներ ուրախութեամբ թափում էին իւրեանց արիւնը, խառնելով դորան գազանների արիւնի հետ։ Այս պատերազմը տևեց 100 օր։ Դիոկլետիանոսը նոյնպէս արձակումէր վայրենի գազաններ գլադիատորների վերայ, և վերջին ժամանակներում քրիստոնեաների արիւնը գետի պէս թափուած է Կոլիզէումի մէջ։ բայց Դիոկլետիանի և Տիտոսի վերայ ծափահարումէին 100,000 հանդիսականք և դոցա հետ միասին առաջնակայ դատուած վեստալեան կոյսեր։

Պիտոյ է մի փոքր աւելի նկարագրել այս երևելի շինութիւնը, առանց որոյ չէ կարելի ունիլ լիակատար ծանօթութիւն այն զարհուրելի հեթանոսական թէատրոնի վերայ, որ հռոմայեցիք իւրեանց զուարճութեան համար հնարել էին թափել նորա մէջ այնքան արիւն գլադիատորների (սուսերամարտիկների), նա մանաւանդ անմեղ քրիստոնեաների, որք չէին յանձն առնում ուրանալ իւրեանց ճշմարիտ հաւատը։ Անգլիացի Եդենեայ Տուր, իւր գրքի մէջ՝ անուանեալ Կատակոմբի, կամ վէպ առաջին ժամանակի քրիստոնէութեան, որ հրատարակուած է տպագրութեամբ Մոսկվայում 1869 թուին, երես

239—247, նկարագրում այս Կոլիզէի մասին այսպէս։,, Այժմ էս տեսանվումեն այս ահագին մեծութեամբ հոյակապ շինուածքը լայն կամարներով, երկայն անցքերով (կորիդորներով) և բարձր աստիճաններով, որք տանումեն վերը ամփիթէատրոն անչափելի բարձրութեամբ. այս ամենայն զարմանք է բերում ճանապարհորդին։ Հազիւ հաւատումէ նա իւր աչքերին, զարմանալով ձգումէ նա իւր հայեացքը այս ահագին շինութեան վերայ, որին նմանը—մեծութեամբ և գեղեցկութեամբ հազիւ թէ լինի բոլոր երկրագունդի վերայ։ Վեսպասիանոսը և Տիտոսը, մինը միւսից յետոյ գործ դրին անհամար գանձ սորա կառուցանելու համար. ճարտարապետութիւն Կոլիզէյի ամփոփումէ իւր մէջ գեղեցկութիւն ձևի Յունաց, այլ և Եգիպտացոց և Ասորոց իւր ընդարձակ և մեծաշուք կերտուածներով։ Իւր ահագին մեծութեան պատճառով ստացաւ նա անուն Կոլիզէյի, կոլոս, ՝ի վիթխարի։ Արդարև՝ այսքարեայ վիթխարին բարձրութեամբ միայն կարող է յետ մնալ Եգիպտական բուրգերից, իսկ մեծութեամբ չունի նա իւր նմանը։ Կոլիզէյին, որպէս և բոլոր Յունաց—Հռոմէական շինութիւնքը, ունի կիսաբոլորակ ձև։ Նորա շրջապատումը կային ապարանքներ Հռոմայ կայսերների. կաղարմէք դինուորների. տուներ, ուր բնակվումէին գլադիատորներ. ստորերկրեայ դեռնափորներ, որոց մէջ պահումէին գազաններ. բաղում խանութներ, ուր վաճառումէին գործիք տանջանաց. հեթանոսական տաճար. դատարան՝ որոյ առաջև դատումէին քրիստոնեաներին. քար՝ որոյ վերայ հրատարակվումէին դատակնիքներ մահու։ Կոլիզէյի մուտքի առաջև կանգնած էր հսկայամարմին արձան Ներոնի։ Մեզ դժուար է նկարագրել Կոլիզէյին. Նորան հարկաւոր է տեսանել, որ դուք կարողանաք հասկանալ բոլոր նորա գեղեցկութիւնը, մեծութիւնը և ընդարձակութիւնը։ Մէջ տեղումը կայր բոլորակաձև ասպարէզ, ՝ի հրապարակ, որոյ վերայ լինումէին պատերազմներ մարդկանց գազանների հետ։

Շուրջ ասպարիզի վասն ապահովութեան հանդիսականաց դաղաններից՝ բաժանած էր վանդակներով, իսկ վանդակների միւս կողմերում տափարակ քարեր, որոց վերայ նստում էին հանդիսականները կիսաբոլորակ մի կարգ միւս կարգի վերև մինչև ահագին բարձրութեամբ։ Ցածի կարգումը, որպէս և այժմեան թէատրոններում, կային լաժէք պատուաւոր անձների համար, վերև տեղաւորվումէր ստորին կարգի ժողովուրդը։ Քանի մի մուտք, մեծամեծ կամարներ և նոյնպիսի անցքեր (կորիդորներ) շրջապատումէին ամեն կողմից ամփիթէատրոնը։ Ահա թէ որպէս լինումէր այս պատերազմը, և որպէս տեղաւորվումէին հանդիսականք Կոլիզէյումը ներկայացման օրը։ Արեգակի ծագելու ժամանակը, երբ ճառագայթները ոսկեզօծումէին արևելեան պատեր Կոլիզէյի և ընկնումէին նորա ներսի կողմը կամարների միջով, յայնժամ դերիները բերումէին կարմիր պարաններով կապած ընտանի դաղաններ. միւս վայրենի դաղաններ, որք բերած էին հեռաւոր տեղերից, զարդարած ծաղիկներով վանդակներում, բերումէին մեծ կառքերով։ Կառքերից յետ գնումէին կառավարիչ դաղաններին աֆրիկացի դերիները։ Շուտով գինի նոցա դալիս էին զինուորների դունդքը, որոց պարտաւորութիւնը էր կատարել հրամանները կառավարիչների և վերակացուների հանդիսական արարողութիւնների։ Մերձ Ներոնի արձանի և Հռոմի ճանապարհի վերայ խուռն բազմութիւն խաժամուժ ամբոխի ժողովվումէր արևածագից և սպասումէր բոպէին, երբ կ'բացուին դուռները ցիրկի։ Սակաւ առ սակաւ առաւօտից, հեռուից լսելի էր խուլ ձայներ ամբոխի, որ դալիս էր ամեն կողմից Հռոմի՝ ուղղութեամբ դէպի Կոլիզէյ, որ և սա կլանումէր իւր մէջ այս անհամար բազմութիւնը։ Ցայտնիէ որ 100,000 մարդիկ կարող էին առանց ճնշուելու տեղաւորուիլ Կոլիզէյի ամֆիթէատրումը։

Նախ վերակացուք և կառավարիչք ներս էին մտնում Կոլիզէյումը. նոքա մտադրութեամբ զննումէին ամեն ինչ և

ամեն տեղ — թէ արդեօք բոլորը կարգաւոր է և ապահովեն վանդակները պատսպարող հանդիսականները վայրենի դաղաններից, այլ և թէ առաջը ծածկումէ ամեն տեղ ասպարէզը։ Ասպարէզը (արէնա) ցանումէին աւազով այն պատճառով, որ արիւնը չկարողանայ հեղեղուիլ։ Աւազը իսկոյն ծծումէր իւր մէջ թափած արիւնը, և հարկաւոր էր միայն ցանել նորան և հաւասարել, որ ոչնչանային բոլոր նորա հետքը։ Կալիգուլան և Ներոնը հրամայումէին ցանել ասպարէզը կարմիր աւազով, որոյ վերայ ամենևին չէր երևում արիւնը։ Կոլիզէյի վերին ծայրումը կանգնեցուցած էին ուղղահայեաց դերաններ, որոց վերայ ամրացած կային նաւի պէս առագաստներ մեծագին կերպասներից և մեքենայի զօրութեամբ ծածկումէին նորանով առաստաղը ապահով պահելու համար հանդիսականքը արեգական տաքութենից և անձրևից։ Ներոնի ժամանակը առաստաղի վերայ նկարած էր նա ինքն, որ կառավարումէր արեգական կառքով աստղալից երկնքի վերայ։ Տիտոսի ժամանակն առաստաղը բաղկանումէր կերպասեայ և ոսկոյ գործուածներով կարած զանազան դոյներով։ Երբեմն այս կերպասը լինումէր պորփիրի դոյն, որոյ մէջ արեգական ճառագայթները անցնելով ոսկեզօծումէին պատերը Կոլիզէյի և տալիս էին կախարդական դոյն շինութեանը և նորա մէջ նստած հանդիսականներին։ Վարդերանգ քնքոյշ նշոյլները անկանումէին ասպարիզի արձանների, աշտարակների, և ապակեայ բալիստրադների (պերիլա) վերայ, և երկպատկումէին նոցա գեղեցկութիւնը. Մինչ առաստաղը կարգաւորումէին, ստորերկրումը բազմութիւն դերիների ձեռնարկումէին ուրիշ պատրաստութիւններին. նոքա ներս էին թողում դաղաններ դեռնափոր ճանապարհներից դէպի քարեայ դաղանանոցները, որք շինած էին ցիրկի տակը, որ տեղից, երբ նշան էին տալիս, բացվումէին դռները և դուրս էին թողում նորանց ասպարիզի վերայ։

Երբ վերջին պատրաստութիւնները վերջանումէին, և ահա լսվումէր խուլ աղմկի ձայն մօտ և մօտ տարածութենից։ Նա նմանումէր ովկիանոսի փոթորկի ձայնի կամ մօտեցող մրրկի. այս էր անհամար բազմութիւն ամբոխի, որ ընթանումէր ամեն բլուներից Հռոմի դէպի Կոլոզէյի։ Նոքա ներսէին թափվում կամարներում ներքին յարկի, բարձրանումէին լայն աստիճանների վերայ և լցնումէին լայն կօրիդորները ամֆիթէատրոնի։ Շուտով այս հաղար, այս տասը հաղար հանդիսականք տեղաւորվումէին վերևից մինչև ցած։ Ցիրկի ներսի կողմը բաժանած էր երկու մասը—մինը ցած, միւսը բարձր. ցածի մասը դարձեալ բաժանած էր երեք դասակարգով. առաջինը կոչվումէր օրկէստր և նշանակած էր երևելի անձանց—սենատօրների և մագիստրատուրի համար. երկրորդ դասակարգը—հեծելազօրքի համար և երրորդը ժողովրդի համար, ՝ի Հռոմայի քաղաքացոց, որք չէին պատկանում սենատօրներին և հեծելազօրքերին։ Սենատորները տեղաւորվումէին ամենից մօտ ասպարիզի. լաւ մասումը այս տեղի արևելքի կողմը ցիրկի դասնվումէր տեղի կայսեր. նորա աթոռը զարդարած ոսկով և փղոսկրով բազմած էր բարձր տեղում գեղեցիկ զարդարած ամպհովհանու տակ. զինի նորա տեղաւորվումէին վեստալեան կոյսեր և քուրմեր։ Վերի ծայրի մասումը դասնվումէին Հռոմի ստորին կարգի մարդիկ հասարակ աթոռների վերայ։ Բարձր գալերէյներ բաժանումէին աթոռների կարգերը, որոց վերայ նստումէին կանայք։ Վերի յարկի մի մասումը տեղաւորվումէին երաժիշտներ, որոց նուագարանները և թմբուկները ողևորումէին պատերազմողներին և խրախուսումէին յաղթողներին։

Երբ որ ամեն ինչ պատրաստի էր, երբ որ երաժիշտները բռնած ունէին իւրեանց տեղերը, յայնժամ յայտնվումէին վեստալեան կոյսերը, որոց բերումէին դագաղանաման նստարանների վերայ։ Հնչեան և մռնչեան դազանների հնչեցնումէին ցիրկը

և նշանացի էին անում պահապանները թէ դազանները արդէն պատրաստ են ստորերկրումը և անհամբեր սպասումեն բուսէական արձակման. յայսմ իսկ ժամանակի ամենեքեանք իւրեանց աչքերը դարձնումէին դէպի կօրրիդորը, որ դուրս էր ձգվում Ակվիլենու սարի վերայ։ Այս տեղից մուտք էր գործում կայսրը իւր բազմաթիւ պալատականներով, ուղղելով իւր ընթացքը դէպի իւր նշանակած տեղը։ Բոլորեքեան ոտքին էին կանգնում։ Անհամար հանդիսականք սկսանումէին շարժիլ և լինումէր ծափահարութիւն և գոչումն—,,ՀԷՅՊԷ ՀՐՈՄԱՆՈՍԱՆ ԱՄԵՆԻՑ, ԱՄԵՆԱԲԱՂԴԱՍԱՐԸ, ՅԱՂԵՍԱԼԵՆ ԴԷՂ ՀԵԱ. ԴՈՒ Ի՛ՅԱՂԵՍ ՅԱՆԻՊԵՆ։'' Բարձրաձայն արձագանգ կրկնվումէր աղաղակներով խլացուցիչ զօրութեամբ. որպէս ամպերի գոռուց այնպէս գոռումէին այս կօլոզէյի ընդարձակ շինութեան մէջ։ Վայրենի դազանները վախեցած այս ձայներից, մնումէին լուռ իւրեանց դազանանոցների մէջ։ Մռնչեան դազանների դադարումէր և երեսպաշտները ասումէին թէ,,դազանները իսկ զգումեն ներկայութիւնը աստուածեղէն կայսեր, երկիրպագանումեն նորան և մասնակցումեն ընդհանուր ուրախութեանը, որ նա ազդումէ։''

Երբ որ ասպարէզը հեղեղվումէր մարդերի և դազանների տաք արիւնով, բարձրացուցանելով իւր գոլորշին, յայնժամ անուշահոտ ցօղը թափվումէր և մաքրումէր օդը։ Սորա համար շինած էին բազում դաղտնի հնոցներ, որոց մէջ գերիները եռացնումէին հոտաւետ խոտեր։ Գոլորշիք անց էին կենում ասպարէզում բազում խողովակներով կամ ծակերով, որ շինած էին արձաններում և թափվումէին անուշահոտ կաթիլներով հրապարակի վերայ, ոչնչացնելով վատ հոտը արիւնի։

Սակընթաց օրը, երբ որ միւս օրը պարտ էր լինել հանդիսականարութիւնը և ներկայացումն ցիրկումը և դատապարտեալ քրիստոնեայքը պարտ էին ենթարկուիլ մահու, բանտը, ուր նոքա տանջվումէին ցուցանումէր մի առանձին տեսարան։

Քրիստոնեայք, ոչ թէ չէին անձնատուր լինում փոքրոգի ահուդողի կամ յուսահատութեան, այլ յայտնումէին անկեղծ արիութիւն և լուսապայծառ ոգևորութիւն։ Նոքա ժողովվումէին խումբ խումբ, խօսակցումէին միմեանց հետ և բազմիցս միաձայն երգումէին սաղմոսներ։ Նախընթաց օրը մահուան՝ նոյն իսկ դահիճները մեղմանումէին նոցա վերայ և թոյլ էին տալիս նոցա հանգիստ մնալու։ Երեկոյն՝ մահուան նախընթաց աւուր, կայր սովորութիւն տալ դատապարտեալներին ընթրիք։ Այս ընթրիքը լինումէր շատ հարուստ և ճոխ։ Ժողովուրդը, այլ և բարեկամներ դատապարտեալների ներս էին թողվում բանտումը։ Հեթանոսները գալիս էին նայելու լոկ հարցասիրութեան համար այն կալանաւորների վերայ, որոնք միւս օրը առաւօտեան պարտ էին դուրս գալ ասպարէզ պատերազմելու գազանների հետ, որպէս նոքա ասումէին, իսկ մեք պարտիմք թարգմանել այսպէս—պարտ էին տալ նոցա պատառելու գազաններին։ Որպիսի՞ պատերազմ կարելի է ամէհի գազանների և և անզէն մարդերի մէջ, կամ թէ մի կողմից ծերերի, մանուկների և կանանց և միւս կողմից առիւծների, վագրերի և ձիերի մէջ։

Երբ որ տալիս էին ընթրիք բանտումը և քրիստոնեայքը նստումէին սեղանի մօտ հանդարտ, խոժոռ դիմաք ընկղմուած մտածութեան մէջ, որպէս և պիտոյ է լինիլ մարդուն, որին միւս օրն պարտին դատապարտել մահու, յայնժամ ներկայ գտանուող օտար անձինք սկսումէին առնել իւրեանց նկատողութիւնքը. ոմանք նոցանից ծիծաղումէին, միւսերը մատնացոյց էին անում փոքրահասակ քրիստոնեաների վերայ, զարմանումէին նոցա հանդարտ հոգւոյ վերայ, ափսոսումէին նոցա մանկութեան և մոլորութեան վերայ։ Բայց այդպիսիները շատ սակաւք էին։ Մեծ մասը հանդիսականների նայումէին նոցա վերայ թշնամաբար և բարձր ձայնիւ յայտնումէին

իւրեանց թշնամանքը և անարգանքը ասելով—նոցա չէ պարտ խղճալ, նոքա քրիստոնեայք են և երեսպաշտ, նայենք վաղը թէ դոքա որպէս կ'սարսափին, այժմ միայն պարծենումեն իւրեանց աներկիւղութեան վերայ։

Այսպէս՝ միւս օրը դատապարտեալները անտրտունջ դուրս էին գալիս ասպարէզի վերայ և լինումէին զոհ ամէհի գազաններին, իսկ հռոմայեցի հեթանոսները ծափահարումէին և զուարճանում։ Վերջացնում եմ այս տխուր նկարագրութիւնը և անցանում եմ դէպի իմ նկատողութիւնները Հռոմ քաղաքի վերայ։

Այս ցերկից դէպի ձախ գտանվումէ յաղթական կամարը Կոստանդիանոսի, որ շատ լաւ է մնացած մինչև այժմ (կառուցած 312 թուակ.) 66 ոտնաչափ բարձրութեամբ և 76 ոտն. լայնութեամբ։

Երբ որ այս բոլոր ուշնախմբութիւնքը վերջացած էին, ես առաջին պարտականութիւն համարեցի ինձ՝ զննել Հռոմի արժանայիշատակ հնութիւնքը։ Վասն թեթևացնելու դժուարութիւնքը, որոց կարող էի հանդիպել այս մասին, և վասն մի ըստ միոջէ բացատրելու այն ամենայն բաները, որ մեք կարող էինք տեսանել, Եդուարդոս արքեպիսկոպոսը որոշեց մեզ իբրև առաջնորդ Սիսիթարեան զիտնաւոր կրօնաւորներից մինը, նոյն իսկ Լ՚Ամոնոնէլ հայրը, որոյ հետ ես ծանօթացած էի սրբազան տիրոջ տանը, որ և գտանվումէր այն 12 առաքեալ—կրօնաւորների մէջ ոտնաբուայի օրին։ Այս կրօնաւորը չէր այժմ կրօնաւորի պէս հագնուած, այլ աշխարհականի պէս. այսինքն կրումէր սերտուկ և բոլորակ շլեապոյ (այսպէս վարվումեն և այլ արեղայք այն տեղի) ուղեցոյց եղաւ մեզ դէպի ամենայն տեղ։ Սկսանենք մեր նկարագրութիւնը Հռոմից։ Դա ունի 180,000 բնակիչք, դոցա կարգում և 4500 հրէայք, շրջապատած է Ս-ԵԼԼԻՈՍ կարմրագոյն պատերով, հանդերձ բազմաթիւ աշտարակներով։ Առաւել մեծագոյն մասը քաղաքի ղրած է տիբեր

գետի ձախ, արևելեան եզերում, հին Հռոմի տեղում, իսկ հարաւային և արևելեան մասները քաղաքի անապատ են և գլխաւորապէս պարունակում են իւրեանց մէջ հին ժամանակներից մնացած աւերակները: Դեղի՝ Տիբերը, երը որ մտանում քաղաքի մէջ, ունի 192 քայլաչափ լայնութիւն: Հռոմում հաշվվում են 506 փողոցներ և 275 խոտոնական փողոցներ (պերէուլոկ). 11 թաղեր, 290 եկեղեցիք, 89 ապարանք: Մի քանի ժամի ճանապարհ մինչև Հռոմ, երևում սուրբ Պետրոսի եկեղեցու գմբէթը, որ սարի պէս գլուխը բարձրացնում հորիզոնի վերայ: Նոյն իսկ Հռոմի մօտ ճանապարհը տանում Տիբեր գետի վերայ շինած Պոնտե—Մոլլէ կամրջի վերայով. Վիա Քլոմինա տանում դէպի հարաւ առ դարպասը Պորտա դել Պոպոլո, որոյ մօտ ձախակողմում կառուցած է եկեղեցի Սանտա Մարիա դել Պոպոլո հանդերձ օգոստինեան վանքով, ուր կեցած է ԼուԹերը: Ցետոյ գալիս է բոլորակ հրապարակը Պիազզա դել Պոպոլո, կիսաբոլորակ շրջապատած երկու պատերով, արձաններով, աւազաններով և մի քանի տուներով. ձախակողմում դուրս դրած այդին դեռևս եղած է Մոնտե Պինչիո սարի վերայ և պատկանում Բորգեզէ ամարանոցին: Հրապարակի մէջտեղում կառուցած է օբելիսկը Հելիոպոլսից, որ Օգոստոսի հրամանով բերած է Հռոմ: Դէպի աջ ու ձախ կողմը նորանից դատնվում են երկու եկեղեցիք սուրբ Մարիամի դէ Մոնտէ—սանտո: Այս տեղից տանում փողոցը դէպի Կորսո:

Կորսո, Վիա Քլոմինա, ունի 15—26 քայլաչափ լայնութիւն, և մինչև հրապարակը Պիազզա դել Քոնդոտտի 3,000 ոտնաչափ լայնութիւն. նորա երկու կողմից կառուցած են բարձր ապարանքներ: Կորսոն անցնում Պիազզա Ֆլամինիոյի (Անտոնինոսի Ֆորում) մօտից, ցուցանելով Քիջի և Միսանելի ապարանքները. այս հրապարակի վերայ կառուցած է մի սիւն սպիտակ մարմարիոնից 210 ոտն. բարձրութեամբ 'ի պատիւ Անտոնինոսի, որոյ

դործերը պատկերացուցած են դորա վերայ քանդակներով. սիւնի ծայրի վերայ դրած է բրոնզեղէն արձանը սուրբ Պաւղոսի: Կորսոն վերջանում հոկայաձև վենետիկեան ապարանքով. սորա չորս կողմով տանում մի նեղ փողոց, Դել—ԺԷՆ— (գերեզմանը Լոյոլայի) անուանով եկեղեցու մօտից ուղիղ դէպի Կապիտոլիոն:*)

Կապիտոլիոն. Հիւսիսակողմեան արևմտեան կողմից տանում է մի լայն ստորէջք: Սանդուղքը շրջապատած է վանդակներով, որոց վերայ դրած են մարմարիոնեայ արձանները Կասորի և Պոլլուքսի նոցա ձիերով և ասացեալ յաղթական նշաններով Մարիոս: Աջակողմում զետեղած է ապարանքը Կոնսերվատորիայի, այս ապարանքի դահլիճում գտանվում արժանի ուշադրութեան, բրոնզից շինած էգ գայլը, որ դիեցուցանում Հռոմուլոսը և Հռեմոսը: Այս է Էտրուսկեան քանդակագործութիւն. ձախակողմում գտանվում կապիտոլեան մուզէոնը, յետնակողմում ապարանքը Դել—Սենատորիա. այս տեղ է Ցուլիոս Կեսարի արձանը, որ համարումեն այս երևելի մարդու միակ հարազատ պատկերը Հռոմի մէջ: Հրապարակի մէջ տեղում կառուցած է Մարկոս Աուրելիոս կայսեր հսկայաձև ձիաւոր արձանը բրոնզից: Աւելի դէպի ձախակողմը, ստորէջքի մօտ, մի բարձր սանդուղք տանում դէպի կապիտոլիոնից առաւել բարձրադիր եկեղեցին Սրբոյ—Իսելի, որ գտանվում հին Արէոսի տեղում: Հարաւակողմեան արևմտեան բարձրութեան վերայ կառուցած էր Կապիտոլեան Իուպիտերի տաճարը և այն տեղ էր նոյնպէս Տարպէյան քարաժայռը: Կապիտոլիոնի արևելեան կողմում գտանվում ժայռերի մէջ Մամերտինեան բանտը, որոյ մէջ, որպէս կարծումեն, բանտարկուած էին Պետրոս և Պողոս առաքեալքը:

Կապիտոլիոնից իջանելով հասանում են Քորսոն: Սա, որ առաջին ժամանակներում անվանվում էր Սանտա—Մարիա կամ կովերի դաշտ, որ և մի ժամանակ ունէր 630 ոտն. երկայնութիւն, այժմս ցուցանում մի փոքրիկ հրապարակ: Կապիտոլեան բլրի

*) Հանդիսաւոր կարնաւալը, որ լինում այս կորսոի փողոցումը, մեք կնկարագրենք Հռոմի պատմութեան վերջը:

ստորոտքում գտանվում Սեպուիմոս Սեվերիոսի յաղթական կամարը կառուցած 203 թուականին Քրիստ. յետոյ։ Սորա մօտակայքում բարձրանում, որպէս կարծումեն Դոնելիոսի ցոկաւոր (բօստրատա) սիւնը. աւելի դէպի արևմուտք տեսանելի են Սեպտիմոսի տաճարի նախադրան երեքանկիւնի սիւները։ Ոչ հեռի այն տեղից, բարձր հիմքի վերայ կանգնած են 8 յունական սիւներ Վենոպոսինի տաճարից, որ ասվում սովորաբար տաճար Կոնկորդիայի. նա կործանուած է 16-րդ դարում. դրանից դէպի հարաւակողմեան արևելք կանգնած է առանձին կորնթեան սիւնը Փոկոսի, կառուցած 608 թուակ։ Հարաւակողմեան արևելքում գտանվում Անտոնինոսի և Քուռոսինայի տաճարի ութ սրահը սիւնների վերին գլուխներով։

Պոմպէ սկսեալ Ֆաուստինայի նոյն իսկ տաճարից դէպի հարաւային արևելք տանում փողոցը Վիա—սաքրա։ Աւելի մօտ նորա սկզբին, դէպի ձախ կառուցած է Կոզմայի և Դամիանոս եկեղեցին, որոյ պատերի մէջ կայ լաւ պահպանուած տաճարը Հռոմուլոսի և Հռեմոսի. փոքր ինչ հեռի բարձրանումեն երեք համալծակ, փոխադարձաբար հպատորուող միմեանց կամարները մնացորդքը Վեսպասիանու փառաւոր և ահագին տաճարին խաղաղութեան։ Սորանից յետոյ գալիս են Վենեռայի և Հռեմոսի (կամ Դիոսկուրների և Սերապիսի կամ արեգակի և լուսնի) տաճարները աւերակքը։ Նորա հիմքի արևմտեան անկիւնում բարձրանում Ցիպոսի յաղթական կամարը, որ կառուցած է յետ նորա մեհեան, որ այժմ գրեթէ աւերուած է։ Դէպի աւելի հեռի տանում ճանապարհը առ ասացեալ տեղը Մետա Զուդան (meta sudans)։

Ոչ հեռի դէպի հիւսիս Կապիտոլինից կառուցած է Տրայանոսի քօրոսը որ մի ժամանակ առաւել մեծագոյն առաւել փառաւորագոյն հրապարակն էր։ Այս տեղ կառուցած է Տրայանոսի սիւնը սպիտակ մարմարիոնից, որոյ վերայ սպիրալաբար և կարգով

նկարագրած են Տրայանոսի գործերը 250 ականաւոր բրօնզէ-ղէն կերպարանքներով։ Սանդուղքը 185 աստիճանից բաղկացած, սիւնի ներսով տանում դէպի նորա կատարը, ուր կառուցած է սուրբ Պետրոսի արձանը։ Հարաւային արևմտեան կողմը կացուցանում Պալատինեան սարալուրը։ Օգոստոսի, Տիբերիոսի, Կալիգուլայի և Ներոնի կայսերական ապարանքներից մնացած են միայն աւերակների շեղջակոյտք։ Այն տեղից դէպի հիւսիսային արևմուտք, Տիբեր գետի մօտ գտանվում Յեբեելի տաճարը, որ ասվում սովորաբար Վեստայի տաճարը 20 կորնթեան սիւներով։ Պալատինոնից դէպի հարաւային արևմուտք տարածվում Կօլիսեոսը, իսկ նորա արևելեան ստորոտքում կառուցած է Լատերանու եկեղեցին։ Ս. Յովհաննէ ի Լատերանոս երևում իբրև օտաղնս մի ցամաք անապատի։ Այս տեղ ապրած է հին ադդատոհմը Դի—Լատերանի. յառաջ քան թէ Կոստանդիանոսը այս տեղ կառուցած էր իւր համար ապարանք և եկեղեցի։ Այս ամենահին եկեղեցին Հռոմի է յատկապէս եպիսկոպոսանիստ եկեղեցի և մինչև 14-րդ դարը եղած է տեղի թագելու պատկերը։ Նա ունի 384 ոտնաչափ երկայնութիւն. այն սրահից, որ կայ 24 մարմարիոնեայ քառակուսի սիւներից բաղկացած նախադաւթի վերայ, Պապը հանրաձման օրին տալիս է իւր օրհնութիւնը ժողովրդին։ Հինգ դուռներ տանում են եկեղեցու ներսը, որ բաժանած է հինգ սեղան չորս կարգ սիւներով. եկեղեցու ներսը մի առաստաղով, որ նկարներով զարդարած է Միքէլ Անջելոյի ձեռամբ, ազդում մարդու մէջ առաւելապէս մի այնպիսի տպաւորութիւն, որպէս թէ դա էր մի դահլիճ և ոչ թէ եկեղեցի. նա զարդարած է մեծ փառահեղութեամբ-մարմարիոնով, ոսկեզօծութեամբ և սեղաններով. փառահեղ գլխաւոր սեղանի տակը պահպանվումեն Պետրոսի և Պօղոսի գլուխները։ Այս տեղ դումարուած էին 12 տեղական ժողովներ։ Յեռանակողմեան ճակատի առաջև կառուցած է մի մեծ Եգիպտական քարկոթող (օբե-

լիակ) 105½ ոտն. բարձրութեամբ, Յովհաննու աւետարանչի արձանովը վերևում: Այս օբելիսկը Կոստանդիանոսի հրամանով բերուած է Թեբայից: Այս տեղ գտանվում է Կոստանդիանոսի ուխտանկիւնեան Բասիլիքէն (մկրտութեան աւազանը) որ ասվում է Ս. Զիովանի ին Ֆոնտե, որոյ մէջ, ինչպէս ասումեն, մկրտուած է Կոստանդիանոսը, որ և մեր տեսած ժամանակը լցուցած էր իւղով, և կաթոլիկներ մխելով մտոը նորա մէջ օծումէին իւրեանց ճակատը խաչաձև:

Սրանից առանձին, բարձրանում մի բարձր շինուած, Սչալա սանտա (սուրբ սանդուղք), որոյ 28 մարմարիոնեայ աստիճանքը մաշած ու փոսացած են աղօթարարների ծունկերից և այժմուս վերևից ծածկած են տախտակներով, որ նոքա չմաշուէին բոլորովին. երկու կամ երեք աստիճանների վերայ, բացի տախտակներից փոքրիկ խաչերով նշաններ են դրած, որպէս թէ նոցա տակ, քարերի վերայ մնացած էին Փրկչի արիւնի կաթիլները (Այս բանիս ոչ մի առողջամիտ մարդ կարող չէ հաստատել): Այս աստիճանները առած են Պօնտացի Պիղատոսի տան սանդուղքից Երուսաղեմումը և փոխադրելով ի Հռոմ կառուցել են նոցա վերայ աղօթատեղի կամ խորան, որ ասվում Սանկտա Սանկտորում: Այս սանդուղքի վերայով, մեր այն տեղ լինելու միջոցին, վեր էին բարձրանում բազմաթիւ ալք, կանայք և երեխայք ծնկերի վերայ, որ լցուցինք և մեք: Այս խորանի մէջ, բացի սուրբ սանդուղքից, կան ականաւոր համակարգութիւնք մարմարիոնեայ արձանների սանդուղքի ոտքում. առաջինը աջ կողմից ցուցանում կատարեալ հասակի չափով Քրիստոսը, իսկ նորա քամակում Յուդան, որ կամաց մօտ է սողում արծաթի քսակը ձեռնում, որ թաղցրած է քամակումը: Սա յետքից ծածուկ մտնելով, համբուրում Փրկիչը—'ի նշան մատնութեան. իսկ Փրկիչը դարձուցանելով դէմքը դէպ ի Յուդան, ժպտում: Այս արձանները ըստ Լուբեանց գեղեցկութեան

ականաւոր են և այնպիսի աջողակութեամբ պատկերագործած, որ դու տեսանումես իսկական դիպուածքը այն բոպէին, երբ Յուդան մատնում Քրիստոսը: Միւս զուգադրութիւն պատկերների ձախակողմում. Փրկիչը կանգնած է դլուխը ցած թողած, իսկ Պիղատոսը նստած քարի վերայ, լուանում ձեռքը: Այս արձանները նոյնպէս փառաւոր են, ինչպէս առաջինքը:

Ուշադրութեան արժանի, առաւել լաւ պահպանուած շինութիւնը անցեալ դարերի է Պոնտէոնը, որ կառուցել է Օդոստոս Էյդամոս Ադրիպպա 26 թուակ. Քրիստ. առաջ, և նուիրած է ՎրէՖինոդիէ Ի-պիեերին: Նա կանգնած է քաղաքի այս մասնումը ի մէջ Կապիտոլիօնի և Անգելօսի բերդին. 608 թուակ. Ֆոսկոսը ընծայեց այս տաճարը Բոնիֆացիոս չորրորդին և այն ժամանակից ասվում դա եկեղեցի Մարիամի Ադ Մարթիրէ, իսկ սովորաբար Դէլա—ռոտոնդա: Երկու զանգակատունք, գործ Բերնինի, կանգնած են այս գեղեցիկ շինուածի մօտ. ներքին պատի մէջ գտանվում Ռաֆայէլի գերեզմանը Մարտոնա դէլ Ջոս անուն եկեղեցու յատակի մէջ. ապա միւս եկեղեցիքը: Սանտա Մարիա Մաջիորէ, որ կառուցած է Լիբերիոս պապի ձեռամբ 352-ին, է առաւել գեղեցիկը Հռոմի մէջ 35 եկեղեցիներից ի պատիւ սուրբ Մարիամ կուսին: Այս տեղ պահվում Աստուածամօր պատկերը, որ նկարած է սուրբ աւետարանիչը Ղուկաս: Նկեղեցու առաջև, ամենայն տարի 5-ին Յունվարին, սուրբ Անտոնինոսի տօնին, քահանայքը օրհնումեն անասունքը. Պիոս 5-ի դերեզմանի մօտ, սեղանի վերայ ամրացուցած է բրօնզեղէն ոսկեզօծ հրեշտակների վերայ տապանակը, որոյ մէջ սրբութեամբ պահպանումեն Յիսուս Քրիստոսի օրօրոցի Հաչեարը. Սանտա Քրոչէ ին Ջերուզալեմ, որ հիմնարկած է սուրբ Հելենէի ձեռամբ և այս տեղ ամփոփած է տաճարի ներքոյ կէնարարի խաչի մասը. Սան Պաուլօ Լէմուրա (սուրբ Պօղոսի եկեղեցին) կէս ժամի ճանապարհով հեռի քաղաքից, սկզբնապէս կառուցած Կոստան-

գիանոսի ձեռամբ սուրբ Պօղոս առաքելոյ գերեզմանի վերայ, ցուցանումէր մինը աւելի դեղեցիկ մայր եկեղեցիներից մինչև 1824 տարու հրդեհը: Նորա քառասուն որձաքարեայ սիւները դորձ են դրուած դարձեալ նորա կառուցման միջոցին: Այս եկեղեցին սպիտակ մարմարիոնից կառուցած շատ մեծաշուք է. սիւների մէջ յօրինած են 12 խորշեր (նիշեր), որոց մէջ կանգնեցուցած են փառաւոր մարմարիոնեայ արձանները 12 առաքեալների: Եկեղեցու նկարաշէն պատկերազարդութիւնը տակաւին վերջացած չէր, երբ մեք Հռոմումն էինք:

Այն ճանապարհի վերայ, որ քաղաքից տանումէ դէպի վերոյիշեալ սուրբ Պօղոսի եկեղեցին, կանգնած է հսկայաձև մարմարիոնեայ արձանը Ս. Պօղոսի, որ ձեռումը բռնած ունի բաց առաքելական թուղթը: Մեր առաջնորդ Մանուէլ Վարդապետը ասաց ինձ թէ՝ այս տեղ սուրբ առաքեալքը Պետրոս և Պօղոս խորհուրդ էին արած քարոզելու աւետարանը և այս տեղից բաժանուեցան նոքա գնալու դէպի զանազան կողմերը: Եկեղեցին Ս. Լորէնցոյի Ֆուորի էֆ մուրա, որ կառուցել է Կոստանդիանոս մեծը չորրորդ դարումը. Սուրբ Սեբաստիոս, որոյ հիմնարկութիւնը ընծայումեն նոյնպէս Կոստանդիանոսին: Նա գտանվումէ Սուրբ Կաղնքսի գերեզմանատան վերայ, կամ երևելի սաղերկրեայ դամբարանների (կատակոմբի): Ընթեցողը աւելի լաւ ծանօթացնելու համար Հռոմէական կատակոմբներին, պիտոյ է ինձ փոքր ինչ մանրամասնապաս խօսել նոցա մասին, վասն առնելով Հարովիզ գերմանացու դրուածից մակագրութեամբ ,,Ռոմբերիբեայ աշխարհի հրաշքները": Բացի կեսարական և պապական Հռոմից կայ այլ ևս երրորդ Հռոմ, որ պակաս արժանի չէ ուշադրութեան, որ խոր ծածկած է նոցա պատերի տակ սաղերկրեայ աշխարհումն: Սուրբ Պետրոսի դմբեթի բարձրութիւնից, որտեղից բացվումէ աչքի առաջև յաւիտենական քաղաքի ամենագեղեցիկ տեսարանը բոլոր յիշատակարանների և դամբարանների, կարելի է

ամենալաւ կերպով տեսանել սաղերկրեայ դամբարանները կամ գետնի տակ թաղած Հռոմը: Քաղաքի կենդրոնից դէպի ամենայն կողմերը աշխարհի՝ բացվումեն տասն և հինգ գլխաւոր ճանապարհներ, որոց վերայ մի ժամանակ ման էին եկած յաղթող լեգիոնները աշխարհին տիրապետելու համար, ձգվումեն անապատ կամպանիայի միջով և վերջապէս անյայտանումեն. մառախլային հեռաւորութեան մէջ: Այս ճանապարհներից դէպի աջ ու ձախ, երկրի խորութեան մէջ գտել են սաղերկրեայ դամբարաններ. դոքա թէպէտ սաղերկրեայ Հռոմի պէս Տիբերիս գետովը բաժանվումեն երկու մեծ դօտիք, բայց քաղաքի կենդրոնի շուրջը ձևակերպումեն մի շրջանակ, որ բաղկանումէ 50 կամ 60 հատուածներից. նորա մեծութիւնը կարելի է չափել քաղաքի չափով: Մեք չունենք ոչինչ արժանահաւատ տեղեկութիւնք՝ թէ ինչպէս էին յառաջացած այդ արժանի ուշադրութեան սաղերկրեայ դահլիճները և գնացքը, միայն հաւանական է թէ՝ այս տեղի հողը լաւ լինելու պատճառաւ շինութեան համար, դուրս փորելով ծակամուտներ են բացել և երբ որ քրիստոնէութիւն այնքան սաստիկ տարածուեցաւ աշխարհի մայրաքաղաքումը, որ դրաւեց մարդերի ուշադրութիւնը, այլ և այն հալածանքների ժամանակում, որոց առաջինը, ինչպէս յայտնի է, պատահած է Ներոնի օրերում, իսկ յետոյ ուրացող Յուլիանոսի օրերում, այս գետնափորները ցուցանումէին շատ յարմարաւոր պատսպարանք հալածուածների կամ թէ դոցա ժողովների համար: Այլ և այս գնացները, ինչպէս երևումեն մինչև այժմ, կերպարորումէին մի այնպիսի լաբիրինթոս, որ նոցա մէջ թաղուածքը գտանել շատ դժուարին էր: Արդէն պատրաստ ծակամուտները ընդարձակել և կանոնաւորապէս շինել հեշտ էր, այնուհետև սպասաւորումէին նոքա իբրև տեղիք եկեղեցական ժողովների և ստանումէին մի առանձին գեղեցկութիւն խորհրդաւոր լուսաւորութեամբ 'ի ձեռն լապտեր-

ների,—հեռի աշխարհի խռովութենից և ապահովութեան մէջ. այս ընդարձակ ստորերկրեայ գնացքը յարմարաւոր էին հաւատացեալքը թաղելու համար: Որովհետև հեթանոսական սովորութիւնը այրելու մեռածների մարմինքը հակառակ էր քրիստոնէական երկիւղածութեանը և Սուրբ Գրքի աւանդութիւնների, և որովհետև վտանգաւոր լինելու էր ամբարիշտ ամբոխի աչքի առաջև փորել գերեզմաններ, որ կրումէին իւրեանց վերայ քրիստոնէական դրուակներ և տապանագիրք, այս պատճառով շատ բնական էր գործ դնել այս արդէն պատրաստ գերեզմանները, որ ընդարձակումէին յետոյ ըստ չափու հարկաւորութեան: Այլ և հաւատացեալների հասարակութիւնը սկզբով միաւորուած մնմեանց հետ, չկամէր և մահուց յետոյ բաժանիլ իւր հաւատակիցներից, չկամէր ունենալ առանձին տոհմական գերեզմանատեղիք ինչպէս Հռովմայեցիք: Քրիստոնայք և մահուանից յետոյ կամէին մնալ միասին և կացուցանել մի գերդաստան: Այս ստորերկրեայ քաղաքի մէջ, որ առ հասարակ շատ յարմարաւոր էր մեռածների համար, բաւական տեղ կար նոցա ամենեցուն: Գեղեցիկ էր խորհուրդը հանգստանալու այդտեղ, ուր մարդիկ աղատվումէին հալածանքից հեթանոս բռնաւորների, ուր նոքա լսումէին այն խօսքը, որ տալիս էր հաւատացեալին զօրութիւն ամենայն զրկանք յանձն առնուլ վասն նորա: Եւ կենդանիքի համար, որ ժողովվումէին այդ խաղաղութեան տեղերում, ուրախալի և մխիթարական էր մտածել, թէ նոցա մէջ գտանվումեն իւրեանց ննջեցեալ եղբայրքը և քոյրերը: Այս կապը ի մէջ թաղման և ժողովման տեղերի կարևոր էր մանաւանդ այն անդութ հալածանքների ծանր ժամանակներում, շատ բնական էր, որ մի առանձին պաշտօն էին մատուցանում սուրբ նահատակներին, որ իւրեանց արիւնով կնքած էին քրիստոնէական վարդապետութեան ճշմարտութիւնը. որովհետև կենդա-

նութեան ժամանակին կարելի չէր պատուել նորանց, այս պատճառով պատիւ էին մատուցանում նոցա նշխարներին: Այլ և օգտակար էր համարվում այդ նահատակքը ունենալ իւր աչքի առաջև իբրև օրինակ անբեկանելի հաստատութեան: Այս պատճառով և սիրում էին ժողովվիլ նոցա գերեզմանների մօտ և վայելել խաղաղ եղբայրական սեղան, և կանուխ սկսան նոքա մի առանձին պատիւ համարել իւրեանց՝ հանդչել այդ գերեզմանների մօտ, ակնկալութեամբ հանդերձեալ յարութեանը մեռածների:

Այս կատակոմբերը երկար ժամանակ մնալով անյայտ, որովհետև ծակամուտները ծածկուած էին հողով և անյայտացած, մի ուսումնական Բօլիօն անունով, 1556—1600 թուականին, զկնի 33 տարի աշխատելուց, յաջողացել է նորան Ապպիոսեան ճանապարհին դէպի ձախ, ոչ հեռի Սանտա Մարիա Եէէ-պէցու Պաշիո�գտանել աղեւսաշէն աւերակ, ուր և յայտնուել է մի ծածկած մուտք կատակոմբների: Նա նեղ բացուած խորութեան մէջ մտանելով, մեծաւ դժուարութեամբ յառաջ է գնացել այս լաբիւրինթոսումը, և երկար աշխատելուց յետոյ վերջապէս նորա առաջև բացվումէ մի ամբողջ ստորերկրեայ քաղաք. վերին յարկի տակը տարածվումէ մի երկրորդ նոյնքան և անչափելի յարկ ստորերկրեայ ծակամուտների: Այս կատակոմբները տարածվումեն Ապպիոսեան ճանապարհի երկու կողմում, սկսեալ այժմեան Հռոմի դարպասից մինչև Սան—Պաօլօ: Այս կատակոմբներում կան բազում սենեակներ փոքր և մեծ, աղօթատեղիք, գերեզմանասենեակք և գերեզմաններ: Վերնագիրքը տապանաքարերի համառօտ և պարզ են, բայց յաճախ անգամ քնքուշ և դիտաշարժ: Հանդուցեալներին տալիս էին սովորաբար ածականս ,,արիանաւոր, կամ ամենաբաղդ,'' անուանելով նորանց բաղդ հոգի, կամ ևս աւելի քնքուշ ձայնով, մեղրից բաղցրագոյն: Յաճախ յիշողութիւն է լինում անմեղութեան և բարք ու

վարքի սրբութեան, իսկ երբեմն դեղեցկութեան կամ խաղաղասիրութեան մասին։ Որդիական սէրը զաւակների առ ծնողքը կամ թէ կենդանի մնացած ծնողների դութը առ իւրեանց հանգուցեալ զաւակները արտայայտած են յիշատակների վերայ յաճախ շատ պարզ և գթաշարժ կերպով։ Շատ սակաւ է պատահում, որ չլինէր մի խօսք օրհնութեան և հոգեհանգստի մաղթանք։ Սովորաբար յառաջ է բերվում հանգուցելու հասակը։ Յաճախ հանդիպում է մի այսպիսի տապանագիր ,,Այս ինչը ՝՝՝ջած է''. երբեմն մի տխուր, բայց յուսով լի ցուցակութիւն հանդերձեալ կեանքի. միտ դնելով այդ վերնագրերի պարզութեան և համառօտութեան, նոցա խօսքի քնքշութիւնը պարունակում իւր մէջ մի դերօրինակ սիրտ շարժող բան. դու զգումես, որ այս տեղ չկայ ոչինչ կեղծաւորութիւն. արդարև, ոչինչ տեղ չէ արտայայտվում այնպիսի կենդանութեամբ նոր հաւատի զօրաւոր և աղնուացուցիչ ազդեցութիւնը, ինչպէս այս կարճառօտ տապանագիրների մէջ, որ պատկանումեն առաջին խոստովանողներին։

Քրիստոնեայքը հալածուելով Կեսարների ձեռամբ, որ յետոյ ժամանակում պարտէին բաղմեցնել քրիստոնէութիւնը թագաւորական գահի վերայ, քրիստոնեայքը առանց խտրութեան պատուաստիճանի, հասակի և սեռի, կանայք, երեխայք, ծերունիք, հարուստ և աղքատ, երեկոյեան պահում ներս են սողում այն կատակոմբների մէջ վան երգելու այն տեղ փառաբանական երգեր անտեսանելի Աստուծուն։ Հանդիսաւոր երգը, որ սկսած էր մի պատուաւոր հոգևոր անձը, հաղարաւոր երկիւղածների ձայներով կրկնվում է, և այդքան բաղմաթիւ համախոհ և միաբան սրտերի հասարակաց աղօթքը բարձրանում դէպ ի երկինք ստորերկրեայ խորքից։ Յաճախ երգաբանութեան միջոցին, հաւատացեալքը բերումեն ժողովքի մէջ մարմինները իւրեանց եղբարց, որ մեռած էին որ և իցէ Ներոնի կամ Դիոկղեպիանոսի դահիճների ձեռամբ, որոց սիրելի նշխարքը, յաջողուած էր նոցա գտնեա դուրս հանել անգութ բռնաւորների ձեռքից, նորանց թաղելու համար իւրեանց մէջ։ Բայց այս տեղ հառաչում չեն, գանգատում չեն, լաց չեն լինում, այլ հանապազորդումեն աղօթել, դուցէ և պառաւել երկիւղած դառնալ քան թէ յառաջ։

Երգաբանութիւնը յանկարծ ընդհատվում է վայրենի աղաղակով. մութ գնացքները լապտերների պայծառ լուսով լուսաւորվումեն. այս է ամենի զինուորների յարձակումը. որպէս վայրենի գազանք յարձակվումեն նոքա իւրեանց որսի վերայ, կոտորումեն բոլոր հանդիպողքը, հալածումեն փախչող կանայքը և երեխայքը, մինչև մի ահաւոր լռութիւն կ'ցուցանէր նոցա, որ չկայր այլ և ոչոք սպանելու։ Ըստ վկայելոյ Ադոլֆայ Բաղէնի, որոյ շարադրութիւնը հրատարակուած է Սանկտպէտերբուրգում 1869 թուականին,, երես 51,—այս ստորերկրեայ կատակոմբներում թաղուած են մինչև ցվեց միլիոն անձինք։ Իսկ 76 երեսում այս գրքի գրում է նա թէ՝ մեղրամոմները և կանթեղները, որք անընդհատ վառվումեն մեր եկեղեցիներում ոչ այլ ինչ են, եթէ ոչ յիշատակութիւն լապտերների, որք լուսաւորումէին մութ կամարները կատակոմբների։ Դառնանք դէպ մեր պատմութիւնը։

Երբ որ մեք գտանվում էինք Ս. Սէբաստիանոս վերոյիշեալ եկեղեցում և Ս. Կալիստոս դերեզմանատան մօտ, որ տեղից կայ մուտք կատակոմբների մէջ, այս տեղ եղած կրօնաւորքը առաջարկեցին մեզ, թէ կամիք՞նք արդեօք տեսանել այս դերեզմանական հնութիւնքը հռոմի։ Մի տեղեկութիւն ունենալու համար հռոմէական կատակոմբների մասին, մեք յայտնեցինք առ այդ մեր յօժարութիւնը։ Երկու կրօնաւորք վառեցին լապտերները երկար դաւազանների վերայ և մեք ամենեքեանքս, այս-

ինքն ես, իմ կինս և հայր Մանուելը մի փոքրիկ դուռնից ներս մտանելով, ամենուդքի աստիճաններից ցած իջանք երկրի խորքը: Կատակոմբերը յօրինած էին իբրև ծածկած սրահ, աւելի բարձր քան թէ մարդուս հասակը, երկու կողմում կային խորութիւնք, ամեն մինը բաժանած միջնապատերով, որպէս փոքրիկ խուցեր, կամ խորշեր, որ առաջնակողմից բաց էին: Այս խորութիւնների մէջ դրած էին մարդկային ոսկրների շեղջակոյտք: Մեր անցած տարածութիւնը բոլորովին միատեսակ էր, — այսինքն հողաշէն գերեզմաններ, որոց վերայ կուտած էին ոսկրներ: Այս լաբիւրինթոսի մէջ առանց ուղեցուցի կարելի է մոլորուիլ և կորչիլ անհետաքրքիր մեք մանելանք այս խոնաւ ստորերկրեայ ծակամուտերում յառաջ գնալով մինչև 30 սաժէն, բայց շուտով զգացինք կուրծքի ճնշումը խոնաւ փակած օդի ազդեցութեամբ, իսկ մանաւանդ այն տրտմութենից, որ բերում էին մեր վերայ անհամար մարդկային ոսկորների շեղջակոյտքը, լապտերների լուսով լուսաւորուած: Աւելի յառաջ տանել մեր ընթացքը այս տեղ, անտանելի էր դառնում, այս պատճառով ես խնդրեցի կրօնաւորներից յետ դառնալ և մեք շտապութեամբ դուրս եկանք դէպ ի լոյս աշխարհ: Այս Ս. Սեբաստիանու եկեղեցումը պահվում է հոյակապ մարմարիոնեայ արձանը Մովսէս մարգարէի, օրէնքի տախտակները ձեռքում, գործ Միքել Անջելո ճարտարապետի: Երբ որ դուրս էինք գալիս եկեղեցուց, մեք, ինչպէս լինում է սովորաբար, առաջարկեցինք կրօնաւորներին իբրև ընծայ մի քանի արծաթի դահեկանք, բայց նոքա չընդունեցին նորանց, ասելով թէ՝ այսօրեան օրի համար ունին նոքա բաւական արծաթ կերակուր դնելու, և թէ նոքա կընդունէին այդպիսի տուրք այն ժամանակ միայն, երբ բոլորովին չունէին արծաթ:

Մօտակայ Կովալլոյի ամենագեղեցիկ հրապարակի վերայ կառուցած է Պապի ապարանքը Կուիրինալէ բլրի վերայ, ուր և դտանվումեն առաւել երևելի ստեղծուածք ճարտարութիւնների,

այսինքն — Տօրվալդսօնի արձանաժողովը, Աղէքսանդր մեծի յաղթական մուտքը Բաբիլոն, խորհրդաւոր ընթրիքը, սուրբ Նախավկայ Ստեփանոսը և այլն: Հրապարակի մէջ տեղում բարձրանում է գեղեցիկ որձաքարեայ քարկոթող (օբէլիսկ) Աւգոստոսի մավզոլէօնից, երկու կողմում կանգնած են հսկայաձև մարմարիոնեայ արձանները ձիանք սանձահարողների, որ առած էին Կոստանդիանոսի բաղանիքներից, և որձաքարեայ բաժակը Փորումից, 25 ոտնաչափ տրամագիծով: Վերոգրեալ պատկերների մէջ յարուցանում է զարմանալի տպաւորութիւն մինը, այսինքն Սեփիոնոս Նոխոնէյի. դա ցուցանում է մի պատանի շատ գրաւիչ երեսով, զգեստաւորած երկար, խայտաճամուկ պատմուճանով և ուրարը ուսին: Այս պատկերին ընծայումեն աւելի մեծ արժանաւորութիւն, որովհետև դա յօրինած է կանվայի վերայ և ոչ թէ նկարած է դրչով և գուներով:

Փոքրիկ եկեղեցին Bocca Della verita: Նա հեթանոսութեան ժամանակին էր մեհեան, իսկ յետոյ դարձուցած է եկեղեցի: Այս տեղ նախադռան տարածութեան մէջ պահպանվումեն զանազան գործիք տանջանքի, որոց հին հռոմէացիք ենթարկումէին դատապարտուածքը. դոցա մէջ արժանի է ուշադրութեան մի պատժարան, որ է մի մեծ բրօնզեղէն շրջան մարդկային գլխի կամ արեգակի ձևակերպութեամբ, որպէս դա սովորաբար նկարվումէ. այս պտուկերը ունի մի ահագին բաց բերան. դա է գլուխ մի կուռքի, որոյ փորում մի քուրմ կամ թէ դատաւոր թագչումէր ժողովրդից ծածուկ, և զինի դատախազների հարցաքննութեանը, եթէ չկային պարզ ապացոյցք մեղապարտութեան, դատաւորքը հրամայումէին կասկածանքի տակ եղողին ձեռն մինչև բազուկը կոխել արձանի բերանը, ասելով — եթէ նա արդար է, նորա ձեռը մնալու է ողջ և անսասան, բայց եթէ մեղապարտ է, այնուհետև ատուածքը կը կըտրեն նորա ձեռը: Հասկանալի բան է, որ արձանի մէջ նստած քուրմը

կամ դատաւորը, ըստով բոլոր խօսուածքը դատախազների, թէ իւրեանց դատողութեամբ կամ թէ միւս դատաւորների նշանացի առնելովը, մի սուր կացնի հարուածով կտրումէին ձեռի թաթը, իսկ եթէ դատնումէին նորան արդար, այնուհետև ձեռը դուրս էր գալիս անվնաս։ Այս մեկնութիւնը տուեց ինձ մեր ուղեցոյց գիտնական կրօնաւոր Մանուէլը։

Ոչ հեռի սուրբ Պետրոսի եկեղեցուց և Վատիկանից, մի փողոց անցկացած, դէպի ձախ դատնվումէ մի փոքրիկ եկեղեցի, որոյ դրան վերայ գրած է Հայոց տառերով. ,,Նէեղէցի սրբոյ Գրիգորի Լուսաւորչի Հայոց։'' Այս եկեղեցու մէջ պահվումեն այս սուրբի նշխարները։

Գերեզմնատունը Հռոմում լաւ է, բայց ոչ այնչափ փառաւոր, ինչպէս մի քանի քաղաքներում Իտալիայի մէջ, զոր օրինակ, Նէապոլում, Բոլոնիում, որպէս և Փարիզում, մանաւանդ Միլանիում (Բավարիայի մէջ)։ Հին Հռոմէական գերեզմնատունը այժմ նորոգվումէ Պապի ձեռամբ, բայց ինչ որ այս տեղ արժանի է ուշադրութեան, է գերեզմնատունը աղքատների, որ կարողութիւն չունէին դատնելու իւրեանց սեփական գերեզմանը։ Նոցա համար որոշած է առանձին փոքրիկ հրապարակ, փորած են մի քանի խոր փոսեր, ուր ցած են թողում մի քանի աղքատ հանգուցեալք միասին։ Այս լինումէ այսպէս, ինչպէս ասաց մեզ հայր Մանուէլը. երբոր բերած էին մի հանգուցեալ, նորան ցած են թողում փոսի մէջ և ծածկումեն ըստ բաւականին հողով. յետոյ երբ որ բերումեն մի այլ ննջեցեալ, նորան նոյնպէս ցած են թողում այն փոսի մէջ և ծածկումեն հողով. այս գործողութիւնը կրկնվումէ այնքան երկար, մինչև բոլոր փոսը լցվումէ դիերով. յետոյ փոսի բերանը փակումեն և ծածկումեն վերևից հաստ ձիւթով (սմնլա)։ Աղքատները և մուրացկանները թէպէտ կեանքի մէջ ունէին տանելու շատ դժկանքի, բայց թշուառութիւնը հալածումէր նորանց

մինչև գերեզմանի խորքը։ Այդպէս չեն միւս գերեզմանատունքը Եւրոպայի, որ ես տեսած եմ, զորօրինակ Մի-նիէնէոնը, պատկանեալ կաթոլիկներին։ Մի ահագին տարածութիւն քաղաքից դուրս՝ փակումէ իւր մէջ այս թագաւորութիւնը մեռելոց. նա շրջապատած է բարձր քարեայ պարսպով և ունի մեծ դարպաս։ Դարպասի մօտ է դռնապանը. երբ որ ներս ես մտանում, քո աչքին հանդիպումէ խոշոր մի ահագին փառաւոր այգի կանոնաւոր ծառազարդ գնացքով և ամենայն տեսակ անուշահոտ ծաղիկներով, որոց քաղցրութիւնը զգումես արդէն այգու մուտքումը. ներսումը, երկու կողմում, երկար սրահներ, որ պարունակումեն իւրեանց մէջ փառաւոր և գեղեցկայարմար գերեզմաններ առաւել երևելի հանգուցեալների այս քաղաքիս, հանդերձ մարմարիոնեայ արձաններով, որ ըստ մեծի մասին ցուցանումեն հանգուցեալ մարդերի և նոցա կանանց պատկերքը, կամ թէ պատկերքը այնպիսի մայրերի, որ արձակած մազերով արտասվումեն իւրեանց ննջեցեալ զաւակքը. այլ և միւս պատուական արձաններ և կիսարձաններ։ Յետոյ, երկայն կանոնաւոր ծառազարդ գնացքի (ալլէի) երկու կողմերում, այլ և միւս ընդհատած կանոնաւոր, դէպի զանազան կողմեր ուղղած ծառատունկ ճեմելիքի երկու կողմերում շինած են քառանկիւնի մարգեր (կվաներ), ինչպէս այգիներում. դոցա ամէն մինի մէջ հանգստացած է մի ննջեցեալ տապանաքարով և գլխի կողմը Քրիստոսի մեռալեայ սև խաչելութեան պատկերը. իւրաքանչիւր գերեզմանի շուրջը տնկած են հոտաւէտ զանազան տեսակ ծաղիկներ, իսկ յետոյ փոքրիկ ծառեր, որ տալիս է ամէն մի գերեզմանի մի պատուական կերպարանք։ Այսպիսի կարգ պահպանուած է այս բոլոր ահագին գերեզմանատան մէջ, և բոլոր գերեզմանները շինած են միատեսակ ձևով։ Հոգաբարձութիւնը ծաղիկների և պահպանութիւնը մաքրութեան դրած է առանձին պահապանների կամ թէ գերեզման փորողների վերայ, որ

միշտ կենումեն գերեզմանատնում և սատնումեն վճար հանդուցեալների ազգականներից։ Երբ որ դու երթումես դլխաւոր, լայն և երկայն ծառաղարդ ալլեյայի միջով, նա տանումէ քեզ դէպի մի ընդարձակ հրապարակ, որ է կենդրոնական տեղը այս գերեզմանական այգու։ Այս հրապարակի մէջ տեղում դտանվումէ մի ահագին բրօնզեղէն սև խաչ, որոյ վերայ նոյնպէս բրօնզեայ կախած է Քրիստոսի խաչելութեան պատկերը։ Նա այնպէս ճարտարադործած է, որպէս տեսանումէիր քո առաջև մի իսկապէս մեռած մարդ, որ բևեռած էր խաչափայտի վերայ և մահացած մարմնի ծանրութենից կախ էր ընկած դէպ ի ցած։ Այս խաչելութեան պատկերի հանդէպ դրած են աթոռներ, որոց վերայ նստումեն հանդուցեալների անմխիթար ազգական կանայքը, և նայելով խաչի վերայ կախ ընկած Փրկչի վերայ, աղօթելով առ նա, դտանումեն մխիթարութիւն։ Աւելի հեռի, այդու վերջումը յօրինած են երկու մեծ դահլիճք, ուր պահումեն մեռածները մինչև չորրորդ օրը։ Իսկ երբ որ երեւումէ նեխութիւն (հոտ բռնելը) մարմնի մէջ, այնուհետև թոյլ են տալիս ազգականներին թաղել մեռեալը։ Այդպիսի բարեկարգութեան օգտակարութիւնը հասկանալի է ամենեցուն, որովհետև եղած են դիպուածք, որ մահանման քնի մէջ (լետարդիական քուն) նուաղած և թուլացած մարդիկ թաղած էին, որ և յետոյ կենդանանալով գերեզմանի մէջ, կորած էին անդառնալի կերպով։ Ոչ հեռի այս դահլիճներից դտանվումէ մի սենեակ բժշկի համար, որ պիտի հսկէր մեռածների կացութեան վերայ։ Երբ որ մեք դտանվումէինք այս գերեզմանատնում, դահլիճներում դրածէին 18 ննջեցեալք, այր և կին մարդ, և զանազան հասակի մէջ. ամենեքեան ամփոփած էին դագաղների մէջ առանց ծածկոցների, իւրեանց փառաւոր հանդերձներով շրջապատած ծաղիկներով, իսկ ձեռներում ծաղկի փունջեր։ Նայելով նոցա վերայ, կարծումէիր թէ նոքա քնած

են ծաղիկների մէջ։ Փոքր ինչ հեռի այս տեղից դտանվումէ մի փոքրիկ եկեղեցի (մատուռն), ուր գրեթէ ամեն օր պատարագ են մատուցանում, որովհետև համարեայ ամեն օր լինումէ թաղումը, երբ որ անցած էր երեքօրեայ ժամանակը զինի մահուան։

Այժմ մնումէ ինձ նկարագրել երևելի և փառահեղ կարնավալը (բարեկենդանեայ տօնը) Հռոմում, որոյ մասին յիշած էի վերևը։ Մօտ 3 ժամին 20-ին Յունվարի ահագին փողոցը կօրսօ լցուած էր բազմութենով ժողովրդի։ Ամենայն բալկօններից և պատուհաններից բարձր տների՝ ճառագայթում էր փառահեղութիւն խայտաճամուկ (ռանդէռանդ) ըստ մեծի մասին կարմիր օթոցների (խալիչաների)։ Սակաւ առ սարաւ բաց տեղերը պատուհանների և բալկօնները լցուեցան կնիկ մարդիկներով և աղջիկներով հանդիսաւորապէս զարդարված։ Արդէն մեծ զանգակը Կապիտոլիօնի նշան տուեց սովորական սկզբին կարնավալի զուարճութեանց, և Հռոմի սենատօրների ընթացքը սկսվեցաւ թագաւորական կառքերում, որք փայլում էին դոյներով և ոսկով, շարժուելով յառաջ և յետ կօրսօում։ Դարպասից del Popolo հնչումէր երաժշտութիւն Պապի թիկնապահների։ Կօրսօումը և նորա կից փողոցներում կարգադրութիւն էին առնում դրադունները, ճիշդ պահպանելու մասին կառքերի ընթացքը։ Ամեն անկիւնում կօրսօի վաճառողք ծաղիկների շարել էին իւրեանց փայլուն հոտաւէտ պաշարները։ Բոլոր Իսպանական հրապարակը լցուած էր կնիկ մարդիկներով, աղջիկներով և պատանիներով, սոքա ամենեքեան առաջարկումէին իւրեանց ռանդէռանդ հոտաւէտ ծաղիկները զամբիւղներում՝ ուրախ ձայներով — Ecco fiori, signor! fiori freshi! oh, che belli fiori: Հարիւր հազար փունջեր (թափգուններ) սկսած հասարակ դաշտի ծաղիկներից մինչև թանկագին կամելիան, դարնանային վարդը և մանուշակը, կլսումեն նոքա իւրեանց մեծ և փոքր զամբիւղներում։

Այս միջոցին կարէտներու շարքերը արդէն դիմեցին դէպի Կօրսօ. մինչեր Պօրտօ դէլ Պոպոլօից ծանրութեամբ ընթանում էին դէպի ապարանքը Վէնեցիա, միւսները յետ էին դառնում այն տեղից երկու պատերու պէս խիտ շարած ժողովրդի մէջ: Բարեկամք և ծանօթք հանդիպումն միմեանց, փոխադարձաբար միմեանց ընծայումն կանֆէտներ և բուկետներ և մի լոպէում նոքա բաժանվումն միմեանցից առանց կանգնելու հոսող հեղեղի պէս: Այժմ բանը նորա մէջն է թէ՝ ի՞նչպէս պէտք է ծանօթանալ մինի հետ այն դեղեցիկներից, որով լի են բոլոր պատուհանները և բալկոնները *): Բայց աչքերը կուրանումն այս փայլից, կամ պարտի ունենալ հարիւր աչք: Առաջ սկսումն ձգել միմեանց վերայ ծաղիկներ, բուկէտներ և կոնֆէտներ, որ դարձնեն դէպի իւրեանց ուշադրութիւնը այն անձին, որին կամին տալ ծանօթութիւն իւրեանց յայտնուելու մասին,—դիմակով կամ առանց դիմակի մի և նոյն է: Միայն մի քանիքը՝ առանձին քնքշեցուցած հպարտ դեղեցկուհիք ցոյց են տալիս իւրեանց՝ իբր թէ չեն դարձնում ուշադրութիւն այսպիսի մանր բաների վերայ. յայնժամ սկսվումէ թափուիլ նոցա վերայ անընդհատ թանգ և դեղեցիկ բուկետների բազմութիւն: Փոքր արկղիք լցեալ շաքարով շինած նուշերով, կոնֆէտներով և նոցա նման քաղցրեղէններով թռչում են ցած և բարձր: Փոքր տոմսակներ ընդունվումն բարձր լուսավայլ ուրախութեամբ, և դեռևս չկարողացած ձգել հայեացքը, ահա՛ նոքա լինումն քեզ հետ հաւասարիմ, իբր թէ նոքա ծանօթ էին ձեզ ամբողջ ամիսներով յառաջ: Եւ այս ամենը,—բացի քանի մի շնորհակալութեան խօսքերից (grazia signor! mille grazia!) լինում առանց արտասանելու ոչ մի բառ: Աչքերը

*) Географическіе очерки и картины по Груббе, изд. 1861 г. въ Москвѣ.

և միմոսականութիւնը բոլորովին լրադրծումն պակասութիւն ծաղկանց լեզուի: Հպարտ, անմերձենալի մեծամտութիւն, որով բնաւորվումէ Հռոմայեցի կինը ճնացեալ կեանքումը, կարնավալի ժամանակը մեղմանում ամենահասարակաց ուրախութեամբ և զուարճութեամբ, որոց վարդագոյն ճաճանչը ճառագայթում ամենի երեսի վերայ:

Արդէն բոլոր կօրսօն ներկայացնում անընդունելի ալեկոծութիւն հեղեղի մարդկանց, որոց մէջ ծանրութեամբ ընթանումն կառքերի շարքերը: Ձեռմամբն յետ և առաջ հազարաւոր ուրախ դիմակներ զանազան հանդերձներով: Ցոյնք և Տաճիկք, Մավրիտանցիք և Պարսիկք, կարմիր եղջիւրաւոր սատանայք, դօկտօրներ, ադվօկատներ, շարլատաններ հին ձևի շրերով. այս ամենը վազում և թռչում, պտոյտ է դալիս և դիպչում, կատակելով միմեանց հազար ծաղրածութեամբ: Արդելուած է ամեն դիմակաւորներուն հոգևորական և կարգաւորական հանդերձ հագնել: Իւրեանք հոգևորականները, որպէս քահանայք, նոյնպէս և սբեղայք, աշխատումն չ'երևիլ կօրսօումը կարնաւալի ժամանակը: Իսկ եթէ գոնեա՛ մինը երևի այս խառնակութեան մէջը, յայնժամ նորա վերա կ'թափուի խոշոր կարկուտ confetti, մինչև նա չ'շրջէ ճանապարհը դէպի անկիւնի փողոցը, կամ չ'թագչի որ ևիցէ տանը: Բայց պատուհաններում և բալկոններու վերայ, ընդհակառակը, երևումն անհամար սև շորերաւորները և կղերիկոսները, բացարձակ և ապատ մասնակից են լինում անմեղ ուրախութեան կարնավալի:

Լինելով առաջին անգամ Հռոմումը և չդիտենալով կարգը և սովորութիւն կարնավալի, ես՝ որպէս օտարական և ճանապարհորդ, հարցասիրութեան պատճառաւ տեսանել այս կարգը ուրախութեան, ծանր քայլերով սկսեցի իմ ընթացքը կօրսօումը, դիտելով զարդարած բալկոնները և պատուհանները. բայց առաջ, փոխանակ սատանալու բաւականութիւն, ենթարկուեցայ կարկտի պէս

confetti և բուկետների, որք թափվումէին իմ վերայ ամեն կողմից այնպէս որ՝ ես ստիպուեցայ շուտով թաղչել կօրսօի կըրպակներից մինումը, և այն տեղից փախչել դէպի մի խուլ փողոց և վերադառնալ տուն։ Բայց ի՞նչպէս զի լինի ես իմ հարցասիրութիւնս. նոյնժամայն վարձեցի մի կառք, որոյ գլուխը հրամայեցի ծածկել և վերառնելով իմ հետ կինս, մեք երկոքեանս այս ծածկած կառքով անցանք քանի մի անգամ կօրսօի փողոցը. բայց չնայելով որ կալեասկի գլուխը ծածկած էր և մեր երեսները ծածկել էինք մեծ շալով, բաղմութիւն ժողովրդոյ առաջի կողմից կալասկայի թափումէր մեր վերայ անհամար բուկետներ և confetti.

Երբ որ նշան տուեցին՝ կառքերը թողին կօրսօն, որ բռնեցին այնուհետև միայն հետևակները։ Խումբ հեծելազօրքի, երեքանգամ, զգոյշ ընթացքով ձիերու արշաւեց (չափընկաւ) բոլոր տարածութեան մէջ այս փողոցի, որ ճանապարհ բանայ ձիարշաւի համար (скачка)։ Ապա հնչեցաւ թնդանօթաձգութիւնը. ձայնարկութիւն.— barberi, barberi! հնչուեցաւ փողոցումը, և փոքր առ փոքր զօրացած ձայնարկութիւնը hallo և hussah իմաց տուեց թէ արշաւանքը սկսվումէ ժողովրդական հրապարակից։ Որպէս ճաճանչ փայլատակի թռչումեն հրաշալի զարդարած անասունքը, ծածկած միշուրայով և ամենակերպ փայլողութեամբ. որպէս թէ հնազանդելով առանձին անտեսանելի զօրութեան, ամբոխը դէպի յետ է քաշվում, բայց միայն այն տարածութեամբ, որքան հարկաւոր էր արշաւելու սրընթաց անասնոյ։ Յետոյ յայտնվումեն յետ մնացած ձիաւորները, որոնց վերայ ամբոխը թափումէ երդիծական ձայներ։ Բայց սիրելի ծիծաղական ուրախութիւնը կարնավալի ցուցանումէ այն, երբ շների բաղմութենից, որք դտանվումեն Հռոմի փողոցներում, մինը ներս կ'ընկնի այն տեղ, որ պատրաստած է ձիարշաւանքի համար։ Նոյնժամայն ամենքեան նոքա բոլոր կողմերը կ'պատեն ամուր,

և խեղճ դաղանին, զինի բաղում անյաջող փորձերի ճանապարհ բանալ մարդիկների պատերի միջով աջ ու ձախ կողմերում, մնումէ մի հնարք,— յանձն առնուլ փախչել ամեն զօրութեամբ բոլոր կօրսօի միջով։

Զինի ձիարշաւի, բոլոր կառքերը վերադառնումեն կօրսօ, ուր բոլորը պատրաստվումեն արժանաւոր կերպով կատարելու վերջին գործողութիւնը հանդիսի։ Մարդ չէ կարողանում աչքը շրջել և ահա դիշերային մառախուղը սկսանումէ ցած իջանել շուտով և յանկարծ, որպէս և միշտ վերջանումէ օրը Հարաւում։ Յայնժամ ժողովրդի բաղմութենից սկսվումէ փայլել փայլակը։ Այստեղ, այնտեղ, պատուհաններում և բալկոնների վերայ, սկսումեն փայլել կրակներ։ Նոքա բաղմապատկվումեն փայլատակի արագութեամբ. այս բոպէիս նոքա են հարիւր, իսկ զինի մի բոպէի հազար։ Բոլոր կօրսօն, իւր բոլոր տարածութեամբ փոխվումէ երկայն ալեկոծեալ հեղեղ կրակի, կաթնաշաւիղ (млечный путь) փայլուն ճրագների, որք նման են օդումը լողացող աստեղների։ Հարիւր հազար կրակներ փայլումեն ամեն պատուհաններից և տանիքներից (կտուրներից), օրօրվումեն օդումը երկայն դաւազանների վերայ։ Ներքևը կօրսօում բոլոր կառքերի վերայ ցցուած են մոմեր և մեղրամոմի լապտերներ. բոլոր նստողները նոցա մէջ բռնած ունին մոմեր, պատսպարած հանդչելուց խիտ գործած թուղակուրերով (մավթուլներով)։ Աստղալից երկինքը երևումէ բոլորովին խաւար ներքևը վառված կրակի ծովի առաջ։

Ոանգէռանգ դիմակներ, գեղեցիկ զարդարանք կանանց, փառահեղութիւն դոյների, գեղեցկութիւն, փայլուն և ճոխ զանազան զարդարանք, փայլուն կառքեր, որոց մէջ դուք տեսնումէք երիտասարդ կանայք և աղջկունք, պայծառացեալ ուրախութեամբ և զուարճութեամբ, հագած փառաւոր հանդերձներ,— այս բոլորը շարժուելով յառաջ ու յետ, թռչումեն, ծափա-

հարումեն և վազումեն հազար հազարներով. այս և այն տեղ լսվումեն խկեխկ վակխանական ձայներ,—այս ամենը հազար անգամ բազմապատկվումէ և լենումէ ամենադեղեցիկ արտաքայլումից այս կոհակելից և ալեկոծեալ կրակի ծովումը: Բոլոր գոյները փայլումեն աւելի պարզ, ամենայն առարկայք նկարագրվումեն գեղեցիկ կերպարանքներով յատկապէս, Հռոմէական կարնավալը և մոկկոլի գիշերը նոյն է, ինչ որէ Վատիկանը իւր մարմարիոնեան աշխարհով, լապտերների լուսաւորութեան ժամանակ: Այս տեղ թուլանումէ ամէն ձեռը, որ կ'կամենար նկարագրել նորան:

Պարելի է ասել ճշդիւ, որ այս Մոկկոլի երեկոյի կարճ ժամում, բոլոր Հռոմայեցիք, այլ և բոլոր ներկայ դտանուողները, ոքան նոքա ծանրաբարոյ եղած լինէին իւրեանց կեանքումը,—երեխայանումեն. որովհետև յիրաւի չէ կարելի չբռնուիլ այս ամենահասարակ երեխայական ուրախութենից, որ պարունակվումէ միայն նորա մէջ, որ հանդցնես քո դրացու, բարեկամէ քեզ նա թէ բոլորովին օտար, ծեր կամ ջահիլ, մեծ կամ փոքր, վառած մոկկոլին, որ նա կրումէ իւր ձեռումը կամ գաւազանի վերայ: Եւ ամենեքեան աշխատումեն հասանել իւրեանց նպատակին այնպիսի եռանդով, այնպիսի երեխայական խորամանկութեամբ և գործունէութեամբ, որ յարգելի էին մինչև անգամ ամենաշնոյժ մանուկի աչքում: Կարծես բոլորը, ինչ որ երեխայութեան և մանկութեան յիշատակներից քնած էր, հասակը առնելու պատճառով, յանկարծ, մի առանձին կախարդութեամբ զարթումէ և արձակվում շղթաներից:

Այս է պատերազմ ամենեցուն ընդդէմ ամենեցուն. ամենքը միևնոյն ժամանակ յարձակուող են և պաշտպանուող: Այն տեղ, ուր ոչ մի կուրծք չէ կարող մարել մոկկոլին, խորամանկութիւնը հնարումէ շնչեցուցիչ մեքենաներ ամենայն կերպի: Գլխարկներ և թաշկինակներ գործ են ածվում մարելու համար այս մոկկոլները: Բոլոր կառքերը պաշարման վիճակի մէջ են: Նոցա մէջ նստած կանայքը շրջապատած են զինաւորված մարդիկներով. Նոքա ամենեքեան յարձակումեն այլոց մոմերի վերայ, և միևնոյն ժամանակ պարտին աշխատիլ պաշտպանելու իւրեանց մոկկոլները. թռչումեն կառքի յետնակողմի տախտակի վերայ, անիւների վերայ և կառապանի տեղի վերայ և ուր որ յարձակումը յաջողվումէ, այն տեղ ուրախալի senza moccolo հնչվումէ բոլոր գիշերը: Հռոմայեցիք աղբ և կանայք շարժումեն տարբական աղմկի մէջ, որպէս ձուկը ջրի մէջ, իսկ օտարերկրացիք, յառաջ քան թէ կարողանային զգաստանալ, մնում են առանց մոմերի: Այսպէս վերջանումէ այս աղմկալի կարնավալը Հռոմի:

Բաւական եմ համարում այս համառօտ նկարագրութիւնը Հռոմի. որովհետև եթէ կամէի նորան մի ըստ միոջէ պատմագրել, այնուհետև պիտի յառաջանային ամբողջ հատորներ: Կամիմ ասել մի բան—Հռոմը շատ հարուստ է հնութեամբք և եկեղեցիներով: Թէպէտ Եւրոպայի միւս թագաւորութիւնների մէջ գտանվումեն փառաւոր եկեղեցիք, զոր օրինակ Լօնդօնում սուրբ Պօղոսի եկեղեցին, Վիեննայում սուրբ Ստեփանոսի, Փարիզում սուրբ Մարիամ մագդալենացու և Նոթր դամը, բայց այդ բոլորը տաշած քարից է, իսկ Հռոմի եկեղեցիքը ըստ մեծի մասին գեղեցկայարմար և ճարտարաշէն մարմարիոնից են:

Երբ որ ընտած էինք Հռոմի արժանայիշատակ բաները, մեք պատրաստուեցանք դուրս գալ այս մշանջենաւոր քաղաքից, որ գնայինք Իտալիայի միւս քաղաքները: Հրաժարուելով Եդուարդոս պատուական և բարեմիտ Արքեպիսկոպոսի հետ, ստացանք նորանից յանձնարարութեան թուղթ առ նորա հաբաստ երէց եղբայրը, Արքեպիսկոպոս Գեորգ Հիւրմիւզեանը,

առաջնորդը սուրբ Ղազարոսի վանքի Վենետիկում, միւս օրին, 24 Մարտին դուրս եկանք մեք և հասանք Ֆլորենցիային։

ՖԼՈՐԵՆՑԻԱ.

Այս քաղաքը, մեր դալոյ ժամանակն այն տեղ, էր Թագաւորանիստ Իտալական արքայի և գտանվումէ *) դեղին Արնո գետի երկու եզերների վերայ. ունի 117,000 բնակիչ և ցուցանումէ միանը ամենագեղեցիկ տեսարաններից բոլոր Եվրոպայի մէջ։ Այս տեղ կան 87 եկեղեցիք և 18 հրապարակք։ Մայր եկեղեցու հրապարակումը բարձրանումէ Միրոպոլիտանա կամ գլխաւոր մայր եկեղեցին յանուն սուրբ Մարիամ Դիւրէ Ֆիորէ, որ կառուցած է յԸնթացս 176 տարուոյ և ունի 467 ոտն. երկայնութիւն և 120 ոտն. լայնութիւն (ներսից), իսկ խաչաձև 286 ոտն. լայնութիւն. կարող է ամփոփել իւր մէջ 24,000 մարդ։ Մի առանձին գեղեցկութիւն տալիս է նորան թէթև, քառակուսի կամպանիլան կամ զանգակատունը Ջիոտո, որ յօրինած է բոլորովին խայտաձամուկ (զանազանագոյն) մարմարիոններով և զարդարած է մեծագին և ակնաւոր քանդակներով և արձաններով, և ունի 252 ոտն. բարձրութիւն։ Սուրբ Կրոչէ հոյակապ եկեղեցու մէջ գտանվումեն դամբարանքը Միքել Անջելոյի, Դանտէի, Գալիլէի, Մաքիավելլի և միւսերի։ Սուրբ Լորենցոյ եկեղեցին, որոյ մէջ գտանվումէ կոսմա Մեդիչու գերեզմանը։ Եկեղեցու գլխաւոր մասը կացուցանումէ իշխանական մատուռը, որ բոլորովին պատած է շատ մեծագին մարմարիոնով և Ֆլորենտեան մոզայիկով (որ բաղկանումէ ադաթից, անտիկ կանաչաքարից, յասպիսից, սադափից, լապիս—լազուլոյից)։ Դժուար թէ կարելի էր գտանել մի առաւել փառաւոր բան

*) Ընդհանուր աշխարհագրութիւն օլխինի և ուսսովի, հատոր 2.

քան թէ այս տեղի որձաքարեայ և փորփիւրեայ կամարակապները. չկայ աշխարհումն մի այլ մատուռն աւելի ճոխ ներքին յօրինուածով. այս տեղի պատկերազարդ սրահը է մի հատիկը իւր տեսակի մէջ։ Ռափայելի պատկերներից կան այս տեղ Մադոննա դելլա սեդիա, դել բալդաքինո, սուրբ գերդասանը դել Իմպանատա, այլ և ուրիշ ճարտարապետների գործեր, սուրբ գերդասանը և փրկչի մարմինը, Յովհաննէս, Մարկոս, Քրիստոսի իջուցանելը խաչափայտից, վերափոխումը Մարիամ կուսի, Մադդալենացին, Դաւիթը և Դողիաթը, Կատելինայի երդումը։ Քանդակաւոր գործերի մէջ գտանվումէ Կանովայի Վենուսը և այլ միւսներ։ Ես կարելի փոքր ինչ մանրամասնաբար ճանապարհել վերոյ ասացեալ գործը Ռափայելի, որ պատկերացնումէ սուրբ գերդասանը. նորածին մանուկ Փրկիչը դրած է խանձարուրքի մէջ մերկ. Մարիամ կոյսը նայումէ նորա վերայ գթաշարժ աչքով. նորա քամակում կանգնած սուրբ Յովսէփը վիզը երկայնացրած հիացմամբ նայումէ մանուկի վերայ. հովիւները կէս մի ծունր խոնարհեցուցած, և կէս մի ոտքի վերայ հեռագնեռ իւրեանց ընծայաբերած գառներով նայումեն նորածնի վերայ երկիւղածութեամբ և զարմացքով։ Մանուկի վերայից արձակուած լուսի ճառագայթները լուսաւորումեն մթութեան մէջ այն առարկայքը միայն, որոց վերայ ընկնումէ լոյսը, մթութեան մէջ թողնելով միւս առարկայքը։ Այս բոլորս այնպէս բնական է, որ հայեցողին ձգումէ զարմանքի մէջ։ Այսպիսի պատկեր կայ և Ֆլորենտինի պատկերասենեակի մէջ։ Ֆլորենցիայից եկանք մեք Վենետիկ։

ՎԵՆԵՏԻԿ.

Այրենի Հոնաց տիրապետութեան միջոցին, երբ նորա առաջնորդութեամբ Ատիլայն, որ ասուած է գաւազան Քրիստոսեան

Աստուծոյ, 453 թուականին յետ Քրիստոսի ներս յարձակուեցան Իտալիայի մէջ և աւերեցին նորա պտղաբեր դաշտերը և ծաղկեալ քաղաքները, Ադրիատական ծովի եղերեալ ժողովուրդը փախաւ դէպի մերձակայ կղզիքը և պատսպարուեցաւ այնտեղ մահու կամ թէ անփախչելի սարսու�եանից: Միջին դարերում այս գաղթականք առ փոքր փոքր միաւորուեցան և կազմեցին Վենետիկ քաղաքը: Քաղաքը *) 120,000 բնակիչներով կարգաւորած է երեք մեծամեծ և 114 փոքրիկ կղզիների վերայ, որ բաժանվումեն միմեանցից 147 կանալներով և հաղորդվումեն միմեանց հետ 378 ըստ մեծի մասին քարաշէն կամուրջներով: Բոլոր քաղաքը ունի մօտ 3 վենետիկեան մղոն շրջապատ: Ծովի եղերից մինչև Վենետիկ քաղաքը կառուցած է ամենայն կամուրջը, որ կայ աշխարհիս վերայ. դա բաղկանում 222 կամարներից, 11,087 ոտնաչափ երկայնութեամբ, ուրեմն գրեթէ մի ժամ ճանապարհ, որ և հաստատած են 36 հաստ և 120 բարակ խարիսխների վերայ: Այս կամուրջը կառուցած է անցանելով լաղունների (ծովախորշերի) վերայով դէպի Մեստր, Մալդեր ամրոցի մօտից, և այս կամրջի վերայից երկաթի արշաւասայլը (վագոնը) վազում 8 րոպէի մէջ: Ներս մտնելը Վենետիկի մէջ, հիացուցիչ է. նստած ի մէջ շոգեկառքի, որ ծոի պէս թռչում կամրջի վերայով, դու ոչինչ տեսանում չես քո չորս կողմը բացի երկնքից և ծովից, և այս բոլորս թվում կախարդիչ: Քաղաքը ունի 176 աւազաններ կամ հրապարակական ջրհորներ, բայց ոչ մի պահարան ջրի տներում: Ջրմուղները (կանալները) անընդմիջապէս ողողումեն մեծ մասը տների կամ թէ միայն բաժանվումեն նոցանից ամենամին նեղ փողոցներով (calli) 2250 ծուռ խոտորնակ անցքերով, (պերէուլկեր) որ ասվումեն Ֆուոնդամենտա, այնպէս, որ այս պողոտա-

*) Ընդհանուր աշխարհագրութիւն օլիսինի և ուսովի, հատ. 2

ներով կարելի է ոտքով անցանել Վենեցիայի մի մասը: Հաղորդակցութիւնը պահպանվումէ գոնդոլներով (փոքրիկ նաւակներով): Առաւել մեծակշիռ և գլխաւոր փողոցը կացուցանումէ Կանալը Գրանդէ, որ միշտ լցուցած է գոնդոլներով: Ս. Մարկոյի ամրոցի մօտ. այս կանալի երկու կողմում կառուցած են հին ժամանակի ապարանքներ: Քաղաքի մէջ կան 30 փոքրիկ հրապարակներ, որ ասվումեն կամպի. առաւել մեծագոյնը է հրապարակը Մարկոսի, որ մինն է առաւել արժանայիշատակ հրապարակներից աշխարհիս վերայ. նա բաղկանում 2 մասնից. որոց մինը, առաւել մեծը ունի 542 ոտնաչափ երկայնութիւն, մի ծայրում 219, իսկ միւսում 147 ոտն. երկայնութիւն, և միւս մասնից, որ ուղղահայեաց բաժանվումէ առաջինից և ասվումէ Պիացետտի, որ հասանումէ ծովին. թէ մինը և թէ միւսը յօրինած են տրապիտեան և մարմարիոնեայ տաշած քարերով և շրջապատած են մեծամեծ շինուածներով: Եթէ կամիր դու մտանալ վերջին հրապարակին ջրով, ջրի մօտ հրապարակի վերայ բարձրանումեն երկու որձաքարեայ սիւներ Ջոջջիո կղզու հանդէպ, որոց վերայ կառուցած է բրօնզեղէն թեւաւոր առիւծ, այլաբանական պատկեր քաղաքի պաշտպանին և հովանաւորին, սուրբ Մարկոսի, և սուրբ Թէոդորոսը հեծած կրոկոդիլոսի վերայ, առաջին հովանաւոր պաշտպանը քաղաքի: Այս տեղ է այն գլխաւոր տեղը, ուր բաժանվումեն դէպի զանազան կողմեր գոնդոլիերքը (նաւակապետքը): Մարկոսի հրապարակը կացուցանումէ այս տեղի կեանքի կենդրոնը, մանաւանդ ամառնային երեկոյեան արևամուտից յետոյ, երբ որ այդ հրապարակը փառաւոր կերպով լուսաւորվումէ գազով: Քաղաքի ծախքով ամենայն օր կերակրումեն այդ տեղ ահագին բազմութիւն աղաւնիների. սոքա են սերունդքը սուրհանդակ աղաւնիների, որ տասներեքերորդ դարումը մեծապէս օժանդակ դտնուեցան Կանդիայի առմանը: Կողմնակի շինած հոդաբարձական (պրոկու-

բացիայի տներին կից է մի աշտարակ, ժամացուցի երեսով զրան ճակատումը, որ ունի յաղթական կամարի կերպարանք. երկու բրօնզեղէն մարդիկ մուրճերով (չաքուչներով) զարկումեն ժամացուցի զանգակին։

Բապարակի արևելեան նեղ կողմումը կառուցած է Սուրբ Մարկոսի եկեղեցին, որոյ շինութիւնը սկսած է 976 թուականին բիւզանդական ճարտարապետութեամբ և աւարտած է 1701 ին։ Այս տաճարի սիւնաշարդ սրահի մէջ հաստատած է մի կտոր պորփիր*), իբրև յայտարար նշան այն տեղին, որոյ վերայ Կայսր Ֆրիդրիկոս Բարբարոսան մեղքի թողութիւն է ստացել երրորդ Աղէքսանդր պապից։ Այս եկեղեցիս ունի 235½ ոտն. երկայնութիւն, 190 ոտն. լայնութիւն խաչաձև չափած, 5 գմբէթներով, ներսումը 67 սիւներով պորփիրից և զանազան տեսակ մարմարիոնից և մեծամեծ մոզայիկաշէն պատկերներով, մանաւանդ ճակատումը և նախագաւիթումը. բոլոր հրապարակը կազմումէ 1200 քառակուսի սաժէն։ Գլխաւոր մուտքի վերայ դասնվումեն չորս ձիերը Լիզիպպոսի, ոսկեզօծ բրօնզից, որ մի ժամանակ զարդարած են Ներոնի և Տրայեանոսի յաղթական հանդէսը, որ և Կոստանդիանոսի ձեռամբ բերած են Կոստանդնուպօլիս և այն տեղից փոխադրած են դէպի Վենետիկ ձեռամբ Ջէմ Դօնդոլոյի 1206 թուակ. զինի առման Կոստանդնուպօլի. բոլոր եկեղեցին զարդարած է մոզայիկաշէն պատկերներով, զորօրինակ, մուտքիմօտ, գլխաւոր դրան ճակատում նկարած են սուրբ Մարկոս քահանայական զգեստով. դէպ ի ձախ, թաղումը Աստուածածնի. դէպի աջ, յարութիւնը Ղազարոսի. յետնակողմումը, խաչելութիւնը և թաղումը Քրիստոսի. անկիւններումը, չորս Աւետարանիչքը և ութ մարգարէք։ Այլ մոզայիկաշէն պատկերներ ցուցանումեն անցքեր հին կտակարանից. նոյնպէս զարդա-

*) Ծովու ծիրանի.

բած են մոզայիկական յօրինուածներով եկեղեցու և միւս պատերը։ Հինգ մեծագին բրօնզեղէն դուռներ փակումեն այս առանձին եկեղեցին, որ չունի իւր նմանը։ Ներքին տարածութիւնը ցուցանումէ մի յատակ, որ շատ տեղերում ցած է նստած ալիքանման, ներսումը ուշադրութեան արժանի է իւր դեղեցկութեամբ և փառահեղութեամբ գլխաւոր սեղանը։ Ճարտարապետական դանձերի թիւը այս տեղ շատ մեծ է. այս տեղ պահպանվումէ նոյնպէս մի բնագիր, այժմուս անընթերցանելի աւետարանը սուրբ Մարկոսի։ Կոստանդնուպօլիսից պատերազմական տիրապետութեամբ ստացել է եկեղեցին Ցիսուսի խաչահանութեան միջոցին գործ դրած էլէգը, բէ-է-ռերը, ոպոնգը և այլ նիւթեր։ Ամպհովանին գլխաւոր սեղանի վերայ պահումեն չորս ոլորուն մարմարիոնեայ սիւներ։ Ստորին պահարանի մէջ, 60 սիւների վերայ, սուրբ Մարկոսի եկեղեցուտակ դրած է մի դագաղ սուրբ Մարկոսի մասունքով. այս եկեղեցու մօտ շինած են բաղմաթիւ կողմնակի խորաններ, ուր դասնվումէ երևելի բազմութիւն ճարտարապետական գործերի։

Սուրբ Մարկոսի եկեղեցուն կից է ապարանքը Դօժէրի (պալացօ դուկալէ), որ նոյնպէս միակն է իւր տեսակում, կառուցած 800 տարում։ Մօլոյի (ծովի մէջ շինած ամբարտակ) կողմից ապարանքը ունի 200 ոտն. երկայնութիւն, իսկ արևմտեան կողմից 230 ոտն։ Կարմիր սիւները սրահում նշանակումեն այն տեղը, ուր մի ժամանակ հրատարակվումէին մահու վճիռները։ Ներս մտանելով գլխաւոր մուտքից, դու կ'տեսանես արժանի ուշադրութեան արձաններ—ջրոռնիները, ինքոռնիները, յոյսը, ողորմոռնիները և արդարոռնիները. ապա դուրս կ'գաս այն տեղից, որ տեղից մի փոքրիկ սիւնակարգ տանումէ դէպի սանդուղքը հսկաների, որ ասուած է այսպէս Մարսի և Նեպտունի երկու հսկայաձև արձանների պատճառով։ Սանդուղքի վերայ, այս տեղ եղած դօժը Մարինո Ֆալիերո անուն, գլխատուած է 1335 թուա-

կանին. այս տեղ ևս ուշադրութեան արժանի են Ադամի և Եվայի արձանները։ Դէպի ձախ հսկաների սանդուղքից, համարեա բոլորովին վեր, երևումեն պատուհաններ, որոց քամակում եղել է բանտարկուած երկար ժամանակ Սենեքիս պեքիս*)։ Այս ապարանքի մէջ գտանվում մօտ 104,000 հատորով մատենադարանը 10,000 ղրչագիրներով. արևելեան կողմից, բարձր գնացքով երկրի վերայ, ապարանքից ճանապարհ կայ դէպ ի բանտերը, կամուրջը հառաչանքների, որոց վերայով անցնումէին դատապարտուածքը դէպի բանտարկութիւն։ Այս բանտերի մէջ, սենեակները տանիքի տակ, ասվումեն արձձի օթևաններ, իսկ գետնափոսները, որ ըստ մեծի մասին թաղուած են մի քանի յարկ խորութեամբ, միայն թէ ոչ այնքան խոր, որ կանալների ջրի մակերևութից աւելի ցած ընկնէին, ասվումեն պօցի կամ ջրհորներ։ Այս բանտերը կուլ են տուած շատ մարդերի կեանք եղուխների կրօնական մոլեռանդութեամբ ինկվիզիցիայի օրերում։ Մատենադարանի անկիւնի և սուրբ Մարկոսի եկեղեցու մէջ տեղում բարձրանում հրապարակի մէջ քառակուսի զանգակատուն, կառուցած 911—1591 թուականներում, 325 ոտն. բարձրութեամբ. այդ տեղից ամենալաւ կերպով կարող է նայեցողը ընդգրկել տեսութեամբ քաղաքը և բոլոր կողմը մինչև Ալպեան սարերը։ Ջրի երկայնութեամբ, քաղաքի արևմտեան կողմումը ձգվում մի լայն, քարաշէն ամբարտակ (պլօտինա), որ կորատվում է կանալներով, որոց վերայով ձգուած են ասիմանաւոր կամուջներ։ Այս ընկա դէխկեավիանի (սլաւոնական եղը) միշտ լցուած է խայտաճամուկ ժողովրդական ամբոխներով։ Ջերբատանք կամ հրաշագործ բժիշկներ, քարոզող կապուցինեան

*) Այս կալանաւորի պատմութիւնը շատ սրտաշարժ է և արժանի է կարդալու։

կրօնաւորք, եկեղեցական թափորք, երգեցողք և կաքաւողք և այլն, հաւաքումեն իւրեանց չորս կողմը աղմկալից ամբոխներ։

Վենետիկում կան 99 կաթոլիկական եկեղեցիք, որոց մէջ լինում պաշտօնականատարութիւն, այլ և մի ցունական, մի հայ կաթոլիկեան և մի Լիւթերական եկեղեցի. հրէական ժողովարանոցք 7։ Մօտ մի ժամու հեռաւորութեամբ Մարկոսեան հրապարակից գտանվում սուրբ Ղազարու կղզին, որ ասուած է այսպէս այն պատճառով, որ առաջին օրերում եղած է այս տեղ մի հիւանդանոց բորոտների համար։ Այս կղզին ստացաւ հռչակաւորութիւն այն օրից, երբ որ Մխիթար Սեբաստացին իւր հայրենասիրական խորհուրդը, որ էր վերանորոգել Հայոց մտաւոր և բարոյական կեանքը, և փրկել կորստից հայկական դպրութեան յիշատակարանքը, յառաջ տանելու համար, գինի գտնաղան տեղ դեգերման Ասիայի և Եւրոպայի մէջ, վերջապէս իւր աշակերտներով 1717 թուականին պատսպարան գտաւ Վենետիկում, ուր Վենետիկեան ծերակոյտը կամենալով օժանդակ լինել Մխիթարի ազնիւ խորհուրդներին, ընծայեց նորան Սան-Լազարօ կղզին, ուր և Մխիթարը վենետիկեան իշխանների առատաձեռնութեամբ կարճ միջոցում շինեց և աւարտեց մի նոր եկեղեցի և վանք։ Երկար կ'լիներ այս տեղ մի ըստ միոջէ նկարագրել այս ականաւոր մարդու արդիւնաւորութիւնքը և սուրբ ժրաջան աշակերտների դրաւոր վաստակները, որոց խորհուրդն եղած է մի մասամբ մշակագործել Հայոց լեզուն, բանալ ազգի առաջև նորա լեզուի գանձը, դարերի փլատակների ներքոյ թաղած, իսկ միւս մասամբ, Հայոց դպրութեան յիշատակարանքը հրատարակելով տպագրութեամբ, ծանօթացնել Եւրոպան Հայաստանի պատմութեանը, որպէս և Եւրոպացւոց երևելի գրուածքը հին և նոր ժամանակների, ընտիր Հայերէն թարգմանութեամբք ծանօթացնել Հայոց ազգին։ Սուրբ Ղազարու վանքը ունի մի գեղեցիկ և ընդարձակ տպարան, մի

փոքրիկ, բայց արժանի ուշադրութեան մատենադարան բաղմաթիւ ընտիր հայկական գրչագիր մատեանքով: Սուրբ Ղազարու վանքը ունի 30 կրօնաւորք և մի Արքեպիսկոպոս առաջնորդ վանքի, որոյ վիճակին պատկանումեն Ցաճկաստանի իշխանութեան ներքոյ գտնուած հայ կաթոլիկեան հասարակութիւնքը, և այս պատճառով վանքի շինուածի ճակատում փողփողումէ կիսալուսինը: Այլ և Մխիթարեան Հայ—կաթոլիկ կրօնաւորքը ունին մի ուսումնարան Վենետկում հայոց մանուկների համար, որ ասվումէ Ռափայելեան:

Երբ որ մեք եկած էինք Վենետիկ, միւս օրին գնացինք այցելութիւն յիշեալ ուսումնարանին, ուր գտանք Գէորգ Արքեպիսկոպոս Հիւրմիւզեանը, որ մի օր յառաջ եկած էր այն Սուրբ Ղազարու կղզուց, ուր առաջնորդ է նա: Այս հոգևոր անձը՝ ներհակ իւր եղբօր Եդուարդ Արքեպիսկոպոսին, որ մի ողջունասէր և քաղցր մարդ է, էր մի չոր ու ցամաք, խոժոռադէմ, բարձրահասակ և նիհար մարդ: Նա ընդունեց մեզ ուսումնարանի դահլիճում, և այս տեղ ես մատուցի նորան սրբազան Եդուարդոսի յանձնարարական թուղթը: Ջինի կարճ խօսակցութեան, ես յայտնեցի նորան մեր դիտաւորութիւնը տեսանելու սուրբ Ղազարու կղզին, և նա առաջարկեց ինձ գնալ այնտեղ վաղուեան օրը տասը ժամին առաւօտու, որովհետև այս օրին լինելու էր ձայնաւոր պատարագ: Որոշեալ օրին վարձեցինք մեք մի նաւակաւոր կառք (գոնդոլ) և ուղևորեցանք դէպի կղզին, ուր երկու կրօնաւորք ողջունասիրաբար ընդունեցին մեզ և ներս տարան մեզ վանքի մէջ, ուր գտանվումէր և արքեպիսկոպոսը. շուտով սորանից յետոյ, նոյն իսկ սրբազան հօր առաջնորդութեամբ ցնցեցինք մեք արժանայիշատակ բաները այս վանքի, ուր միւս սակաւագիւտ բաների կարգում, առաջին անգամը տեսանք մեք մի Եգիպտական մումիա, որդի մի քրմի, որ բոլորովին ողջ և անարատ մնացած էր աւելի քան թէ երեք

հազար տարու ընթացքում: Սկսան՝ զարկել զանգակները և մեք Արքեպիսկոպոսի և միւս կրօնաւորների և աշակերտների հետ, որ պատրաստվումեն դէպ ի հոգևոր կոչումը, գնացինք եկեղեցին. պատարագը մատուցանումէր մի նորընծայ կրօնաւոր. երգեցողութեան բոլոր եղանակները, և արարողութիւնքը նոյնպէս էին, որպէս մեզանում, մի քանի զանազանութեամբք, որ կաթոլիկեան արարողութիւնների յարմարագործութիւնք են: Երգեցողութիւնը շատ պատուական էր, մանաւանդ խորհուրդ խորհելը, որ ազդեց իմ վերայ ախորժելի տպաւորութիւն: Ժամ երգութիւնը աւարտուած, մեք վերադարձանք դէպ ի դահլիճը, ուր Արքեպիսկոպոսը հիւրասիրեց մեզ ղահվէով: Երբ որ հրաժարվումէինք Արքեպիսկոպոսից, նա խոստացաւ մեզ միւս օրին ուղարկել մեր մօտ մի կրօնաւոր, որ ցուցանէ մեզ քաղաքի արժանայիշատակ բաները: Դուրս գալով վանքից, մեք պատրաստած գտանք մեր համար վանական նաւակաւոր կառքը, այսինքն մի շէնք, որոյ ներքոյ դրած է նաւակ, իսկ վերևից մի կառքի սենեակ պատուհաններով, և երկու թիավարներով: Երբ որ մեք բաժանուեցանք վանքից, եղանակը թղպային էր և թափուում էին անձրևի մանր շիթեր: Երբ որ բաւական ասպարէզ հեռացած էինք կղզուց, բարձրացաւ հողմ, որ հետ զհետէ սաստկացաւ. մեք տակաւին ճանապարհի կիսումն էինք, և ահա Ադրիատեան կատաղի ծովի ալիքները սկսան վեր ի վայր ցնցել մեր նաւակը, ողողելով մեզ ջրով: Մի վտանգաւոր րոպէ էր. մեք համբուրումէինք մեր անձը կորած, իսկ ուժեղ թիավարքը, որ առիւծների պէս շարժումէին թիակները, հանգստացնումէին մեզ, ասելով թէ վտանգ չկայ. բայց նոցա բոլոր քաջալերութիւնքը բոլորովին ընդունայն էին մեր աչքում: Ես հոգի առայ, կեղծաւորուելով իբրև խաղաղ, որ ահուդող չձգեմ իմ կնոջ սիրտը, բայց հոգիս արմատովին խլվումէր կուրծքիցս, ակնյայտնի տեսանելով անխախջելի կորուստը: Որչափ առաւել մնաե-

նումէինք քաղաքին, նոյնչափ առաւել թվումէր թէ ծովը խո-
բանումէ, նոյնչափ առաւել սաստկանումէր փոթորիկը և մեր
նաւակը գրեթէ ընկղմվումէր դէպի ծովի յատակը և բարձրա-
նումէր դէպի լեռնացած ալիքները։ Թիավարքը բոլորովին կորած
դեսի պէս թափուող քրտնքի մէջ, կարող ձեռներով թիա-
վարումէին ուժգին և աւելի ուժգին։ Այս րոպէիս, ես դար-
ձուցի երեսս դէպի կինս, որ նստած էր իմ քամակում կառքի
պատուհանի մօտ, և նկատեցի, որ նա կարդումէ մի աղօթա-
գիր. ես զարմացմամբ հարցրեցի նորանից, ո՞ր տեղից է նա
գտած այդ գիրքը. նա պատասխանեց, թէ գտած էր դորան
կառքի գրպանի մէջ. (կրօնաւորքը, որպէս տեղեկացայ ես յետոյ,
այդ գիրքը պահումեն նաւակի մէջ, կարդալու համար, կղզուցը
դէպի ծովեղերը ճանապարհորդութեան միջոցին)։ Տեսանելով կինս
այսպիսի կացութեան մէջ և այսպիսի ահաւոր վտանգի մօտ, ես
սկսայ նոյնպէս աղօթել մտքումս։ Վերջապէս զինի երկարատև ջան-
քի և աշխատութեան մեր թիավարների, որ ներդործումէին
զարմանալի աջողակութեամբ, մօտեցանք մեք ծովեղերին. բայց
թիավարքը երկիւղ ունէին իսկոյն դադարեցնել նաւակը նաւերի
հանգստարանում, մի՛ դուցէ, որ նաւակը զարկուէր նաւահան-
գստի պատին, որովհետև մրրիկը առաւել ևս կատաղած էր.
վերջը ինչ այս կողմ ու այն կողմ խաղացնելով նաւակը, նոքա
վերջապէս մօտեցան նաւահանգստին, և միւս նաւավարների
օգնականութեամբ ձգեցին չուանը օղի մէջ և դուրս եկանք
դէպի եղերը, նոյն իսկ Մարկոսեան եկեղեցու հանդէպ։ Այս
տեղից մեք ուղղակի ուղևորեցանք դէպի Ս. Մարկոսի եկեղեցին,
գոհութիւն մատուցանելոյ Աստուծուն վասն մեր փրկութեան
կորստից։ Մեր գնումը քաղաքին հանապազորդուեցաւ 8
օր, յետոյ ուղևորեցանք դէպի Միլան։

ՄԻԼԱՆ.

Միլանը ունի *.) 182,000 բնակիչք, 76 եկեղեցիք, որոց
մէջ մեծ վայելչութեամբ պանծումէ քաղաքի վերայ գոթական
մայր եկեղեցին, որ գտանվումէ գրեթէ նոյն իսկ միջնավայրում,
ընդարձակ հրապարակի մէջ, բոլորովին մարմարիոնից, որ ար-
դէն ստացած է դարիչնի գոյն։ Նորա շինութիւնը սկսած է
1386 թուականին Ջիովանի Վիսկոնտի օրերում, բայց մինչև
այսօր աւարտած չէ բոլորովին։ Գլխաւոր ճակատը, ուր գտան-
վումեն աւելի քան թէ 30 արձանք, ունի բիւզանդեան ձևով
շինած մուտք և գոթական լուսամուտք։ Բոլոր շինուածը ունի
Լատինական խաչի ձև. եկեղեցու ներքին տարածութիւնը ունի
457 ոտնաչափ երկայնութիւն, 172 ոտն. լայնութիւն. շրջա-
փակը ունի 248 ոտն. երկայնութիւն, 146½ ոտն. բարձրու-
թիւն, իսկ մինչև գագաթը 248 ոտն. բարձրութիւն. Գլուխը
ոսկեզօծ մադոննայի, որ կառուցած է գլխաւոր աշտարակի
ծայրի վերայ, գտանվումէ 392½ ոտն. բարձրութեան մէջ։
Միայն եկեղեցիքը սուրբ Պետրոսի Հռոմում, սուրբ Պօղոսի
Լօնդոնում և սուրբ Սահակի Պետերբուրգում, իւրեանց բարձ-
րութեամբ գերազանց են այս գլխաւոր եկեղեցուց, որ ամփո-
փումէ իւր մէջ 37,000 մարդ։ Տանիքի (կտուրի) չորս կողմով
բարձրանումեն 98 գոթական, միջահատ, սրածայր սիւներ.
եկեղեցու հինգ սեղանները բաժանած են միմեանցից չորս շարք
սիւներով, որ բաղկանումեն 52 հսկայաձև ութանկիւնի տա-
շած աւազաքարեայ շէնքերից 90 ոտն. բարձրութեամբ և 8
ոտն. հաստութեամբ. դժուար է գտանել ուր և իցէ մի գործ
տաշուածով, որ լինէր աւելի վայելչապէս շինած քան թէ յո-
բինուածքը այս եկեղեցու մէջ։ Յատակը շինած է խայտաճա-
ռուկ մարմարիոնից, պատերը մարմարիոնից հայելու փայլողու-
թեամբ. լուսամուտքը բաղկանումեն նկարազարդ ապակիներից

*) Ընդհանուր աշխարագրութիւն օլխինի և ռասվի, հատոր 2.

ականաւոր յօրինուածով։ Նկարները ապակիների (շուշերու) վերայ ցուցանումեն գործերը, առած Յիսուսի Քրիստոսի վարքից և հին կտակարանից։ Գմբէթի ներսում կառուցած են 60 արձաններ։ Գլխաւոր սեղանը զետեղած է բրօնզեղէն ոսկեզօծ ամպհովանու տակ. հարաւային սեղանում կանգնած են հասակի բուն չափով սուրբ Կարոլոսի և սուրբ Ամբրոսիոսի և միւսերի արծաթեայ արձանները։ Փառաւոր զանգակատունը բարձրանումէ եկեղեցու վերայ, դէպ ի որոյ ծայրը վեր են տանում 496 աստիճաններ։ Երբ որ մէջ այս զանգակատան վերևումն էինք, մարդիկ երևում էին մեզ իբրև թզուկներ. այսպէս բարձր է այս զանգակատունը։ Զանց առնելով նկարագրութիւնը միւս եկեղեցիների, որ այնքան փառահեղ են բոլոր Իտալիայում, կամենք մի քանի խօսք ասել Սուրբ Մարիամի (դէլլա Գրացիօ) եկեղեցու մասին, որ կից է այն վանքին, որոյ սեղանատան մէջ գտանվումէ Լէօնարդօ դա Վինչիօ երևելի պատկերը ,,խորհրդաւոր ընթրիքը", որոյ վերայ զինի շատ ու շատ նորոգութիւնների, մնացած են անձեռնամուխ, իւրեանց բուն սկզբնական վիճակի մէջ մի քանի գլուխներ, իսկ միւսերը գունաթափ են եղած։ Այս գուդաւորութիւնը նկարների՝ արժանի է ամենայն գովասանութեան։ Ես երկար ժամանակ զննելով այս ճարտարապետական գործը, չկարողացայ յագենալ. դա այնքան նման է բնութեանը, որ ասես թէ տեսանումես քո աչքի առաջև կենդանի մարդիկ սեղանի վերայ բազմած։ Միլանումը կայ մի ամենաճոխ մատենադարան, պատկերների ժողովածոյի դահլիճ և թանգարան, որոց մի ըստ միոջէ նկարագրութիւնը ձանձրացուցիչ կ'լիներ ընթերցողներին։ Այս տեղն երեք թէատրոններից, թէատրոնը Դէլլա Սկալա ունի 5 յարկ, ամէն մինը 36 նստարաններով (լաժէրով) և է մինը ամենամեծ թէատրոններից աշխարհումս, որ ամփոփումէ 3,600 հանդիսականք։ Միլանից ուղևորեցանք մեք դէպի Տուրին։

ՏՈՒՐԻՆ.

Տուրին քաղաքը *) ունի 144,000 բնակիչք, շինուած է 90 գետի վերայ, անչափ գեղեցիկ է, 40 լայն և ուղիղ փողոցներով և 50 նեղ փողոցներով։ Գրեթէ բոլոր փողոցներից կարելի է տեսանել Ալպեան սարերը իբրև մի հսկայաձև պատ։ Այս տեղ գտանվումեն 40 եկեղեցիք և 70 մատուռներ, որոց մէջ գլխաւոր եկեղեցին է Սուրբ Յովհաննու, 1478-ին կառուցած հանդերձ մի ճոխազարդ մատուռով, (ուր կան 30 սև մարմարիոնեայ սիւներ), որոց մէջ պահվումէ արծաթի տապանակում ոսկեայ ջարշամով, որով պատած էր Քրիստոս գերեզմանի մէջ (որ ունի իւր մէջ նոյնպէս Հռոմը, Բէզանսօնը և Կադուէնը). բաց ի միւս հրապարակական և այլ շինուածներից կայ այստեղ գիտութեանց Ակադեմիա, որ ունի մի շատ երևելի դպրոց ճարտարութեանց. մի Եգիպտական թանգարան, որ սկսեալ 1821 թուականից կացուցանումէ մինը ամենամեծերից իւր տեսակում։ Այս Եգիպտական մումիաները դրած են բաց դագաղների մէջ, փաթաթած են սպիտակ կտաւով, երեսները և ձեռները բաց են։ Թէպէտ նոքա աւելի քան թէ 3,000 տարի զմռսած են, սակայն պահպանած են այնպէս լաւ, որպէս թէ մի քանի տարի յառաջ մեռած էին. թէպէտ երեսները և ձեռները չորացած են, բայց գլխի մազերը, թերթերունքները, որպէս և եղունգները մնացած են անեղծ, այլև նոյն իսկ կտաւը, որով պատած են նոքա։ Այս տեղից ուղևորուեցանք մեք դէպ ի Պիզա։

---

*) Ընդհանուր աշխարհագրութիւն Օլիվիի և Ուսովի, հատ. 2

ՊԻԶԱ.

Պիզա քաղաքը *) 41,200 բնակիչներով, 7 վերստ հեռի Միջերկրական ծովից, հաշվում է 1200 տարի սկսեալ իւր հիմնարկութենից։ Միջին դարերում էր նա մի հզօր վաճառաշահ ծովային քաղաք։ Այս տեղ գտանվում է արժանի ուշադրութեան, երևելի մայր եկեղեցի (պրիմա—ցիալէ), որ կառուցած է լատինական խաչի ձևով և աւարտած է տասնեմիերորդ դարում։ Արտաքուստ ունի նա 308 ոտն. երկայնութիւն, 79 ոտն. լայնութիւն։ Դուրսից նա պատած է մարմարիոնով։ Երեք շարք սիւներ, վերևից միաւորուած միմեանց հետ կամարներով, շրջապատումն շինուածքը. ճակատակողմից եկեղեցու ներսը տանում են 5, իսկ կողմերից 3 բրօնզեան դուռներ. 100 դուռնաւոր լուսամուտներ լուսաւորումն հինգ խորաններ, որ ճոխապէս զարդարած են ճարտարութեան ստեղծուածներով։ 24 որձաքարեայ սիւներ, որ բերած են Էլբայի սահմաններից և Ջելիօից, պահումն կամարը միջին սեղանի։ Եկեղեցու ներսում զետեղած են երկու ականաւոր և ահագին երգեհոնք (օրգան)։ Եկեղեցու ճակատի հանդէպ գտանվում է Սուրբ Յովհաննու եկեղեցին, որ ասվում է Բապտիստերիօ կամ մկրտութեան աւազան, որ կառուցած է 1153 թուականում։ Նա բոլորակ է և ծածկած մի գմբէթով 169 ոտն. բարձրութեամբ և ունի 105 ոտն. տրամագիծումը. բոլորովին պատած է սպիտակ մարմարիոնով, հանդերձ կապտագոյն շերտերով, որ փաթաթվումն նորա վերայով. չորս դեղեցկաշէն դուռներ տանումն եկեղեցու ներսը, որ զարդարած է փառահեղ սիւներով և պատուական մարմարիոնեայ յօրինուածներով։ Այս եկեղեցու մէջ, խօսակցութեան ժամանակին յառաջանում է աւողական արձագանք։ Եկե-

*) Ընդհանուր աշխարհագրութիւն Օլմինի և Ուսովի, հատ. 2.

դեցու հանդիպակայ կողմում բարձրանում է 168½ ոտն. բարձրութեամբ ցիլինդրական հակուած (ծռած) զանգակատունը, որ կառուցած է եկեղեցուց առանձին, ունի 48 ոտն. տրամագիծումը և շինած է 1174 թուականին դեղեցիկ սպիտակ մարմարիոնից։ Աշտարակը բաղկանում է 7 յարկից, որ կապակցած են միմեանց հետ կամարներով, այնպէս որ բոլոր աշտարակի մէջ գտանվում է 207 մարմարիոնեայ սիւներ։ Յարմարաւոր մարմարիոնեայ սանդուղք 293 աստիճաններով տանումն դէպի վերը. այլև 37 աստիճաններով կայ մի վերելք դէպի ամենավերը. այլև 37 աստիճաններով կայ մի վերելք դէպի ամենավերը յարկը, ուր կախած են 7 դեղեցիկ զանգակներ։ Աշտարակը 15 ոտն. տարածութեամբ թեքուած է դուրսից, որպէս թէ նա կամէր վայր ընկնել։ Հիւսիսում, երեք շինուածների մօտակայքում, գտանվում է 1278 թուականից կառուցած Ջիովանի Պիզանի կամպո—սանտո, այսինքն, սուրբ դաշտ կամ գերեզմանատուն։ Նորա հարաւային ճակատը, ուր գտանվում է գլխաւոր մուտքը, մարմարիոնեայ է, 44 որմակից սիւներով, որ միաւորվումն կամարներով։ Իւր ամբողջութեան մէջ, այս շինուածը ցուցանում է մի պարալելօգրամ, ներսում շրջապատած կամարներով և բաժանած երեք գաւիթ, որոց հողը Արքեպիսկոպոս Ուբերտոյ դեն Լանֆրանկի դուռը է փորած Երուսաղէմի շրջակայքում և 50 նաւերի վերայ բերած է դէպի Պիզա։ Մի ժամանակ էր դա հասարակայ գերեզմանատուն, իսկ կամարակազ դնացքները նշանակվում էին երևելի Պիզացոց գերեզմանների համար։ Գերեզմանատան շրջապատը ունի 1040 ոտն. երկայնութիւն։ Պատերի վերայ գտանվումն Ֆրէսկօ ասած պատկերներ, որ շատ մեծագին են կենդանագիր ճարտարութեան պատմութեան համար։ Այս պատկերների զննութեան միջոցին, պատահեցաւ ինձ մի արժանի դիտութեան դիպուած։ Երբ որ ես զննումի պատի վերայ քարշած պատկերը ահեղ դատաստանի, մեր առաջնորդ Զիչէրոնէն, պիզացի կաթոլիկ, դարձուց

իմ ուշադրութիւնը դժոխքում եղած մեղաւորների վերայ, որոց վերայ փաթաթուածէին օձեր, որ և տանջվում էին կրակի մէջ. դոցա կարդում դուրս էր ձգվում մի մարդու գլուխ, արժանի ուշադրութեան կերպարանքով. Պիղացին հարցրեց ինձանից, արդեօք ճանաչում եմ ես այս տանջուող մեղաւորը. ինքնին հասկանալի է, որ իմ պատասխանս եղաւ բացասական. նա երկրորդեց. լաւ նայեցէք նորա վերայ. դա է Նապոլէոնը առաջինն. և արդարև պատկերը բոլորովին նման էր նորան, որովհետև ինձ պատահած էր տեսանել Եւրոպայում նորա կենդանագիր պատկերը հարիւրաւոր օրինակներով, մանաւանդ Մադամ Տուսսոն անուն շինուածի մէջ Լոնդոնում, ուր միւսերի կարգում դասնվում է ամենապաւ մոմաշէն արձանը Նապոլէոնի: Երբ որ ես հարցրեցի, թէ ինչպէս Նապոլէոնը կարող էր ընկնել դժոխքի մէջ հինգ կամ վեց հարիւր տարի յառաջ քան թէ իւր ծնունդը, նորա աղջական պատասխանը եղաւ այսպէս. Նախախնամութիւնը գիտէր, որ նա մի քանի դար յետոյ պիտի ծնանէր և լինէր թշնամի կաթոլիկութեան և այս պատճառով՝ նա կանխագոյն դատապարտուեցաւ տանջուելու դժոխքի մէջ: Այնուհետև մնաց ինձ մի բան. շարժել գլուխս և անցանել դէպի վերնութիւն միւս պատկերների: Ես բաւականանում եմ այս համառօտ նկարագրութեամբս Պիզա քաղաքի, ուր կան շատ ու շատ արժանայիշատակ բաներ. բայց դոցա նկարագրութեան համար հարկաւոր կը լինէր շատ տեղ այս իմ փոքրիկ աշխատութեան մէջ: Պիզայից ուղևորուեցանք մեք դէպի Լիվորնո քաղաքը Տոսկանայի մէջ:

ԼԻՎՕՐՆՕ.

Այս քաղաքս *) 91,500 բնակիչներով, որոց մէջ 5000 Հրէայք, է մինը առաւել մեծակշիռ նաւահանգիստներից Միջերկրական ծովի: Այդտեղ փողոցներում կառուցած են արձանները Լեօպոլդի երկրորդի և Ֆերդինանդի առաջինի: Փողոցները բաւական կարգ ու լայն են. բացի մայր եկեղեցուց և 14 միւսներից, այստեղ դտանվումեն այլևս երկու Յունական, մի Հոլանդական, մի Գերմանական—Պրոտէստանտական, մի Հայ—Կաթոլիկեան, մի Մարոնիտեան—Արաբական եկեղեցի, մի մզկիթ և մի Հրէական ժողովրդանոց, որ զկնի Ամստերդամեանին է մինը ամենագեղեցիկներից Եւրոպայի մէջ, և ունի իւր մէջ 80 ջահեր: Լիվորնոյի մէջ երևելի է մի լուսատու աշտարակ, որոյ կրակը փայլում է 145 ոտնաչափ ծովի մակերևութի վերայ: Լուտերական դերեզմանատում դտանվումեն շատ մարմարիոնեայ յիշատակարաններ: Բնակիչներից շատերը ապրում են բուստի (մարջանի) որսով Ամերիկայի և Սարդինիայի ծովափերում: Այս տեղից մեք ուղևորուեցանք դէպի Գենուա:

ԳԵՆՈՒԱ.

Ջենովայ **), կամ Գենուա, մականուանուած Լա ռոֆէրէա փառահեղը, 100,000 բնակիչներով, շինուած է Միջերկրական ծովափում, ունի մի շատ գեղեցիկ դիրք: Նա յայտնի էր արդէն Հռոմայեցոց. աւերուեցաւ Բելիսարիոսի ձեռամբ, Սա-

**) Ընդհանուր աշխարհագրութիւն Օլիսի Նի և Ռասվի, հատ. 2.

բակլինոսներից և Լոնդոբարդներից։ Սկսեալ տասնեմիերորդ դարուց վայելում էր կատարեալ ազատութիւն Դոժէրի իշխանութեան ներքոյ, իսկ այժմ էլ գլխաւոր քաղաքը Տուրինից յետոյ։ Այս քաղաքումն կան այնքան շատ մարմարիոնեայ շինուածք, որ նորան ասումն Մարմարինեայ քաղաք, որ է տեղի Ծննդեան Բրնոսոփոր Կոլոմբոսի։ այս տեղ գտանվումն շատ հրապարակական և մասնաւոր ճոխ և փառահեղ շինուածներ, 32 ականաւոր եկեղեցիք և 69 մենաստանք. թէատրոնը կարէր քինիէնէ է մին առաւել մեծերից Իտալիայում։ Գեղեցիկ է գոթական մայր եկեղեցին Ս. Լորէնցոյի, որ նորոգել է Ալէքսին և դուրսից ու ներսից հագցրած է սև և սպիտակ մարմարիոնի քարերով։ Այս տեղ պահվումէ Սուրբ—Գոպէնոս կամ սուրբ տապանակը, որոյ մէջ Յովսէփ Արիմաթացին ժողոված է Քրիստոսի արիւնը, որ և խաչակիր զինուորքը 1101 թուականին բերած են Կեսարիայից։ Հաստատումն, թէ այս անօթը շինած է ամբողջ Սոլոմոնէս, բայց ըստ երևութին, ոչ այլ ինչ է դա, եթէ ոչ մի հասարակ ներկած ապակի։ Ս. Անդրէոսի եկեղեցին է ամենահոյակապը և ամենամեծը, զարդարած վարդագոյն մարմարիոնով. Ս. Ամբրոջոյի եկեղեցին է մի ահագին և փառաւոր շինուած. Ս. Սիրոյի եկեղեցին, կառուցած 985 թուականին, բաղկանումէ մի ամբողջ մարմարիոն քարից և այլն։

Բացի վերևում նկարագրած քաղաքներից Իտալիայի, մեք եղանք և միւս քաղաքներում, զոր օրինակ. Զիվիտա—Վէքիա, Բոլոնեա, Ֆէրարա, Պադուա և միւս քաղաքներում, բայց դոցա մէջ մեր նկարագրութեան համար կար շատ փոքր արժանի ուշադրութեան նիւթեր. վասն որոյ և ես զանց եմ առնում դրանց։ Վերջացնելով նկարագրութիւնը իմ ճանապարհորդութեան Իտալիայի մէջ, ես պարտականութիւն եմ համարում ծանօթացանել թէ նկարագրութիւնը Վենետիայի սարի, Պոմպէյի և Հերքուլանումի, որպէս և Հռոմի, Վենետիկի և

միւս Իտալական քաղաքների, որ այնքան արժանի են հարցասիրութեան իւրեանց պատմական յիշատակներով, պատճառուեց ինձ տպագրութեամբ հրատարակել յօդուտ իմ հայրենակիցներին այս փոքրիկ աշխատութիւնը, միտ դնելով այն բանին որ, ինչքան յայտնի է ինձ, մի այդպիսի նկարագրութիւն չկայ տակաւին Հայոց լեզուով, ուրեմն և նա կը դրաւէր իւրաքանչիւր Հայ մարդու ուշադրութիւնը։ Թէպէտ այս նկարագրութիւնը համառօտ է, այնու ամենայնիւ նա տալիս է փոքր ի շատէ տեղեկութիւն այն աշխարհի հնութիւնների, սակաւագիւտ բաների և դեղեցկութեան մասին, որ այնքան շատ փառաւորած է պատմաբանների և ճանապարհորդների բերանով։

ՎԵՐՋ։

Սխալ	Ուղիղ	Երես
սարրերի — — —	սարերի — — — —	4
սր — — —	որ — — — —	6.
Նոչէրա — — —	Նոչէրրա — — — —	7.
կղմիտրով — — —	կղմինտրով — — —	23.
Իզիդան — — —	Իզիդուն — — — —	42.
Թէզինա — — —	Ըէզինա — — — —	45,
տնզուդական — —	անզուդական — — —	47.
բոլորոկ — — —	բոլորակ — — — —	48.
Եանուարիոսի — —	Եանուարոսի — — —	49.
հողորդակցութիւն —	հաղորդակցութիւն — —	55.
ճեմիլեքով — — —	ճեմելիքով — — — —	62.
ցայթումէ — — —	ցայտումէ — — — —	—
արձաթերում — —	արձաններում — — —	79.
լայնութիւն — —	երկայնութիւն — — —	82.
սակաւ առ սարաւ —	ոակաւ առ սակաւ — —	99.
կառքերում — —	կառքերում— — — —	—
Աղրիատկան — —	Աղրիատական — — —	108.
որոց — — —	որոյ — — — — —	119.
հանդիպակայ — —	հանդիպակայ — — —	121.

«Ազգային գրադարան»
NL0240374